

21. 351

L. Uliq-uz.

Римский университет.

Исторический факультет.

1934 г.

33

U-33

JAN 2010
15 FEB 2001

Լ. ՍԵԳԱԼ

ՔԱՂԱՔԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՌՈՏ ԴԱՍԸՆԹԱՅՔ

ՅԵՐԿՐՈՐԴ ՊՐԱԿ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
БОСКОРІДЖІ
Академия Наук
СССР

ԿՈՒՍՇՐԱՏ

ՅԵՐԵՎԱՆ

1 9 3 4

33
U-33

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

1. ՀՈՂԻ ՄԱՍՆԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՎՈՐՊԵՍ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆ ԸՐԳԵԼԱԿՈՂ ԳՈՐԾՈՆ ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻ ԺԱՄԱՆԱԿ

Կապիտալիզմը, մի կողմից զարգացնում է հասարակության արտադրողական ուժերը, իսկ մյուս կողմից—արգելակում է նրանց զարգացումը: Մենք այդ արգեն տեսանք շահույթի միջին նորմայի անկման որեւէ քննելիս և այդ ել ավելի մանրամասն ցույց կտանք հաջորդ գլուխներում: Սակայն կապիտալիզմի ժամանակ առանձնապես արգելակվում է գյուղատնտեսության արտադրողական ուժերի զարգացումը: Գյուղատնտեսության հետամնացությունն արդյունաբերությունից, աճող հակադրությունը քաղաքի և գյուղի միջև միանգամայն անխուսափելի յեն կապիտալիզմի ժամանակ: Դրա հիմնական պատճառը—հողի մասնավոր սեփականությունն է:

Հողի մասնավոր սեփականությունն այն պատճառն է, վորը կապիտալիստը-վարձակալողին խանգարում է ավելի կապիտալ ներդնելու գյուղատնտեսության մեջ (պայքար վարձակալման պայմանագրի ժամկետի համար): Հողի մասնավոր սեփականությունը բացարձակ ոենտա յե ծնում, թույլ չտալով, վոր գյուղատնտեսության մեջ ստեղծված հավելյալ արժեքը մասնակցություն ունենա շահույթի միջին նորմայի գոյացմանը. դրանով իսկ նա իջեցնում է շահույթի միջին նորման, դանդաղեցնում է կապիտալի կուտակումը, բարձրացնում է արդյունաբերության համար անհրաժեշտ գյուղատնտեսական հումքի և բանվոր դասակարգի գոյության միջոցների գները:

Հողի մասնավոր սեփականությունը հողի գնման և վաճառման ժամանակ, հսկայական կապիտալներ է հեռացնում արտադրողական գործադրումից: Հողը վորպես այդպիսին վոչ մի արժեք չունի, վորովհետև նա



57006-66

Л. СЕГАЛЬ
КРАТКИЙ КУРС
ПОЛИТЭКОНОМИИ

Партиздат 1934Эривань

աշխատանքի արդյունք չի: Այնուամենայնիվ նա կապիտալիստական հասարակարգում ապրանք է: Արժեք չունենալով, հողն, այնուամենայնիվ, գին ունի, վորոչ հողամասը գնվում ու վաճառվում է վորոչ գումարի փոփոխ: Բոլոր ապրանքների գին հիմքում դրված է նրանց արժեքը: Ի՞նչով է վորոչվում հողի գինը, վորն արժեք չունի:

Յեթե հողամասը տարեկան 100 ու. ունտա յե բերում, ապա այդ հողամասի տերն այն վաճառելիս պետք է ստանա այնպիսի գումարի փող, վորը բանկում դրվելով տարեկան 100 ու. հասույթ բերի նրան: Յեթե բանկն ավանդների համար տարեկան 5% է տալիս, ապա հողամասի տերն այն պետք է վաճառի 2 հազ. ուղբլով, վորովհետև 2.000 ու. 5 տոկոսով տարեկան 100 ու. է բերում: Հողի գինն այս դեպքում 2,000 ու. է: Հողի գինը կապիտալացված ունեցա յե, այսինքն վորոչ մեծուրյան վարկային կապիտալի հասույթի փոխարկված ունեցա: Հողի վաճառման ժամանակ նրա տերը գնողին է զիջում հողի մասնավոր սեփականության մոնոպոլիտի իրավունքը, հետևաբար նաև ունտա ստանալու իրավունքը և դրա համար վոնց վոր միանվագ հարկ է ստանում, վորը նրան հնարավորություն է տալիս հետագայում ևս ստանալու իր անաշխատ յեկամուտը, բայց արդեն տոկոսի ձևով:

Յեթե կապիտալիստը հող է գնում, ապա նրա վճարած գումարի փողը կապիտալի արտադրողական գործադրում չի: Նա կարող էր արտադրություն վարել վարձակալած հողի վրա ճիշտ այնպես ինչպես գնած հողի վրա: Յեթե նա փողային կապիտալ չձախսեր հողի գնման վրա, նա կարող կլիներ ավելի շատ արտադրամիջոցներ և աշխատույթ գնել, կարող կլիներ բարելավել հողի մշակման յեղանակները և այլն:

Դրա համար էլ «փողային կապիտալի ծախսումը հողի գնման վրա հողագործական կապիտալի գործադրումն չի... Նա համապատասխանորեն պակասեցնում է արտադրության միջոցների չափերը և դրա համար էլ սեղմում է վերարտադրության անտեսական հիմքը... Նա արգելակ է հողագործության համար նույնիսկ այն դեպքում, յերբ խոշոր հողաբաժիններ են գնվում: Նա բոս էյուրյան հակասում է արտադրության կապիտալիստական յեղանակին» (Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 584 ուղև. ընդգծումն իմն է.—I. Ս.):

Կապիտալիզմի զարգացման հետ հողի գները վոչ թե բնկնում, այլ անում են: Հողի գների աճն յերկու պատճառներից է առաջանում: Առաջին պատճառը—ունտայի աճն է: Վորովհետև կապիտալիզմի զարգացմամբ աճում է հողի պահանջարկը և հողը չի

կարող վերստին արտադրվել, ապա աճում է ունտան: Բայց ունտայի աճը նշանակում է հողի գների աճը: Այսպես, թե վերև բերված որինակում ունտան լինի վոչ թե 100 ու. այլ 200 ու., ապա տարեկան 5% ուղ 200 ու. հասույթ ստանալու համար հարկավոր է 4 հազար ու. կապիտալ:

Հողի գների բարձրացման յերկրորդ պատճառը—դա տոկոսի մակարդակի անկումն է: Տոկոսի մակարդակը շահույթի միջին նորմայից ցած է: Դրա համար էլ շահույթի միջին նորմայի անկման հետ ընկնում է նաև տոկոսի մակարդակը: Ռենտայի 100 ու. և տոկոսի մակարդակի 5% լինելու ժամանակ հողի գինը կլինի 2000 ու.: Ռենտայի 100 ու. և տոկոսի մակարդակի 4% լինելու ժամանակ հողի գինը կլինի 2,500 ու.: Իսկ ունտայի 200 ու. և տոկոսի մակարդակի 4% լինելու ժամանակ հողի գինը կլինի 5,000 ու.: Ռենտայի աճն ու տոկոսի մակարդակի անկումը միաժամանակ կատարվելիս արագացնում են հողի գների աճը:

Հողի մասնավոր սեփականությունը, հետևաբար միշտ ավելի ու ավելի կապիտալ է հեռացնում արտադրողական գործադրումից: Վորքան ավելի յե զարգանում կապիտալիզմը, հողի մասնավոր սեփականությունն այնքան ավելի յե արգելք դառնում արտադրողական ուժերի զարգացմանը գյուղատնտեսության մեջ:

Կապիտալիզմի գոյությունն ու զարգացումը (ըստ վորում շատ ավելի արագ յիս սեփականությունից զարգացումը) հնարավոր է նաև հողի մասնավոր սեփականության բացակայության դեպքում: Դրա ապացույց կարող է ծառայել այն փաստը, վոր կապիտալիզմի զարգացման գույրնբայց գյուղատնտեսական արտադրությունն էլ ավելի յե անջատվում հողի մասնավոր սեփականությունից: Այդ անջատումն արտահայտվում է յերկու ձևով.—վարձակալման և հիպոտեկային (յերկարատև) պարտաբեռնվածության աճով:

Հողի վարձակալման ժամանակ կապիտալիստն արտադրությունը վարում է իրեն չպակասած հողի վրա: Բոլոր յերկերնեբում մինք նկատում ենք գյուղատնտեսական արտադրության աճը վարձակալված հողի վրա: Այսպես, մեծն Բրիտանիայում—կապիտալիստական գյուղատնտեսության ամենից ավելի հին զարգացում ունեցող յերկրում—1887 թ. գյուղատնտեսական տարածության միայն 15,3% էր մշակվում իրենց հողային սեփականատերերի կողմից, իսկ 84,7%—վարձակալների կողմից: 1813 թ. հողային տարածության 89,1% արդեն մշակում էյին վարձակալները: ՀԱՄՆ-ում—կապիտալիզմի համեմատաբար յերկ-

սասարդ յերկրում—1880 թ. վարձակալված հողը վողջ գյուղատնտեսական տարածութեան 25,6%֊ն եր կազմում, իսկ 1925 թ.—արդեն 47,4%֊: Վարձակալման այդ անը վոյ այլ ինչ է, յերե վոյ գյուղատնտեսական արտադրութեան անող անջատումը հողային սեփականութեանը: զա նշանակում է, վոր կապիտալիզմն ավելի ու ավելի կարող է յոյա գնալ առանց հողի մասնավոր սեփականութեան գոյութեան:

Հողային սեփականութեանից հողի վորպես արտադրութեան միջոցի անջատման մյուս ձևը—հիպոտեկային պարտաբեռնվածութեան ան է: Հողի գնման ժամանակ սովորաբար գնողը բանկից յերկարատե վարկ է ստանում՝ գնվող հողի գրավադրումով: Հողի նոր տերն ինքն է ստանում սեփական և այդ սեփականից նա բանկին տոկոսներ է վճարում վարկ վերցրած փողի համար: Այսպիսով, գրավի ժամանակ բանկին վճարված տոկոսը վոյ այլ ինչ է, յեթե վոյ սեփական: Հողը գրավ է դրվում վոյ միայն այն գնելու դեպքերում: Հողն առհասարակ գրավ է դրվում այն ժամանակ, յերբ հողային սեփականատերը փողի կարիք է զգում:

Հողային բանկերին (հիպոտեկային վարկերի բանկերին) շատ շահավետ են այդ ոպերացիաները վոյ միայն նրա համար, վոր նրանք տոկոսի ձևով սեփականութեան, այլ և նրա համար, վոր պարտապանների անվճարունակութեան ժամանակ հողը դառնում է բանկի սեփականութեանը: Յեվ վորովհետև հողի գինն աճում է, ապա հողի վերավաճառումից բանկերը վիթխարի ոգուտներ են ստանում:

Բանկում գրավսրված հողերը ձևականորեն իրենց պատճենական սիրոջ սեփականութեանն են, բայց փաստորեն նրանք բանկի սեփականութեանն են: Չէ վոր տնտեսական տեսակետից հողի սեփականութեանը սեփականութեան իրավունքն է, իսկ գրավ դրված հողի սեփական նրա տերը հարկադրված է տոկոսի ձևով տալու բանկին: «Հողի գրավ գնելը նշանակում է գրավ դնել կամ վաճառել հողային սեփական: Հետևաբար, թե հիպոտեկային սիստեմի ժամանակ, ինչպես և վարձակալման սիստեմի ժամանակ, սեփական ստացողները (=հողատերերը) անջատվում են ծեղանակատիրական շահութի ստացողներից (=գյուղատնտեսութեան վարողներից (сельских хозяев), գյուղատնտեսութեան ձեռնարկատերերից)» (Լեմին, հ. II, էջ 437, ռուս.):

«Արտադրութեան կապիտալիստական յեղանակի ամենամեծ արդյունքներից մեկն այն է, վոր նա... հեղը վորպես աշխատանքի պայման միանգամայն անջատում է հողային սեփականութեանից և հո-

ղային սեփականատերից, վորի համար հողը վոյ այլ ինչ է, բացի փողային վորոհ հարկից, վորը նա իր մոնոպոլիայի շնորհիվ գանձում է արդյունաբերական կապիտալիստից, ֆեոդալից» (Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 443—444. ռուս. ընդդումն իմն է.—Լ. Ս.):

Հողատերերը¹ շահագործողներ են: Սակայն Կապիտալիզմը յեվ հողի ու գյուղատնտեսության շահագործողների դասակարգի ներսում նրանք կազմում են առանձնահատուկ խմբակ, վորն հակադիր է բուրժուազիայի մնացած բոլոր խմբերին: Հողատերերի դասակարգը բուրժուազիա է բառի սեփական իմաստով, վորովհետև, առաջին, հողային մասնավոր սեփականութեանը կապիտալիզմի գոյութեան անհրաժեշտ պայման է, յերկրորդ, խոշոր հողատնտեսատերերի դասակարգը ֆեոդալիզմի մնացորդն է բուրժուազիայի ներսում:

«Քանի արտադրութեան կապիտալիստական յեղանակ գոյութեանն ունի, ապա կապիտալիստն արտադրութեան վոյ միայն անհրաժեշտ, այլև տիրապետող ֆունկցիոններն² է: Քնդհակառակն, արտադրութեան այդ յեղանակում հողային սեփականատերը միանգամայն ավելորդ է: Արտադրութեան այդ յեղանակի համար անհրաժեշտ է միայն, վոր հողն ընդհանուր սեփականութեանն չլինի, վոր նա հակադրվի բանվոր դասակարգին վորպես նրան չպատկանող արտադրամիջոց, իսկ այդ նպատակը ձեռք կարող է բերվել, յեթե հողը պետական սեփականութեանն լինի, յերբ, հետևաբար, հողային սեփական պետութեանն է ստանում: Հողային սեփականատերը, վորն արտադրութեան այնքան կարևոր ֆունկցիոններ էր հին աշխարհում և միջին դարերում, միանգամայն անոգուտ պալար է արդյունաբերութեան դարում» (Մարքս, Հավելյալ արժեքի թեորիան, հ. II, մ. I, էջ 142, ռուս.):

Հողը բուրժուական պետութեան ձեռքն անցնելու ժամանակ, այսինքն, հողի բուրժուական ազգայնացման (նացիոնալիզացիայի) ժամանակ հնարավոր կլինի վոյնչացնել բացարձակ սեփական, վորը կապիտալիզմի ժամանակ հողի մասնավոր սեփականութեան հետեվանքն է: Դիֆերենցիալ սեփական կլինար այդ դեպքում, սակայն դա պետութեանը կստանար, այսինքն բուրժուազիան ամբողջութեամբ վերցրած: Բայց, չնայած այն բանին, վոր հողի ազգայնացումը բուրժուական պետութեան կողմից՝ կարագացնել

¹ Ոոսքը վերաբերում է խոշոր հողատերերին: Մանր գյուղացիական սեփականութեան մասին մենք կխոսենք այս գլխի 2 և 3 պարագրաֆներում:

² Ֆունկցիոններ.—վորոչ գեր կատարող:

կապիտալիզմի զարգացումը, բուրժուազիան գործնականորեն դրան ձեռնամուխ չի կարող լինել յերկու պատճառներով:

Առաջին, հողի մասնավոր սեփականության վերացումը կապիտալիզմի ժամանակ մասնավոր սեփականության փայտյունն կլինեք առհասարակ: «Գործնականում, սակայն, պակասում է համարձակութունը (հողի ազգայնացման.— Լ. Ս.), վորովհետև սեփականութան մի ձևի—աշխատանքի պայմանի մասնավոր սեփականութան մի ձևի վրա արված հարձակումը շատ վտանգավոր կլինեք մյուս ձևի համար» (Մարքս, Հավելյալ արժեքի թեորիան, հ. II, մ. I. էջ 142, ռուս.): Հողային սեփականութան հասցված հարվածը կհեշտացներ առհասարակ սեփականության հասցվելիք հետագա անխուսափելի հարվածները» (Լենին.— հ. VII, էջ 223, ռուս.):

Յերկրորդ, ինքն բուրժուազիան կապիտալիզմի զարգացման դուգրնքաց, այսպես ասած, միտ ավելի ու ավելի յե սերանել հողային սեփականության հետ. «բուրժուան ինքն է հող ձեռք բերել» (Մարքս, Հավելյալ արժեքի թեորիան, հ. II, մ. I. էջ 142, ռուս.): Բուրժուազիան միշտ ավելի ու ավելի յե հող գնում, իսկ հողը միշտ ավելի ու ավելի յե խճճվում հրպոտեկային պարտաբեռնվածութամբ, այսինքն կապիտալիստական բանկերի մասնավոր սեփականութունն է դառնում:

Բուրժուազիայի և մասնավոր սեփականության վերացման համար առհասարակ պայտարող պրոլետարիատի հակաուրյան սրման դեմ-հանդիման բուրժուազիայի և խոտ հողատերերի տահեր միտ էլ ավելի յեն հյուսվում ու մերձենում: Բուրժուազիան ամրապընդում է կապիտալիզմի զարգացումն արգելակող հողի մասնավոր սեփականութունը: Կապիտալիզմն այստեղ էլ հանդես է դալիս վորպես հասարակական արտադրողական ուժերի աճին խանգարող գործոն:

Զարգացած կապիտալիզմի դարաշրջանում հողի մասնավոր սեփականութունը կարող է վոչնչացնել միայն այն դասակարգը, վորը պայքարում է ընդհանրապես մասնավոր սեփականութան վոչնչացման համար—հեղափոխական պրոլետարիատը: Սակայն հողի պրոլետարիան ազգայնացումը նաեապահ է բաց անում վոչ բե կապիտալիզմի ազատ զարգացման համար, այլ ընդհակառակն, դա կապիտալիզմի լիկվիդացիայի սկիզբն է և սոցիալիստական տերությունն ու հասարակական արտադրողական ուժերի առագ զարգացման ամենակարևոր հիմունքներից մեկն է ներկայացնում:

Հողի ազգայնացումը ԽՍՀՄ-ում մի հարվածով վոչնչացրեց հողի մասնավոր սեփականութունը և հողային սեփական: Դա ԽՍՀՄ

գյուղատնտեսութան արագ զարգացման կարևորագույն պատճառներից մեկն է, խոշոր հողագործութան սոցիալիստական ձևերի արագ աճի կարևորագույն պայմաններից մեկը:

2. ԽՈՇՈՐ ՅԵՎ ՄԱՆՐ ԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Կապիտալիզմի զարգացման հիմնական որենքներն իրենց ուժը լիովին և ամբողջութամբ պահպանում են նաև գյուղատնտեսութան մեջ. ինչպես արտադրութան, այնպես էլ գյուղատնտեսութան մեջ աճում է արտադրութան համակենտրոնացումը, մանր արտադրութունն արտամղվում է խոշորի կողմից, քայքայվում են ինքնուրույն մանր արտադրողները:

Յեվ անցիալ դարի վերջում սոցիալ-դեմոկրատիայի շարքերում սպորտուենիզմը հանդես յեկավ կապիտալի կենտրոնացման մարքսյան թեորիայի ռեվոլյուցիոն, նա առկոչում էր մանր գյուղացիական տնտեսութան կենդանութան իբրթե նկատվող փաստը և պնդում էր, վոր գյուղատնտեսութան հենց բնական պայմանները սահման են դնում խոշոր արտադրութան զարգացմանը, և վոր դրա պատճառով գյուղատնտեսութան մեջ խոշոր արտադրութունն առավելութուններ չունի մանրի նկատմամբ, և մանր արտադրութունը գյուղատնտեսութան մեջ վոչմիայն չի կործանվում, այլ նույնիսկ արտամղում է խոշոր արտադրութանը: Այդ հայացքը գյուղատնտեսութան մեջ մանր արտադրութան վիճակի հարցի մասին, այժմ դարձել է վողջ II Ինտերնացիոնալի պաշտոնական հայացքը:

Այն համցը, թե արդյոք գյուղատնտեսութան մեջ էլ գործում են կապիտալիզմի զարգացման հենց նույն որենքները, ինչ վոր արդյունաբերութան մեջ, հակայական նշանակութուն ունի պրոլետարիատի դասակարգային խնդիրները Պորոչիուռ տեսակետից: Յեթե գյուղատնտեսութան մեջ մանր արտադրողների քայքայում և նրանց պրոլետարացում տեղի չի ունենում, յեթե գյուղացիութունը կապիտալիզմի ժամանակ չի շահագործվում խոշոր կապիտալի կողմից, չի կործանվում, այլ ընդհակառակն, զարգանում է ու ամրապնդվում, այն ժամանակ բուրժուազիայի դեմ մղած իր պայքարում պրոլետարիատը չի կարող հուսը դնել գյուղացիութան հիմնական մասսաների ոգնութան վրա, այն ժամանակ պրոլետարիատին հակադրվում է

Գյուղատնտեսության մեջ խոտ յեվ մաե արտադրության հարցի նեանակութունը

Ապաձուցելու համար, վոր համակենտրոնացում չկա գյուղատնտեսութեան մեջ, սոցիալ-Ֆաշիստներն առկոչում են պաշտոնական վիճակագրութեան տվյալները: Գերմանական պետական վիճակագրութեան, որինակ, ցույց է տալիս, վոր 0,05-ից մինչև 2 հեկտար տարածութեան ունեցող տնտեսատերերի թիվը 1907 թ. 2,577 հազարից 1925 թվին հասել է 3,027 հազարի, իսկ նրանց ընդհանուր տարածութեանը 1,506 հազար հեկտարից հասել է 1,588 հազ. հեկտարի: Իսկ այդ նույն ժամանակամիջոցում 20-ից մինչև 100 հեկտար տարածութեան ունեցող տնտեսութեաններին թիվը 229 հազարից իջել է 200 հազարի, ըստ վորում նրանց ընդհանուր տարածութեանը 8,091 հազար հեկտարից պակասել է մինչև 6.769 հազար հեկտարի: Դրանից սոցիալ-Ֆաշիստները բուրժուական տնտեսագետներին հետ միասին անում են այն յեղրակացութեանը, վոր խոշոր տնտեսութեանն արտամղվում է մանրի կողմից:

Լենինն առանձնապես Ռուսաստանից և ՀՍՄՆ-ից վերցրած սկայական մատերիալով ապացուցեց, վոր ցանքի արտադրյալ մեծությամբ ինքնին վոյ մի դեպքում չի կարող վկայել ցենսուսքյան իսկական չափի մասին: Յերկու տարածութեան կարող են տարածութեամբ միահավասար լինել սակայն մեկը մյուսից միանգամայն տարբերվել ներդրված կապիտալի չափով: Կարող է նույնիսկ պատահել, վոր տարածութեամբ ավելի խոշոր տնտեսութեանն ավելի փոքր լինի ըստ ներդրված կապիտալի և ըստ յեկամտարբերութեան:

«Հողի խմբավորումն ըստ տարածութեան միմյանց և միացնում խոշոր և մանր տնտեսութեաններին, յեթե նրանք նման են հողատիրման չափերով, միմյանց և միացնում միանգամայն տարբեր ծավալի արտադրութեան ունեցող տնտեսութեաններին, այնպիսիներին, վորոնց մեջ գերակշռում է տնտեսական աշխատանքը այնպիսիների հետ, վորոնց մեջ գերակշռում է վարձու: Դրանից ստացվում է արժատապես անճիշտ, իրերի իսկական գրութեանը միանգամայն խեղաթյուրող—սակայն բուրժուազիստին շատ գյուրեկան—կապիտալիզմի դասակարգային հակասությունների բացման պահեք: Դրանից ստացվում է մանր հողատերերի դուրքյան վոչ պակաս կեղծուպատիր և բուրժուազիստին վոչ պակաս գյուրեկան գունագարդում» (Լենին, հ. XVII, էջ 619, ռուս.):

Բուրժուական վիճակագրութեանը 0,05, այսինքն մեկ քսաններորդ (!) հեկտար տնտեսութեանը պատկերացնում է վոր-

պես «ինքնուրույն» տնտեսութեան և, ըստ վորում, դեռ այնպիսի տնտեսութեան, վորն արտամղում է 100 հեկտարանոց և ավելին՝ կապիտալիստական խոշոր տնտեսութեանը: Իսկ սոցիալ-Ֆաշիստները յերկու ձեռքով կառչում են այդ բուրժուական վիճակագրութեանը և թեորիաներ են կառուցում, վոր խոշոր տնտեսութեանը չի կարող հաղթել մանր տնտեսութեանը:

Իրականութեան մեջ, գյուղացեստութեանում էլ և տեղի ունենում կապիտալիստական համակենտրոնացման նույն պրոցեսն, ինչ վոր արդյունաբերութեան մեջ, և դրանով նախադրյալներ են ստեղծվում սոցիալիզմի հաղթանակի համար նաև գյուղացեստութեան մեջ: Ճիշտ է, կապիտալիզմի ժամանակ խոշոր արտադրութեան աճը գյուղատնտեսութեան մեջ շատ ավելի դանդաղ է տեղի ունենում, քան արդյունաբերութեան մեջ: Սակայն դա անաշանում է վոչ թե բնական պայմաններից, այլ միայն հասարակական պայմաններից, այսինքն հողի մասնավոր սեփականութեան գոյութեամբ, վորն արգելակում է կապիտալիզմի զարգացումը, բայց վորը կապիտալիզմը չի կարողանում վերացնել, վախենալով, թե դա կարող է հարված հասցնել առհասարակ մասնավոր սեփականութեանը:

Վոր վոչ թե բնութեանն է սահման դնում խոշոր արտադրութեանը գյուղատնտեսութեան մեջ, ամենից ավելի լավ ցույց է տալիս խորհրտնտեսութեանների ու կոլտնտեսութեաններին որինակը ԽՍՀՄ-ում: Հողի մասնավոր սեփականութեան վերացումը և կապիտալիստների սեփականագրկումը պրոլետարական պետութեանը հնարավորութեան տվին այնպիսի խոշոր ձեռնարկութեաններ ստեղծել գյուղատնտեսութեան մեջ, վորոնց նման չկա և չի կարող լինել կապիտալիզմի ժամանակ: ԽՍՀՄ որինակը վերջնականապես ջախջախում է գյուղատնտեսութեան մեջ խոշոր արտադրութեան անհնարինութեան կամ անոգտավետութեան լեզենդները: «Մենք մեր տրամադրութեան տակ նոր արգումենտ ունենք ընդդեմ բուրժուական տնտեսագետների, վորոնք ազգաբարում են մանր գյուղացիական տնտեսութեան կայունութեանը խոշոր տնտեսութեան դեմ նրա մղած պայքարում» (Ստալին, Լենինի իրավի հարցերը, էջ 448, ռուս.):

Կապիտալիզմն ընդհանրապես (վոչ միայն գյուղատնտեսութեան, այլև արդյունաբերութեան մեջ), զարգացնելով արտադրողական ուժերը, միաժամանակ թրգելակում է նրանց զարգացումը: Բայց թե արդյունաբերութեան մեջ և թե գյուղատնտեսութեան մեջ խոշոր կապիտալիստական արտադրութեանն անշեղորեն արտամղում է մանրին:

Ըստ վորում, գյուղատնտեսութեան մեջ այդ պրոցեսը մի քանի առանձնահատկութիւններ ունի, վոր մանր արտադրութեան արտադրումն անպայմանօրէն կապված չէ գյուղացու անմիջաբար ֆայտայման և նրա վարձու բանվոր դառնալու հետ: Գյուղատնտեսութեան մեջ մի շարք պայմաններ կան, վորոնցից կարևորագոյնը հողի մասնավոր սեփականութիւնն է, և վորոնք խոշոր կապիտալին հնարավորութիւն են տալիս ավելի ուժգին շահագործելու մանր արտադրողին, քան նա շահագործում է մանր արտադրողին արդիւնաբերութեան մեջ (տնայնագործին):

3. ԳՅՈՒՂԱՅԻՈՒԹԵԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԸ ԿՍՊԻՏԱԼԻԶՄԻ ԺՄԱՄԱՆԱԿ

Մանր գյուղացիական տնտեսութեան այսպէս կոչված «կայունութիւնը» կամ «կենդանիութիւնը», վորին առկոչում են բուրժուական տնտեսագետներն ու սոցիալ-ֆաշիստները Մարքսին «հերքելու» նպատակով, բղխում է վոչ թէ այն բանից, վոր մանր տնտեսութիւնն, իբր թէ, առավելութիւններ ունի խոշորի նկատմամբ, այլ այն անհավանական զրկանքներից, վորոնք տանում է իր «ինքնուրույն» տնտեսութեանը կառչած մանր գյուղացին:

Գյուղացիութեան օտա-
գործման ձեւերը
Կապիտալիստ-վարձակալը կղաղաբեր իր
կապիտալը գյուղատնտեսութեան մեջ
գործադրելուց, յետէ նա միջինից ցած շահույթի նորման ստանար: Իսկ մանր գյուղացու համար արտադրութեան նպատակը պարզապէս իր գոյութեան պահպանումն է, զրա համար ել նա կառչում է իր տնտեսութիւնը մինչև այն ժամանակ, քանի նրա աշխատանքը շարունակում է նրան հնարավորութիւն տալ մի կերպ ի գոյութիւնը պահպանելու:

Մանր գյուղացին հողի վարձակալման ժամանակ օտս ավելի վատ դրութեան մեջ է դրված, քան խոշոր վարձակալողը: Կապիտալիստը կարող է հողը վարձակալել միանշանայն անկախ իր ապրելավայրից, նա կարող է նույնիսկ քաղաքում ապրել և իր կապիտալը ներդնել գյուղատնտեսութեան մեջ. նա զրա համար ել ազատ է վարձակալելիք հողի արտադրութեան մեջ:

Մանր գյուղացին կապված է իր ապրելավայրին. նրա համար հողագործութիւնն ամենասերտ կերպով կապված է նրա տնային տնտեսութեան հետ: Դրանից ռզտվում է խոշոր հողատերը և մանր վարձակալողից շատ ավելի բարձր վարձավճար է վերցնում հեկտարի դիմաց, քան խոշոր վարձակալողից: Ծիշտ այդպէս ել հողի գինը, վորն գյուղացին վճարում է հողի գնման ժա-

մանակ, շատ ավելի բարձր է, քան հողի խոշոր գնողի համար: Դրա համար ել խոշոր հողատիրոջ համար հաճախ ավելի ձեռնառու յէ իր հողը մանր կտորներով վարձի տալ կամ վաճառել, քան խոշոր կտորներով:

Մենք նորից տեսնում ենք, վոր հողի մասնավոր սեփականութիւնը (և վոչ թէ բնական պայմանները) արգելակում է խոշոր արտադրութեան աճը հողագործութեան մեջ: Մանր գյուղացին հող գնելու կամ առնասարակ իր տնտեսութիւնը պահպանելու համար բանկից վարկ ստանալով, պետք է շատ ավելի բարձր տոկոս վճարի և իրեն ամբողջ կյանքով ստրկացնի: Այդ բոլորի հետևանքով մանր գյուղացուն իր արդիւնքների վաճառքից հաղիվ մի բան է մնում իր գոյութեան պահպանման համար:

Այն յերկիրներում ուր գերակշռում է մանր գյուղացիական տնտեսութիւնը, հացի գներն ավելի ցած են, քան խոշոր կապիտալիստական հողագործութեան յերկիրներում: Դա տեղի յէ ունենում վոչ թէ նրա համար, վոր գյուղացիական աշխատանքն ավելի արտադրողական է քան հակառակ, գյուղացիական աշխատանքը պակաս արտադրողական է, քան վարձու բանվորների աշխատանքը՝ կապիտալիստական հողագործական ձեռնարկութիւնում: Այդ ավելի ցած գները բացատրվում են նրանով, վոր «գյուղացին հավելյալ արդյունքի մի մասը ձի յէ օտաւ հասարակութեանը (այսինքն կապիտալիստների դասակարգին)» (Լենին, հ. XVIII, էջ 24 ուս, ընդգծումն իմն է.— Լ. Ս.): Հացի այդ ցած գինը «արտադրողների չքավորութեան հետևանքն է, և վոչ մի դեպքում նրանց աշխատանքի արտադրողականութեան արդիւնքը» (Մարքս, Կապիտալ, հ. III, էջ 581, ուս.):

Վորովհետև մանր գյուղացու աշխատանքը նվազ արտադրողական է և վորովհետև նա պետք է ոհնտա, հարկեր է այն վճարի, և այդ բոլորին դուժարած նա հարկադրված է իր արդիւնքները ցած գնով վաճառելու, ապա նա պետք է շատ ավելի շատ աշխատի, վորպէսզի մի կերպ պահպանի իր գոյութիւնը: Նրա գոյութեան ցած մակարդակը զրա համար կապված է անհաւի աշխատանքի հետ:

«Յուրաքանչյուր կապիտալիստական հասարակութեան մեջ մանր գյուղացիութեան գոյութիւնը բացօրվում է վոչ թէ հողագործութեան մեջ մանր արտադրութեան սեյսիկական գերազանցութեամբ, այլ նրանով, վոր մանր գյուղացիներն իրենց պահանջումները վարձու բանվորների պահանջումներին մակարդակից ցած են իջեցնում և աշխատանքի վրա գերլարվում են անհամեմատօրէն ավելի ուժգին,

բան այդ վերջիններս» (Լեւին, հ. III, էջ 7, ուսու. ընդգծումն իմն ե.—Լ. Ս.):

Մահ թե ինչ տեսք ունի մանր գյուղացիական տնտեսութեան տիրահոշակ «գերակշռութիւնը» խոշոր կապիտալիստականի նկատմամբ:

Մանր գյուղացին փաստորեն յերեք ել ինքնուրույն տնտեսատեր չէ: Նրա ինքնուրույնութիւնը—միայն արտաքին յերեքութեանութիւնն է: «Գյուղացիութեան շահագործումը գործարանային պրոլետարիատի շահագործութից տարբերվում է միայն իր ձևով: Շահագործողը ճիշտ նույն է, կապիտալը: Առանձին կապիտալիստները առանձին գյուղացիների շահագործում են հիպոթեզի և վաճառուրքան միջոցով, կապիտալիստների դասակարգը գյուղացիների դասակարգին շահագործում է պետական հարկերի միջոցով» (Մաքս, Դասակարգային պայքարը Ֆրանսիայում. ընտիր յերկեր. հ. II, էջ 220, ուսու.):

Սակայն մանր գյուղացին ամեն կերպ կառչում է իր խաբուսիկ ինքնուրույնութեանը: «Արեւմտյան Յեվրոպայում մանր գյուղացուն ինչն է կապել, կապում է և պիտի կապի իր մանր ապրանքային տնտեսութեանը: Ամենից առաջ և գլխավորապես իր սեփական հողակտորի առկայութեանը, հողի մասնավոր սեփականութեան առկայութեանը: Նա տարիներով փող է խնայել, վորպէսզի մի փոքրիկ հողակտոր գնի, նա այն գնել է և, հասկանալի յե նա չի ուզում նրանից բաժանվել, գերադասելով տանել բոլոր և ամեն տեսակի զրկանքներ, գերադասելով վայրենութեան մեջ ընկնել, միայն թե պաշտպանի իր փոքրիկ հողակտորը—իր անհատական տնտեսութեան հիմքը» (Սթալին. Լենինի դժի հարցերը, էջ 447, ուսու.):

Գյուղացիության պրոլետարացումը

Մանր արհեստավորին կամ անյանագործին, վորն շահագործվում է կապիտալի կողմից և նույնպես հարկադրված է կիսաքաղց ապրելու և անչափ աշխատելու, շատ ավելի հեշտ է բաժանվելու իր «ձեռնարկութեանից»—նրա վրա չի բռնանում հողային սեփականութեանը, վորն այնքան մեծ դժվարութեամբ ձեռք է բերվել գյուղացու կողմից: Մանր գյուղացուն, վորն արդեն մի փոքրիկ հողակտոր ունի, դեռևս թվում է, վոր հնարավոր է «ուժեղ» տնտեսատերի շարքն անցնել:

Սակայն գյուղացիութեան միայն աննշան փոքրամասնութեանը կարող է խուսափել քայքայումից: «Քայքայմանը նախորդում է հուսահատ պայքարը հանուն իր տնտեսական ինք-

նուրույնութեան . . . պայքարի անխուսափելի արդյունքն է,— ունևոր, հարուստ տնտեսատերերի փոքրամասնութեան առանձնացումը . . . և մեծամասնութեան ել ավելի աղքատացումը, վորն խրոնիկական քաղցով և ուժից վեր աշխատանքով կործանում է աշխատողի ուժը, վատթարացնում է և՛ հողի և՛ անասունի վորակը: Պայքարի անխուսափելի արդյունքն է.— վարձու աշխատանքի վրա հիմնված կապիտալիստական տնտեսութեանների փոքրամասնութեան գոյացումը և մեծամասնութեան համար «կողմնակի վաստակ» վորոնելու, այսինքն արդյունաբերական և հողագործական վարձու բանվորներ դառնալու ռճող անհրաժեշտութեանը» (Լեւին, հ. IV, էջ 246—247):

Մանր գյուղացին ավելի ու ավելի յե հարկադրված դիմելու իր աշխատույթի վաճառքին: Նա դառնում է կիսապրոլետար: Նրա տնտեսութեանը նրա համար էլ ավելի մեծ չափով է դառնում գոյութեան ոժանդակ աղբյուր: Այսպես, օրինակ, Գերմանիայում այն 3,027 հազար մանր գյուղացիներից, վորոնք 0,05 ից մինչև 2 հեկտար տարածութեան ունին, և վորոնք ըստ սոցիալ-Ֆաշիստական թեորեթիկների արտամղում են խոշոր տնտեսութեանը, կեսից ավելին, այսինքն 53,9% վորպէս վարձու բանվորներ վաստակի յեն դիմում արդյունաբերութեան կամ գյուղատնտեսութեան մեջ:

Քայքայվող մանր գյուղացին իր տնտեսութեանից ամբողջութեամբ չի կտրվում վոչ միայն վերև ցույց տրված պատճառներից, բայց այլև նրա համար, վոր դա նրա համար հաճախ միանգամայն անհնարին է, առանձնապես ճգնաժամի շրջանում, յերբ համարյա անհնարին է աշխատանք ձարել վորպէս վարձու բանվոր:

Հատկապես այժմ, յերբ գործազրկութեանը յերեք չեղած չափերի յե հասել, քայքայվող գյուղացին ուղղակի յելք չունի, և նա հարկադրված է սոված որ անցկացնել իր փոքրիկ հողամասի վրա, իսկ բուրժուական վիճակագրութեանը նրան դասում է «ինքնուրույն» տնտեսատերերի շարքը:

Ինչ պատերազմից շատ առաջ սկսվեց քայքայվող գյուղացիութեան փախուստը գյուղից քաղաք, այսպես կոչված գյուղի անմարդաբնակ դառնալը: Դա սպառնալիք ստեղծեց, վոր հողագործական խոշոր տնտեսութեանները կարող են զրկվել աժան աշխատույթից: Քայքայվող գյուղացիների գյուղից փախչելու դեմն առնելու համար նրանց կապում էյին հողին, նրանց «ինքնուրույն տնտեսութեան» վարելու հնարավորութեան արամադրե-



լու ձևով: «Յերբ մանր արտադրութիւնը չափազանց ուժգնորեն
ե արտամղվում,—խոսք սնեսուսերերը ձգտում են ամրացնել կամ
վերակենդանացնել այն, հողի վաճառքի կամ վարձու տալու միջո-
ցով» (Լեւնին, հ. II, էջ 453): Ստեղծված է նույնպես հողաբաժին
ունեցող գյուղատնտեսական վարձու բանվորի տիպը: «Գյուղա-
կան բանվորին հողաբաժին տալը շատ հաճախ արվում է հողուտ
իրենց գյուղական տնտեսատերերի, դրա համար էլ հողաբաժին
ունեցող գյուղական բանվորի տիպը յուրահատուկ է բոլոր կա-
պիտալիստական յերկիրներին» (Լեւնին, հ. III, էջ 129, ռուս.):

Այսպիսով, կապիտալիզմի ժամանակ հենց խոշոր գյուղատնտե-
սեսութեան անը պայմանավորում է վորոշ չափով պահպանել
յերբեմն էլ նույնիսկ աճեցնել մանր տնտեսութիւնները: Բայց
միանգամայն պարզ է, վոր այդ մանր տնտեսութիւնները չեն
արտամղում կապիտալիստական խոշոր տնտեսութեանը, ալ միայն
նրա անհրաժեշտ կցորդն են հանդիսանում: Իրականութեան մեջ
այդ «ինքնուրույն» մանր տնտեսութիւնները վոչ ալ ինչ են,
յեթե վոչ արթնալով մանր արտադրողները կապիտալիստական
խոշոր գյուղատնտեսութեան մեջ շահագործվող աշխատույթի
մշտական աղբուր ստեղծելու միջոց: Այսպիսով, խոշորի կողմից
մանր արտադրութեան արտամղումը տեղի յե ունենում այնպես,
վոր պահպանվում է «ինքնուրույն» մանր արտադրութեան գո-
յութեան և նույնիսկ աճի յերևութականութիւնը:

Եկապիտալիզմի հիմնական և գլխավոր տենդենցիան մանր-
արտադրութեան արտամղումն է խոշորի կողմի թե արդյունա-
բերութեան և թե գյուղատնտեսութեան մեջ: Սակայն այդ արտա-
մղումը չի կարելի հասկանալ միայն անմի ջարար սեփականա-
գրկման իմաստով: Արտամղման է վերաբերում նմանապես մանր
հողագործների տնտեսութեան քայքայումը, և պայմանների վատ-
թարացումը, վորը կարող է տարիներ ու տասնյակ տարիներ
քաշել: Այդ վատթարացումը արտահայտվում է և անչափ աշխա-
տանքով կամ մանր հողագործի վատացրած սնունդով, և նրան
պարտքերով ծանրաբեռնելով, և անասունների կերի ու առհա-
սարակ խնամքի վատացմամբ, և հողը խնամելու պայմանների
նրա մշակման, պարարտացման և այլն վատացմամբ, և տնտե-
սութեան տեխնիկայի լճացմամբ, և այլն» (Լեւնին, հ. XVII, էջ
619, ռուս.):

Լեւնինը ցույց տվեց, վոր այնտեղ, ուր
բուրժուական «գիտութիւնը» և նրա հեթ-
միասին մարքսիզմի ունեգատները «ինք»

Տ. Գրատայի և Կարգի Լեւնինյան
քերիայի ճեմատանը



նուրյուն» մանր տնտեսութեան բարգաւաճումն ու բարորու-
թիւնն են տեսնում, իրականութեան մեջ իշխում են անլուր շա-
հագործումը, քայքայումը, ընկճվածութիւնը, կարիքը և վայրե-
նացումը: Մերկացնելով մանր գյուղացիներին վիթխարի զանգվա-
ծի և բուրժուական միջև գոյութիւն ունեցող հակասութիւն-
ները, Լեւնինը հայտնագործեց բուրժուականացից այդ մասսաների
կտրվելու հնարավորութիւնը և սահմանեց խզման անհրաժեշտու-
թիւնը և նրանց անցումը պրոլետարիատի ղեկավարութեան ներ-
ք՝ բուրժուականացի դեմ նրա մղած պայքարում: Լեւնինը քայքայ-
վող գյուղացիութեան մեջ պրոլետարական հեղափոխութեան ու-
ղեկներ հայտնագործեց, ուղեկներ, վորոնք վճռական նշանա-
կութիւն ունեն բուրժուականացի նկատմամբ պրոլետարիատի հաղ-
թանակի համար:

Մարքսիստական—Լեւնինյան թեորիան սովորեցնում է վոչ
միայն այն, թե պրոլետարիատն ինչպես պետք է իր կողմը
գրավի գյուղացիութեան կիսապրոլետարական շերտերին՝ բուր-
ժուականացի դիկտատուրան տապալելու համար, այլ և այն, թե
ինչպես գյուղացիութեան վոչ միայն կիսապրոլետարական վիթ-
խարի զանգվածներին, այլ և միջակ շերտերին գրավել սոցիալիզ-
մի շինարարութեան մեջ:

Պրոլետարական դիկտատուրան գյուղացիութեան այդ շեր-
տերին ազատագրելով կալվածատերերի և կապիտալիստների շա-
հագործումից, նրանց համար զարգացման միանգամայն ուրիշ
ուղի յե բաց անում—զարգացում դեպի սոցիալիզմ, վորը բարձ-
րացնում է նրանց բարեկեցութիւնը, լիկվիդացիայի յե յենթար-
կում նրանց զարավոր հետամնացութիւնը և վայրենացումը և
այսպիսով վոչնչացնում է կապիտալիզմի ստեղծած հակադրու-
թիւնն արդյունաբերութեան և գյուղատնտեսութեան միջև,
քաղաքի և գյուղի միջև:

Եւտակապես նրա համար, վոր մեզ մոտ չկա հողի մասնա-
վոր սեփականութիւն, մեզ մոտ չկա նաև գյուղացու այն ստոր-
կական կապվածութիւնը հողին, վորը կա Արևմուտքում: Իսկ
այդ պարագան չի կարող չհեշտացնել մանր գյուղացիական տն-
տեսութեան անցումը կոլտնտեսական ուղիներ:

Ահա թե վորտեղ է այն պատճառներից մեկը, վոր մեզ մոտ
հողի ազգայնացման պայմաններում գյուղի խոսք տնտեսութիւն-
ներին, գյուղի կոլտնտեսութիւններին այնքան հեշտութեամբ հա-
ջողվում է ցուց տալու իրենց գերազանցութիւնը մանր գյուղա-
ցիական տնտեսութեան հանդեպ:

Ահա վճարողը և խորհրդային ազգարային որհնքների հեղափոխական մեծ նշանակությունը, որհնքներ, վորոնք վոչնչացրել են բնատան, վերացրել են հողի մասնավոր սեփականությունը և հողի ազգայնացում են սահմանել» (Ստալին, Լենինի դմի հասցերը, էջ 448, ռուս.):

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման հաջողությունները փայլուն ապացույց են ազգարային հարցի Լենինյան թեորիայի և կուսակցության քաղաքականության ճշտությունը: Այն ժամանակ յերբ ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի հիման վրա գյուղացիական մասսաների կենսական մակարդակի արագ վերելք է տեղի ունենում, կապիտալիստական յերկիրներում մենք տեսնում ենք անախընթաց սրուության ճգնաժամ, գյուղատնտեսության անկումն, աշխատավոր գյուղացիության քայքայում և աղքատացում:

Կուլակության ջախջախման, գյուղատնտեսության կուլեկտիվացման, կոլտնտեսական շինարարության գյուղացիական համարյա ամբողջ չքավորության ընդգրկման կապակցությամբ, այդ հիման վրա արդեն առաջին հնգամյակում գյուղացիության կուլակների և չքավորների շերտավորման վոչնչացման կապակցությամբ գյուղում վոչնչացվել է աղքատացումն ու պառուպերի դմը՝ Առաջին հնգամյակի ընթացքում ԽՍՀՄ-ն դարձավ աշխարհի ամենախոշոր գյուղատնտեսական յերկիրը: ԽՍՀՄ-ում գյուղատնտեսությունն առաջավոր տեխնիկական բազա ունի, արագ տեմպով աճում է տրակտորների և բարդ մեքենաների գործադրությունը սոցիալիստական խոշոր հողագործության մեջ: Առաջին հնգամյակի ընթացքում գյուղատնտեսության մեջ տրակտորների քանակը 1928 թ. 26,7 հազարից հասավ 148,5 հազարի 1932 թվին, այսինքն 5¹/₂ անգամ, իսկ վողջ տրակտորային պարկի կարողությունը գյուղատնտեսության մեջ 228 հազար ձիու ուժից հասավ մինչև 2,225 հազար ձիու ուժի, այսինքն 8 անգամ: Չորս տարվա ընթացքում ցանքի տարածությունն աճեց 21 միլիոն հեկտարով: Չգալիորեն բարձրացավ բերքատվությունը: Բոլոր կոլտնտեսականներին ունեվոր դարձնելու մասին ընկ. Ստալինի առաջադած լողունգը արեկոծեց կոլտնտեսականների լայն մասսաներին: Չգալիորեն աճեց կոլտնտեսային աշխատանքի արտադրողականությունը և կոլտնտեսությունների ու կոլտնտեսականների յեկամտաբերությունը:

Գյուղատնտեսության վերելքն էլ ավելի հզոր կլինի յերկրորդ հնգամյակում:

Յեթե առաջին հնգամյակի վերջին գյուղացիական տնտեսությունների կուլեկտիվացման տոկոսը կազմում էր 61,5, ապա յերկրորդ հնգամյակի ընթացքում կուլեկտիվացումն ամբողջությամբ կավարտվի: Գյուղատնտեսության արտադրանք յերկրորդ հնգամյակում կկրկնապատկվի: Մեքենատրակտորային կայանների թիվը 1932 թ. 2,416-ից կհասնի 6 հազարի 1937 թվին: Գյուղատնտեսության մեջ վողջ տրակտորային պարկի կարողությունը 1932 թ. 2,225 հազար ձիու ուժից կհասնի 8,200 հազար ձիու ուժի 1937 թվին: Ուժգնորեն կաճի գյուղատնտեսական բարդ մեքենաների թիվը: Կվարտվի գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը:

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման անխղիչ բաղկացուցիչ մասը կազմում է գյուղում տեղի ունեցող կուլտուրական հեղափոխությունը.— անգրագիտության վերացումը, սոցիալիստական արտադրության հարյուր հազարավոր և միլիոնավոր կազմակերպիչների ստեղծումը գյուղում. տեխնիկական գիտելիքների աճը. կնոջ աղատագրությունը գյուղում, կուլտուր-լուսավորական հիմնարկների ցանցի վիթխարի աճը, կոլտնտեսականների սոցիալիստական գիտակցության աճը:

Այսպիսով, յերկրորդ հնգամյակը կստեղծի բոլոր նախադրյալները լուծելու համար կոմունիստական հեղափոխության ամենակարևոր խնդիրներից մեկը— գյուղի և քաղաքի հակադրության վոչնչացման խնդիրը: Յերկրորդ հնգամյակում ԽՍՀՄ-ն խոշոր քայլ է կատարում դեպի առաջ մարդկային հասարակության դարավոր հակադրության— քաղաքի և գյուղի հակադրության— վերացման գործում և ստեղծում է այդ հակադրության վերացման բոլոր անհրաժեշտ նախադրյալները: Գյուղատնտեսությունն իր հասարակատն ձևով դառնում է արդյունաբերության հետ նույնատիպ, գյուղատնտեսական աշխատանքը դառնում է ինդուստրիալ աշխատանքի մի այլաձևությունը, հզոր կերպով աճում են քաղաքի և գյուղի տրանսպորտային կապերը, դգալի չափով մերձենում են արդյունաբերության և գյուղատնտեսության աճի տեմպերը, մերձենում են քաղաքի և գյուղի աշխատավորության նյութական բարեկեցության և կուլտուրայի մակարդակները» (XVII կուսհամագումարի բանաձևը յերկրորդ հնգամյա պլանի մասին, հայ.):

Կապիտալիստական աշխարհում— միանգամայն հակառակ պատկեր է: Վերջին տարիներումս ցանքի տարածությունը կըրճատվել է մեջին հաշվով 8—10% ուղի: ՀՄՄ-ում գյուղատնտես-

սուբյան ընդհանուր արտադրանքը 1929 թ. 11 միլիարդ դոլարից իջել է, 5 միլիարդ դոլարի 1932 թվին—ավելի քան 50 տոկոսով: Հացահատիկի արտադրանքի արժեքն իջել է ավելի քան 58 տոկոսով, իսկ բամբակին—70 տոկոսով:

Այն ժամանակ յերբ ԽՍՀՄ-ում գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը բուռն թափով աճում է, ՀԱՄՆ-ում այն 83 տոկոսով կրճատվել է 1929 թվի համեմատությամբ, Գերմանիայում—72 տոկոսով, իսկ Լեհաստանում համարյա միանգամայն դատարել է:

«Ազրարային ճգնաժամն այս ժամանակվա ընթացքում ուժեղացավ և ընդգրկեց գյուղատնտեսությունն ընդհանրապես, այդ թվում և անասնապահությունը, հասցնելով այն դեգրադացիայի, մեքենաներից ձեռքի աշխատանքին անցնելուն, տրակտորը ձիով փոխարինելուն, արհեստական պարարտացումների կիրառման շեշտակի կրճատման, իսկ յերբեմն ել ամբողջովին նրանից հրաժարվելուն» (Սալիմ, Ձեկուցում XVII համագումարին, հայերեն, էջ 5—6):

Ճգնաժամը քայքայում է գյուղացիության բազմամիլիոն զանգվածներին: Որինակ, ՀԱՄՆ-ում ֆերմերի տարեկան միջին յեկամուտը 1929 թ. 847 դոլարից ընկել է 187 դոլարի 1932 թ.: Աճում է գյուղացիության պարտաբեռնվածությունը խոշոր բանկերին, գյուղացիական տնտեսությունների գույքերը մասսայաբար աճուրդի յեն հանվում՝ պարտքերը վճարելու համար: Այսպես, ՀԱՄՆ-ում գյուղացիական տնտեսություններ են վաճառվել 1929 թվին—45 հազար, իսկ 1932 թվին—150 հազար, Գերմանիայում 1928 թվին—10 հազար, իսկ 1931 թվին—18 հազար (սա միայն պաշտոնական տվյալներով):

Այն ժամանակ յերբ գործազուրկները և քայքայվող գյուղացիների միլիոնավոր մասսաներ քաղցում են, կապիտալիստները գնները բարձրացնելու համար հսկայական քանակությամբ հաց, բամբակ, և այլ են վոչնչացնում:

Կապիտալիստական յերկիրները ճգնաժամը մի կողմից, և ԽՍՀՄ սոցիալիստական գյուղատնտեսությունն աճը մյուս կողմից, հեղափոխականացնում են գյուղացիական զանգվածներին և ուժեղացնում են հեղափոխական վերելքը համայն աշխարհում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ՎԵՐԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՎ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆՆ ԱՄԲՈՂՋՈՒԹՅԱԲ ՎԵՐՅՐԱԾ

Նախորդ ամբողջ շարադրություն մեջ մենք յեկակեա ենք ընդունել այն յենթադրությունը, վոր յուրաքանչյուր կապիտալիստ կարողանում է սպառել իր արտադրած ապրանքները, վոր նա կարող է փողի վերածել այդ ապրանքների մեջ պարունակվող իր ծախսած կապիտալի արժեքը և հավելյալ արժեքը, իսկ, մյուս կողմից, շուկայում գտնել այն արտադրամիջոցները, վորոնք անհրաժեշտ են արտադրությունը նորից սկսելու համար:

Սակայն կապիտալիստական հասարակության մեջ տիրապետում է արտադրության անարխիան: Կապիտալիզմի հիմնական հակասությունը—հասարակական արտադրության և կապիտալիստական յուրաքանչյուր հակասությունը—արտահայտվում է վոչ միայն բուրժուազիայի և պրոլետարիատի դասակարգային անտագոնիզմով, այլև առանձին գործարաններում աշխատանքի կազմակերպության և ամբողջ հասարակության մեջ արտադրության անարխիայի հակասությամբ (տես I պր. էջ 235,):

Կապիտալիզմի ժամանակ ամբողջ հասարակական արտադրությունը մանրացված է անհատական կապիտալիստական ձեռնարկությունների: Այդ ձեռնարկություններից յուրաքանչյուրն ինքնուրույն ձեռնարկություն է, վորն առանձին կապիտալիստի մասնավոր սեփականություն է կազմում, բայց յուրաքանչյուր առանձին ձեռնարկության վերարտադրությունը միաժամանակ կախումն ունի մյուս ձեռնարկությունների վերարտադրությունից, կախումն ունի ամբողջ հասարակության մեջ յեղած վերարտադրությունից: Այսպես, տեքստիլ ձեռնարկության մեջ վերարտադրությունը կախումն ունի բազմաթիվ ուրիշ կապիտալիստների բազմազան տեքստիլ մեքենաների, բամբակի, ոժանդակ նյութեղենի, վառելանյութի, բանվորների սպառման առարկաների և այլն, և այլն արտադրությունից:

Սակայն ինչ է նշանակում վերարտադրությունը յուրա-

տեղից Սմիտն արել է այն յեղրակացութունը, վոր ապրանքի ամբողջ արժեքը բաժանվում է միայն հասույթներին, վորոնք ըսպառվում են տարբեր դասակարգերի կողմից:

Իհարկե, Սմիտը չէր կարող չտեսնել, վոր ապրանքի վաճառման ժամանակ ստացված փողի գումարում, այսինքն գնի մեջ (մեր որինակում 10 ու.) պարունակվում է վոչ միայն աշխատավատնված արտադրամիջոցների արժեքը կապիտալիստին հատուցող մասը (4 ու.): Բայց, ասում է Սմիտը, յեթե հաճարի գնի մեջ աշխատավարձից, շահույթից և ռենտայից բացի պարունակվում է նաև գուլթանի արժեքը, ապա չէ վոր գուլթանը նույնպես աշխատանքով է ստեղծված: Վորովհետև աշխատանքը միայն աշխատավարձի, շահույթի և ռենտայի վրա բաժանվող արժեք է ստեղծում, ապա և գուլթանի արժեքը, նմանապես նաև գուլթանի պատրաստման վրա ծախսված արտադրամիջոցների արժեքը, ի վերջո հանգում է աշխատավարձի և հավելյալ արժեքի, այսինքն հասույթներին:

Դա վերաբերվում է հասարակութայն մեջ գործադրվող բոլոր արտադրամիջոցներին: Դրա համար ել, ասում է Սմիտը, վորջ հասարակական արդյունքի արժեքը բաժանվում է միայն աշխատավարձի, շահույթի և ռենտայի վրա:

Այսպիսով, ըստ Սմիտի թեորիայի, հասարակական արդյունքի արժեքից հանվում է ծախսված հաստատուն՝ կապիտալի արժեքը: Դրանով իսկ Սմիտն իրեն միանգամայն զրկել է հասարակական կապիտալի վերարտադրութայն հարցը ճիշտ դնելու հնարավորութունից:

Յե՛վ իսկապես: Տարեկան արդյունքի մի մասը, վորն իր արժեքով համապատասխանում է աշխատավարձի մեծութայնը, սպառվում է բանվորի կողմից: Մյուս մասը, վորն իր արժեքով հավասար է շահույթին, սպառվում է կապիտալիստների կողմից, իսկ յերրորդն սպառվում է հողատերերի կողմից: Տարեկան արդյունքի ամբողջ արժեքը բաժանվում է տարբեր դասակարգերի հասույթի: Դրա համար ել հասարակական ամբողջ տարեկան արդյունքը պետք է բաղկացած լինի այնպիսի ապրանքներից, վորոնք կարող են սպառվել վորպես յեկամուտ, այսինքն սպառման առարկաներից: Սմիտն այդ պնդումով ել սկսում է իր հըո-

¹ Սմիտն այն անվանում է հիմնական կապիտալ:

ձեղծվող աշխատութունը, վորը կոչվում է «ժողովուրդների հասարակութայն», — «Յուրաքանչյուր ազգի տարեկան աշխատանքն այն ֆոնդն է, վորը վերջին հաշվով հայթայթում է նրան դոյութայն բոլոր միջոցները, վորոնք նա սպառում է տարվա ընթացքում»: Բայց յեթե հասարակական ամբողջ արդյունքը բաղկացած է միայն անձնական սպառման առարկաներից, ապա հարց է ծագում, թե կապիտալիստները վորտեղից կարող են վերցնել արտադրամիջոցներ, վորպեսզի վերանորոգեն արտադրութայնը թեկուզ և ճիշտ նույն չափով, այսինքն թեկուզ և պարզ վերարտադրութայն համար: Դրանք վոչ մի տեղից ել չի կարելի վերցնել:

Այսպիսով, յեթե կողմնակից լինենք Սմիտի հայացքներին՝ արդյունքի արժեքի կազմի մասին, ապա չի կարելի բացատրել թե ինչպես է տեղի ունենում վերարտադրութայնը:

Սմիտը չէր կարող հասկանալ հասարակապիտալիստների արժեքը կան կապիտալի վերարտադրութայն բարդ պրոցեսը, վորովհետև նրա յեղակետը սխալ էր: Նա կարծում էր, վոր ապրանքի արժեքն ստեղծվում է աշխատանքով: Դա միանգամայն ճիշտ է: Սակայն դա միանգամայն անբավարար է հասկանալու համար կապիտալիստական արտադրութայն և վերարտադրութայն պրոցեսը: Վճռական հարցն այն է, թե վորպիսի աշխատանքն է արժեք ստեղծում — աշխատանքի յերկակի բնույթի հարցը:

Իսկապես, մոտիկից քննենք, թե Սմիտն ինչպես է դնում ապրանքի արժեքի հարցը: Նա կարծում է, վոր ապրանքի արժեքը վորոշվում է այն աշխատանքի քանակով, վորը բանվորը միացնում է հում նյութին: Միանգամայն պարզ է, վոր Սմիտը հենց սկզբից յերկու բան խառնում է այդ բնորոշման մեջ. — ապրանքի արժեքը և վեստին ստեղծված արժեքը: Ապրանքի արժեքի մեջ (մեր որինակում 10 ու.) մտնում է վոչ միայն այն արժեքը, վորն բանվորը վերստին է ստեղծում և միացնում է հում նյութին (6 ու.), այլ և վատնված արտադրամիջոցների արժեքը (4 ու.): Դրա համար ել ապրանքի արժեքն իսկապես բաժանվում է տին ստեղծված արժեքը: Այդ վերջինն իսկապես բաժանվում է տեղից չի հետեվում, վոր ապրանքի վորջ արժեքը բաժանվում է փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքի — նա սպառում է փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքը:

Ե նաև հաստատուն կապիտալի արժեքի արժեքի այդ Սակայն ինչո՞ւ Սմիտը չի տեսնում ապրանքի արժեքի այդ

տույժը: Նրանք պետք է շուկայում գտնեն իրենց համար անհրաժեշտ սպառման առարկաները: Այդ նշանակում է, վոր հազուադեպ վերարտադրութեան համար անհրաժեշտ է, վոր պետքի հասարակական արդյունքի կազմում վորոշ արժեքի անձնական սպառման վորոշ առարկաներ գտնվեն:

Վերջապես, կապիտալիստը հավելյալ արժեքը ծախսում է անձնական իր վրա: Հասարակական արդյունքի կազմում, հետևաբար, դեռևս պետք է լինին 20 հազ. ո. գումարի անհրաժեշտ գոյամիջոցներ և ճոխութեան առարկաներ, վորոնք սպառվեն կապիտալիստների կողմից:

Այժմ վերցնենք ուրիշ որինակ—վորևե արտադրամիջոցի, ասենք, խառատի հաստոցների ֆաբրիկանտի թող նրա տարեկան արդյունքը նույնպես 100 հազ. ո. արժեք ունենա, վորը բաժանվում է 60 հազ. ո. ծախսված հաստատուն կապիտալի արժեքի, 20 հազ. ո. ծախսված փոփոխուն կապիտալի արժեքի, և 20 հազ. ո. հավելյալ արժեքի: Թեև այդ արդյունքի արժեքի մեջ պարունակվում է և՛ փոփոխուն կապիտալի արժեքը և՛ հավելյալ արժեքը (40 հազ. ո.), բայց այդ բուն արդյունքը, իր բնական ձևով, վորպես հասույթ չի կարող սպառվել վնչ բանվորի կողմից, վնչ էլ կապիտալիստի կողմից: Այդ արդյունքը—խառատի հաստոցները—կարող է սպառվել միայն արտադրողաբար, միայն արտադրութեան մեջ, միայն վորպես կապիտալ, այսինքն վորպես հաստատուն կապիտալ, ուրիշ կապիտալիստների կողմից: Դա կվաճառվի միայն այն դեպքում, յեթե դա իր արժեքով և իր սպառողական արժեքով համապատասխանի այն հաստատուն կապիտալին, վորը ծախսել են մյուս կապիտալիստները և վորը նրանք պետք է փոխարինեն նորով:

Յեթե այդ պայմանն առկա չէ, խառատի հաստոցների ֆաբրիկանտը չի կարող ծախել իր ապրանքը, գնել իրեն համար անհրաժեշտ արտադրամիջոցները և աշխատույժը և վերանորոգել արտադրութունը: Այլ խոսքերով խառատի հաստոցների ֆաբրիկանտի մոտ վերարտադրութունը կահույճն ունի մի շարք այլ ձեռնարկութունների վերարտադրութունից:

Իերված յերկու որինակներից կարելի չէ անել հետևյալ յեզրակացութունները:

Առաջին, վորպետքի մի ձեռնարկութունում վերարտադրութունը հնարավոր լինի, անհրաժեշտ է, վոր վերարտադրութուն լինի մի շարք այլ ձեռնարկութուններում: Անհասական կապի-

թալի վերարտադրութունը հասարակական կապիտալի վերարտադրութեան մասը կազմելով, միաժամանակ պայմանավորված է նրանով:

Յերկրորդ, վերարտադրութեան համար անբավարար է, վորպետքի հասարակական վողջ արդյունքի արժեքը բաժանվի ծախսված արտադրամիջոցների արժեքի (հաստատուն կապիտալ), աշխատավարձի (փոփոխուն կապիտալ) և հավելյալ արժեքի: Անհրաժեշտ է նույնպես, վորպետքի հասարակական վողջ արդյունքի կազմում գտնվեն, մի կողմից, այնպիսի ապրանքներ, վորոնք իրենց սպառողական արժեքով, իրենց բնական ձևով կարող են փոխ հասուցել առանձին ձեռնարկութուններում ծախսված հաստատուն կապիտալը (արտադրամիջոցներ), իսկ մյուս կողմից, այնպիսի արդյունքներ, վորոնք կարող են մտնել բանվորների և կապիտալիստների անձնական սպառման մեջ (սպառման առարկաներ): Այլ խոսքերով.—վերարտադրութեան համար անհրաժեշտ է, վորպետքի հասարակութեան հավաքական արդյունքը վորոշ կազմ ունենա, վորոշ կառուցվածք՝ ինչպես բոս իր արժեքի, այնպես էլ բոս իր բնական ձևով:

Հասարակական արդյունքի արժեքային կազմի հարցը վոչ մի դժվարութուն չի ներկայացնում: Մենք արդեն գիտենք, վոր նրա արժեքը կազմված է հաստատուն կապիտալից, փոփոխուն կապիտալից և հավելյալ արժեքից: Իսկ ինչ վերաբերում է հասարակական արդյունքի կազմին ըստ սպառողական արժեքի կամ թե նրա իրային բաղկացուցիչ մասերի, ապա այդ հարցի հետազոտման համար կարիք չկա քննելու հասարակական արդյունքի մեջ մտնող ապրանքների բոլոր տարբեր տեսակները, և՛ արտադրութեան բոլոր ճյուղերը: Նախորդ շարադրութունից յերևում է, վոր վերարտադրութեան համար անհրաժեշտ է, վորպետքի հասարակական արդյունքի կազմում գտնվեն արտադրամիջոցներ և սպառման առարկաներ: Դրա համար էլ միանգամայն բավական է, յեթե արտադրութեան բոլոր բազմազան ճյուղերը խմբավորենք յերկու խոշոր ստորաբաժանման մեջ.—

- 1) արտադրութեան միջոցներ արտադրող ճյուղեր, և 2) գոյութեան միջոցներ ավտադրող ճյուղեր: Հասարակական վողջ արդյունքն ինչ բազմազան ապրանքներից էլ վոր բաղկացած լինի, նրանք բոլորն էլ ճիշտ նույնպես կարող են բաժանվել յերկու խմբի.—
- 1) հասարակական արտադրութեան առաջին ստորաբաժանման արդյունքներ, վորոնք արտադրութեան բոլոր ճյուղերի կողմից սպառվում են վորպես հաստատուն կապիտալ—մեքենաներ, հումք,

ոժանդակ նյութեր, վառելանյութ, և այլն, 2) հասարակական արտադրութեան յերկրորդ ստորաբաժանման արդյունքներ, վորոնք բանվորների և կապիտալիստների կողմից սպառվում են վորպես յեկամուտ.— առաջին ան՝ րաժեշտութեան առարկաներ և ճոխութեան առարկաներ: Հասարակական արտադրութեան յերկու խոշոր ստորաբաժանման այդ բաժանմամբ Մարքսը հասարակական վորջ արդյունքը բաժանել է ըստ նրա բնական ձևի:

Հասարակական ամբողջ արդյունքի կազմն ըստ արժեքի է ըստ բնական ձևի Մարքսն ակնառու կերպով հետևյալ ձևով է ներկայացնում, պատկերում:

Թող վոր հասարակութեան տարեկան ամբողջ արդյունքը 9,000 (հազար կամ միլիոն ուրլի—այդ միևնույն է) արժեք ունենա և բաղկացած լինի արտադրամիջոցներից (հասարակական արտադրութեան I ստորաբաժանման արդյունքը) 6,000 արժեքով և սպառման առարկաներից (II ստորաբաժանման արդյունք) 3,000 արժեքով:

Հետո յենթադրենք, վոր I ստորաբաժանման արդյունքը հետևյալ կազմն ունի ըստ արժեքի.— նրա արտադրութեան վրա ծախսված 4000 հաստատուն կապիտալ + ծախսված 1000 փոփոխուն կապիտալ + 1000 հավելյալ արժեք:

Հաստատուն կապիտալը նշանակինք c տառով, փոփոխուն կապիտալը v տառով, իսկ հավելյալ արժեքը m¹ տառով:

Այն ժամանակ I ստորաբաժանման (արտադրամիջոցներից բաղկացած) արդյունքի արժեքային կազմը կարող է արտահայտվել հետևյալ կերպ.—

$$4000 c + 1000 v + 1000 m = 6000$$

Այժմ վերցնենք II ստորաբաժանման արդյունքը: Թող նրա արժեքը բաղկացած լինի հաստատուն կապիտալի փոխանցված 2000 արժեքից + փոփոխուն կապիտալի վերարտադրված 500 արժեքը + 500 հավելյալ արժեքը:

II ստորաբաժանման (սպառման առարկաներից բաղկացած) արդյունքի արժեքային կազմը հետևաբար այսպես կարտահայտվի.—

$$2000 c + 500 v + 500 m = 3000$$

Այդ յերկու շարքերը միացնելով մենք կստանանք հետևյալ սխեման.—

¹ Մարքսի գործածած այդ նշանակումները հաստատուն, փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքի գերմաներեն անունների տառերն են:

$$I \text{ ստորաբաժանում. } 4000 c + 1000 v + 1000 m = 6000$$

$$II \text{ ստորաբաժանում. } 2000 c + 500 v + 500 m = 3000$$

$$\text{Ամբողջ արդյունքը } 6000 c + 1500 v + 1500 m = 9000$$

Այս սխեմայում ցույց է տրված հասարակական արդյունքի արժեքի բաղկացուցիչ մասերի (c+v+m) և այդ արդյունքի ըստ յին բաղադրիչ մասերի (յերկու ստորաբաժանումներ) փոխադարձ կապը: Հասարակական արդյունքի այդ բաժանումով իր արժեքային և իրային բաղկացուցիչ մասերի նրանց փոխադարձ կապի մեջ, Մարքսն արտահայտել է ամբողջական հասարակական աշխատանքի յերկակի բնույթն ապրանք-կապիտալիստական հասարակութեան մեջ, վորպես մի աշխատանքի, վորն միաժամանակ արժեքներ և սպառողական արժեքներ է ստեղծում, վորն նոր արժեք է ստեղծում և ամբողջ հասարակութեան մեջ ծախսված արտադրամիջոցների արժեքը փոխանցում է հասարակական արդյունքին: Մարքսը կարողացավ բաց անել հասարակական արդյունքի այդ բարդ կազմը նրա համար, վոր նա տեսնում էր հենց ապրանքի և ապրանք ստեղծող աշխատանքի հակասական բնույթը,— այն, ինչը չէր տեսել Սմետը, վորն այդ պատճառով չէր կարող հասկանալ հասարակական կապիտալի վերարտադրութունը:

Պարզելով հասարակական կապիտալի արդյունքի այդ յերկակի բնույթը, մենք կարող ենք անցնել այն բանի քննութեանը, թե ինչպես է տեղի ունենում հասարակական կապիտալի վերարտադրութունը:

Մենք արդեն գիտենք, վոր վերարտադրութեան համար անհրաժեշտ է, առաջին, նորով փոխարինել ծախսված արտադրամիջոցները և, յերկրորդ, վերականգնել ծախսված աշխատույթը:

Այն կապիտալիստները, վորոնք նոր արտադրամիջոցների կարիք են զգում, այն գնում են ուրիշ կապիտալիստներից: Որինակ, կտորեղենի ֆաբրիկաները ջուլհակային հաստոցներ չի արտադրում, նա դրանք գնում է ջուլհակային հաստոցների ֆաբրիկաներից: Այդ վերջինը կտորեղենի ֆաբրիկաներին վաճառելով իր ջուլհակային հաստոցները, իրացնում է դրանց արժեքը, այն իր ջուլհակային հաստոցները, կտորեղենի ֆաբրիկաների կողմից, վորը գնած հաստոցները կգործադրի կտորեղենի արտադրութեան համար: Մյուս կողմից, հաստոցների արժեքի իրացումը, նրանց վաճառքը, անհրաժեշտ է նրա համար, վորպեսզի դրանց ֆաբրիկաները կարողանա նոր արտադրամիջոցներ և աշխատույթ գնել՝ նոր ջուլհակային հասարտադրամիջոցներ

տոցներ արտադրելու համար: Ճիշտ նույնն է տեղի ունենում հասարակական արդյունքի կազմում յեղած մնացած բոլոր արտադրամիջոցների հետ: Այստեղից մենք կարող ենք անել այն յեղարակացութունը, վոր վերարտադրության համար անհրաժեշտ է հասարակական արտադրության | ստորաբաժանման (արտադրամիջոցների) արդյունքի իրացումը (ոեալիդացիան):

Այժմ վերցնենք հասարակական արդյունքի այն մասը, վորն բաղկացած է սպառման առարկաներից (II ստորաբաժանումը): Սպառման առարկաները վաճառելով բանվորներին և կապիտալիստներին, այդ սպառման առարկաների ֆարրիկանտներն իրացնում են նրանց արժեքը: Այդ արդյունքների մի մասի սպառողական արժեքն իրացվում է բանվորների կողմից, վորոնք սպառում են դրանք և այդպիսով վերականգնում են իրենց աշխատույժը, իսկ մյուս մասին—կապիտալիստների կողմից, վորոնք սպառման առարկաների գնման վրա ծախսում են իրենց հավելյալ արժեքը: Սպառման առարկաներ արտադրող կապիտալիստները յեթե չվաճառեն իրենց ապրանքները, չիրացնեն նրանց արժեքը, չեն կարողանա նոր սպառման առարկաներ արտադրել: Բայց դա նշանակում է, վոր վողջ հասարակական վերարտադրության համար անհրաժեշտ է իրացնել վոչ միայն արտադրամիջոցները, այլև հասարակական արդյունքի կազմի մեջ յեղած սպառման առարկաները:

Այսպիսով, հասարակական կապիտալի վերարտադրության պրոցեսը ներառում է իր մեջ հասարակական արդյունքի բաղադրիչ մասերի իրացումը: Նրանց արժեքի իրացումը կատարվում է Երջանառության (առք և վաճառք) միջոցով, իսկ նրանց սպառարժեքի իրացումը տեղի յե ունենում այն ժամանակ, յերբ նրանք մտնում են արտադրության կամ սպառման մեջ: Վերարտադրության թեորիան պետք է ցույց տա, թե ինչպես է տեղի ունենում այդ իրացումը: Դրա համար ել Մարքսի թեորին հասարակական կապիտալի վերարտադրության և շրջանառության մասին, այլ կերպ կոչվում է նաև իրացման (ոեալիդացիայի) թեորիա:

Իրացումը պարզ վերաբարտադրության ժամանակ

Տեսնենք, թե հասարակական արդյունքի բաղադրիչ մասերի ըստ արժեքի և ըստ սպառողական արժեքի իրացումն ինչպես է տեղի ունենում պարզ վերարտադրության ժամանակ: Վերագրանք հասարակական արդյունքի արժեքային և իրային կազմի մեր սխեմային.—

$$I. 4000 c + 1000 v + 1000 m = 6000$$

$$II. 2000 c + 500 v + 500 m = 3000$$

$$6000 c + 1500 v + 1500 m = 9000$$

Ամենից առաջ աչքի յե զարկում այն, վոր առաջին շարքի վերջին թիվը (6000) հավասար է յերկու շարքերի առաջին թվերի գումարին (4000 c + 2000 c): Այլ խոսքերով, առաջին ստորաբաժանման ամբողջ արդյունքն ըստ իր արժեքի հավասար է I և II ստորաբաժանումներում ծախսված հասարակ կապիտալի գումարին այսինքն վողջ հասարակական արդյունքի արտադրության վրա ծախսված հասարակ կապիտալի մեծությանը: Յեկ դա հասկանալի յե,— չե վոր I ստորաբաժանման արդյունքը բաղկացած է միայն արտադրամիջոցներից, իսկ նրանք իրենց բնական ձևով կարող են գործել միայն վորպես հաստատուն կապիտալ, հասարակական արտադրության բոլոր ճյուղերը, վորոնք ներկայացված են յերկու ստորաբաժանումներում, իրենց հաստատուն կապիտալի տարրերին կարող են հատուցել միայն I ստորաբաժանման արդյունքներով:

Սխեմայից պա յերևում է, վոր II ստորաբաժանման ամբողջ արդյունքն ըստ իր արժեքի (3000) հավասար է յերկու ստորաբաժանումների փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքի գումարին (I. 1000 v + II. 500 v + I. 1000 m + II. 500 m), կամ թե հասարակական փոփոխուն կապիտալի գումարին և հավելյալ արժեքի հասարակական զանգվածին (1500 v + 1500 m): Միանգամայն պարզ է, թե ինչու.— I ստորաբաժանման ամբողջ արդյունքն ըստ իր առարկայական ձևի բաղկացած է միայն բանվորների և կապիտալիստների սպառման առարկաներից: Յերկու ստորաբաժանումների բանվորներն ու կապիտալիստները կարող են իրենց աշխատավարձն ու իրենց հավելյալ արժեքն իրացնել միայն II ստորաբաժանման արդյունքներով:

Հասարակական կապիտալի ամբողջությամբ վերցրած վերարտադրության համար անհրաժեշտ է, վորպեսզի I ստորաբաժանման արդյունքը բաղկացած կլինի վոչ թե առհասարակ արտադրամիջոցներից, այլ վորո՞ւ արտադրամիջոցներից, այնպիսիներից, վորոնք կարող են I ստորաբաժանման մեջ գործածվել նոր արտադրամիջոցներ արտադրելու համար, և այնպիսիներից, վորոնք կարող են II ստորաբաժանման մեջ գործածվել սպառման նոր առարկաներ արտադրելու համար: I ստորաբաժանման կապիտալիստներին, արտադրության պրոցեսի վերանորոգման հա-

մար, 4000 արժեքի արտադրամիջոց ե պահանջվում ծախսածի փոխարեն: Այդ ստորաբաժանման մի քանի կապիտալիստների համար իրենց արդյունքը կարող ե իրենց իսկ համար արտադրամիջոց ծառայել: Երինակ քարածուխը քարածխի հանքի արդյունք ե, բայց նա կարող ե այդտեղ իսկ ծառայել վորպես վառելանյութ՝ հանքում շոգու ուժ ոգտագործող տնտեսության մեջ: Սակայն մեծ մասամբ I ստորաբաժանման կապիտալիստները նոր արտադրամիջոցներ պատրաստելու համար անհրաժեշտ արտադրամիջոցը գնում են մեկը մյուսից: Ածխարդյունաբերողը հանքի մեքենայական սարքավորումը գնում ե մեքենաների ֆաբրիկանտից, մետաղաձուլական գործարանի տերը գոմիսի սարքավորումը գնում ե մեքենաշինական արդյունաբերողից, մեքենաշինական արդյունաբերողը մետաղաձուլականից թուշ ե պողպատ ե գնում, իսկ ածխարդյունաբերողից—քարածուխ ե այլն, ե այլն: Այսպիսով, ստորաբաժանման կապիտալիստների միջև տեղի ունեցած մի շարք շրջանառությունների, գնումների ու վաճառքների միջոցով, առաջին ստորաբաժանման արդյունքների մի մասը, վոր բաղկացած ե արտադրամիջոցների արտադրության համար անհրաժեշտ արտադրամիջոցներից ե իր արժեքով հավասար ե այդ ստորաբաժանման հաստատուն կապիտալին, իրացվում ե իսկ ստորաբաժանման սահմաններում ե նատուրայով հատուցում ե այդ ստորաբաժանման մեջ մաշված ե սպառված հաստատուն կապիտալը:

Այժմ գիտենք II ստորաբաժանման: Այդ ստորաբաժանման ավերող արդյունքը բաղկացած ե անձնական սպառման առարկաներից: Այդ ստորաբաժանման բանվորները կապիտալիստներից փողի ձևով ստացած 500 աշխատավարձով, անհրաժեշտ գոյամիջոցներ են գնում նրանցից ճիշտ նոր գումարով: Այսպիսով, II ստորաբաժանման բանվորների ե կապիտալիստների միջև տեղի ունեցած մի շարք շրջանառությունների միջոցով իրացվում ե II ստորաբաժանման արդյունքի այն մասը, վորն իր արժեքով հավասար ե ստորաբաժանման մեջ ծախսված փոփոխուն կապիտալի (500 v) արժեքին: Այդ իրացման հետևանքով այդ ստորաբաժանման բանվորները վերականգնում են իրենց աշխատույժը ե կարողանում են վերստին ձեռնամուխ լինել արտադրության, իսկ կապիտալիստներն իրենց փոփոխուն կապիտալը հետ են ստանում փողային ձևով ե կարողանում են վերստին աշխատույժ գտնել: Հետո, II ստորաբաժանման կապիտալիստները մեկը-մյուսից գնում են անհրաժեշտ գոյամիջոցներ ե ձոխության առարկաներ 500 ընդհանուր արժեքով: II ստորաբաժանման կապի-

տալիստների միջև տեղի ունեցող այդ շրջանառությունների միջոցով իրացվում ե այդ ստորաբաժանման արդյունքի այն մասը, վորն արժեքը հավասար ե այդ ստորաբաժանման հավելյալ արժեքի ընդհանուր մասային (500 m): Այսպես, ուրեմն II ստորաբաժանման սահմաններում իրացվում ե սպառման առարկաների ձևով արդյունքի այն մասը, վորն իր արժեքով հավասար ե այդ ստորաբաժանման փոփոխուն կապիտալին ե հավելյալ արժեքին (500 v + 500 m):

Ակնառության համար փակ ֆիզուրաների մեջ առնենք արդյունքի այն մասերը, վորոնք իրացվում են յուրաքանչյուր ստորաբաժանման ներսում: այն ժամանակ մեր սխեման կնդունի հետևյալ տեսքը.—

$$I. \boxed{4000 c} + 1000 v + 1000 m = 6000$$

$$II. 2000 c + \boxed{500 v + 500 m} = 3000$$

I ստորաբաժանման մեջ մնաց արդյունքի չիրացված մաս 2000 արժեքով, վորն մեջ պարունակվում ե այդ ստորաբաժանման մեջ ծախսված փոփոխուն կապիտալի (1000 v) ե հավելյալ արժեքի (1000 m) վերարտադրված արժեքը: Արդյունքի այդ մասը կազմված ե արտադրամիջոցներից, դրա համար ել չի կարող գործադրվել I ստորաբաժանման վոչ բանվորների ե վոչ ել կապիտալիստների անձնական սպառման համար, վորովհետև ըստ իր բնական ձևի առհասարակ չի կարող ծառայել անձնական սպառման համար:

Մյուս կողմից I ստորաբաժանման արդյունքի այդ մասը չի կարող գործադրվել այդ ստորաբաժանման սահմաններում նմանապես վորպես հաստատուն կապիտալ, վորովհետև հաստատուն կապիտալն այստեղ արդեն փոխհատուցված ե առաջին մասի 4000 արդյունքի իրացման միջոցով, իսկ պարզ վերարտադրության ժամանակ I ստորաբաժանման համար պահանջվում ե միայն 4000-ի արտադրամիջոց: Հետևաբար I ստորաբաժանման արդյունքի այդ չիրացված մասը կարող ե իրացվել միայն II ստորաբաժանման սահմաններում: Նա դրա համար ել պետք ե կազմված լինի այնպիսի արտադրամիջոցներից, վորոնք ծառայում են սպառման առարկաների արտադրության համար:

II ստորաբաժանման մեջ մնաց արդյունքի չիրացված մի

մաս, 2000 արժեքի, վոր ներկայացնում ե այդ ստորաբաժանման մեջ ծախսված հաստատուն կապիտալը (2000 c): Նա կազմված ե սպառման առարկաներից և դրա համար ել չի կարող ծառայել այդ ստորաբաժանման հաստատուն կապիտալի իրային տարրերի հատուցման համար, վորովհետև իր իրային ձևով առհասարակ չի կարող ծառայել վորպես արտադրամիջոց: Մյուս կողմից II ստորաբաժանման արդյունքի այդ մասը չի կարող գործադրվել այդ ստորաբաժանման բանվորների և կապիտալիստների անձնական սպառման համար, վորովհետև այդ վերջիններն իրենց աշխատավարձն ու իրենց հավելյալ արժեքն արդեն իրացրել են իրենց ստորաբաժանման (500 v + 500 m) արդյունքի մյուս մասում: Հետևաբար II ստորաբաժանման արդյունքի այդ չիրացված մասը (2000) կարող ե իրացվել միայն I ստորաբաժանման սահմաններում:

Ակնհայտ ե, վոր հասարակական արդյունքի վորոշ մասերը կարող են իրացվել միայն հասարակական արտադրության յերկու ստորաբաժանումների միջև տեղի ունեցող փոխանակմամբ:

Հասարակական արդյունքի այդ մասերի իրացումը կարող ե տեղի ունենալ հետևյալ ձևով,— II ստորաբաժանման կապիտալիստներն I ստորաբաժանման կապիտալիստներից գնում են 2000-ի արտադրամիջոցները I ստորաբաժանման կապիտալիստներն ստացված փողից 1000 հավելյալ արժեքը ծախսում են II ստորաբաժանման կապիտալիստներից սպառման առարկաներ գնելու վրա: Իսկ մնացած 1000 նրանք վճարում են իրենց բանվորներին, վորպես նրանց հասնող աշխատավարձ: I ստորաբաժանման բանվորները II ստորաբաժանման կապիտալիստներից 1000-ի սպառման առարկաներ են գնում: Այսպիսով իրացվեցին I ստորաբաժանման մեջ 1000 v + 1000 m, իսկ II ստորաբաժանման մեջ 2000 c:

Հասարակական արդյունքի՝ ամբողջութամբ վերցրած՝ իրացման այդ ամբողջ պրոցոսը սխեմատիկորեն կարող ե պատկերվել հետևյալ կերպ (փակ ֆիգուրաները նշանակում են, վոր հասարակական արդյունքի դրանց մեջ առնված մասերի իրացումը տեղի չի ունենում տվյալ ստորաբաժանման սահմաններում, իսկ կապված ֆիգուրաները ցույց են տալիս, վոր իրացումը տեղի չի ունենում ստորաբաժանումների միջև կատարվող փոխանակությունում):—

$$I. \boxed{4000 c} + \boxed{1000 v + 1000 m} = 6000$$

$$II. \boxed{2000 c} + \boxed{500 v + 500 m} = 3000$$

Ուրեմն, հասարակական ամբողջ արդյունքի մեր յենթադրած արժեքային և առարկայական կազմի ժամանակ հնարավոր ե, վոր առանց մնացորդի լիովին իրացվեն հասարակական արդյունքի բոլոր մասերը: Մարքսը պարզ վերաբրտադրութային դեպքում իրացման իր սխեմայով պատկերել ե, թե հասարակութայն տարեկան արդյունքից ինչպես ե փոխհատուցվում ծախսված հաստատուն կապիտալը և թե ինչպես ե դրա հետ կապված բանվորների և կապիտալիստների սպառումը: Նա բաց ե արել և ակնառու կերպով ցույց տվել այն հասարակ, հիմնական դժերը, վորոնցով տեղի չի ունենում հասարակական կապիտալի շարժումն ամբողջութամբ վերցրած և նրա բաղկացուցիչ մասերով: Դրանով իսկ նա լուծել ե այն դժվարագույն հարցը, թե հասարակական արդյունքի արժեքի բաղկացուցիչ մասերի շարժումն ինչպես ե կապված նրա առարկայական բաղկացուցիչ մասերի շարժման հետ:

Պարզ վերաբրտադրութայն ժամանակ իրացման այդ բոլոր յե բարդ պայմանները և, հետևաբար, հենց պարզ վերաբրտադրութայն պայմանները, վորոնք մենք հենց նոր քննեցինք, կարելի չի հանգեցնել մի հասարակ, հիմնական պայմանի: Այսինքն, վորպես զի պարզ վերաբրտադրություն տեղի ունենա, անհրաժեշտ ե, վոր I ստորաբաժանման փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքի գումարը (I v + I m) հավասար լինի II ստորաբաժանման հիմնական կապիտալին (II C):

Դա բխում ե մեր քննած որինակից, ուր I v (1000) + I m (1000) = II c (2000): Այդ դեպքում կարող են իրացվել հասարակական արդյունքի բոլոր մասերը, հաստատուն կապիտալի փոխհատուցում ե տեղի ունենում՝ բոլոր անհատական ձեռնարկություններում, վերականգնվում ե ծախսված աշխատույժը և արտադրությունը կարող ե վերականգնվել նույն չափով, ինչպես առաջ, այսինքն հնարավոր ե պարզ վերաբրտադրությունը:

են վերցնել իրենց հավելյալ արժեքից: Կապիտալի որդանական կազմի անփոփոխութեան ժամանակ II ստորաբաժանման կապիտալիստները, իրենց հաստատուն կապիտալին 100 միացնելով, պետք է փոփոխուն կապիտալին 50 միացնեն: Նրանց փոփոխուն կապիտալի, յերկրորդ տարվա սկզբին կլինի 800: Իրենց 750 հավելյալ արժեքից այսպիսով նրանք կուտակուծ են 150 (100 միացնում են հաստատուն կապիտալին և 50—փոփոխունին): II ստորաբաժանման մեջ՝ ընդլայնված վերարտադրութեան համար՝ այդ ստորաբաժանման արյունքի արժեքը յերկրորդ տարվա սկզբին հետևաբար այսպես կբաշխվի. — 1600 c + 800 v + 600 m:

Մենք վերևում տեսանք, վոր հասարակական վողջարդյունքի կազմը առաջին տարվա վերջին այսպես եր.—

- I. 4000 c + 1000 v + 1000 m = 6000
- II. 1500 c + 750 v + 750 m = 3000

Այժմ մենք տեսնում ենք, վոր, վորպեսզի յերկու ստորաբաժանումներում ել ընդլայնված վերարտադրութուն սկսվի, հասարակական վողջարդյունքը յերկրորդ տարվա սկզբին պետք է հետևյալ կազմն ունենա.—

- I. 4400 c + 1100 v + 500 m = 6000
- II. 1600 c + 800 v + 600 m = 3000

Արդյունքի իրացումն հետևյալ կերպ տեղի կունենա:

I ստորաբաժանման կապիտալիստները մեկը մյուսից 4400-ի արտադրամիջոցներ կգնեն և այդպիսով կիրացնեն այդ ստորաբաժանման արդյունքի մի մասը: II ստորաբաժանման բանվորներն այդ ստորաբաժանման կապիտալիստներից 800-ի գոյամիջոց կգնեն, իսկ կապիտալիստները—մեկը մյուսից 600-ի գոյամիջոց կգնեն: Իսկ 1600-ի արտադրամիջոցների (1100 փոփոխուն կապիտալը + I ստորաբաժանման կապիտալիստների 500 սպառումը) փոխանակութունը 1600-ի սպառման միջոցների հետ (II ստորաբաժանման 1600 հաստատուն կապիտալը) տեղի կունենա I և II ստորաբաժանումներին—միջև:

Հետևաբար արտադրութեան նոր ցիկլը յերկու ստորաբաժանումներում ել կսկսվի ավելի մեծ կապիտալի հիման վրա, քան առաջին ցիկլում: Առաջին ցիկլում I ստորաբաժանման ամբողջ

կապիտալը կազմում եր 5000 (= 4000 c + 1000 v), այժմ նա կազմում է 5500 (= 4400 c + 1100 v): II ստորաբաժանման կապիտալը կազմում եր 2250 (= 1500 c + 750 v), իսկ յերկրորդ ցիկլի սկզբին այն հավասար է 2400-ի (= 1600 c + 800 v): Իսկ հասարակական ամբողջ կապիտալը, վորն առաջին ցիկլում կազմում եր 7250, այժմ կազմում է 7900:

Յեթե հավելյալ արժեքի նորման չի փոփոխվել, ապա յերկրորդ տարվա արդյունքը հետևյալ կազմը կունենա:

- I. 4400 c + 1100 v + 1100 m = 6600
- II. 1600 c + 800 v + 800 m = 3200

Արդյունքի այդ կազմի հիման վրա՝ նրա իրացումից հետո կսկսվի արտադրութեան յերրորդ ցիկլը և այլն:

Հասարակական արդյունքի իրացման ու վերաբաշխման քննարկի վերաբերյալ և հասարակական կապիտալի շրջանառութեան մարջայան սխեմաները պատկերում են, թե պարզ և ընդլայնված վերարտադրութեան ժամանակ ինչպես են փոխհատուցվում կապիտալի տարրերը, թե դրա հետ ինչպես է կապված բանվորների և կապիտալիստների սպառումը և թե ինչպես է զուգորդվում հասարակական արդյունքի արժեքի բաղկացուցիչ մասերի շարժումը: Նրա առարկայական բաղադրիչ մասերի շարժման հետ:

Հասարակական կապիտալի շարժումը վերցրած ամբողջութեամբ, վորն դասավորվում է միմյանց հետ հյուսվող բազմաթիվ անհատական կապիտալների շարժումից, շատ բարդ և խճճված պրոցես է հանդիսանում: Մարքսը հետևյալ կերպ է բնութագրում այդ պրոցեսի բարդութունը.—

«Բանի դեռ մենք տարեկան ամբողջ արտադրանքի ֆոնդն ենք աչքի առաջ ունենում, վերարտադրութեան տարեկան պրոցեսը հեշտ հասկանալի չի: Բայց տարեկան արտադրանքի բաղադրամասերը պետք է ապրանքաշուկա բերվեն, և ահա այստեղ սկսվում է դժվարութունը: Առանձին կապիտալների ու անձնական յեկամուտների շարժումները խաչաձևվում, խառնվում, կորչում են ընդհանրական մի տեղաշարժի—հասարակական հարստութեան շրջանառութեան—մեջ, վորը շփոթեցնում է հայացութեան շրջանառութեանը սաստիկ խճճված խնդիրներ է հանձնում և հետազոտութեանը սաստիկ խճճված խնդիրներ է հանձնում (Մարքս, կապիտալ, հ. I, էջ 558 հայ.):»

Բուրժուական տնտեսագիտիկները միանգամայն անդոր են

ըմբռնելու այդ պրոցեսը: Այդ չեն կարողացել անել նույնիսկ նրանցից լավագույնները, վորպիսիք են Սմեոն ու Ռիկարդոն, վորոնք խոստովանում էին, վոր ապրանքների արժեքն ստեղծվում է աշխատանքով: Չկարողացան նրա համար, վոր չէին հասկանում, թե այդ աշխատանքն առանձնահատուկ, յերկակի բնույթ ունի, վորը հատուկ է միայն արտադրության ապրանք-կապիտալիստական յեղանակին, նրանք չէին տեսնում այդ վերջինի հակասութունները: Յե՛վ հատկապես դրա պատճառով նրանց համար «գիտողության առարկան ըստ առ ըստ թագնվում է տեսողությունից»:

Մարքսը կապիտալիստական արտադրության հակասութունները վերլուծության հիման վրա բաց արեց հասարակական արդյունքի յերկակի բնույթն ըստ նրա արժեքի և նատուրալ ձևի և ցույց տվեց, թե ինչպես է տեղի ունենում արդյունքի իրացումն ու կապիտալի վերարտադրությունը:

Իր ուսմունքով՝ ապրանք արտադրող աշխատանքի յերկակի բնույթի մասին, այդ աշխատանքի սպեցիֆիկ պատմական բնույթի մասին, Մարքսը բանալի տվեց հասկանալու վոր կապիտալիզմի ժամանակ «... շարժումները խաչաձևում, խառնվում, կորչում են ընդհանրական մի տեղաշարժի—հասարակական հարստության շրջանառության մեջ», նա ծայրահեղ պարզութուն մտցրեց կապիտալիզմի ամենախճճված և մութ յերևույթների մեջ, լուծեց ամենադժվարին, անլուծելի թվացող հարցերը: Դա նշանակում է, վոր հասարակական կապիտալի վերարտադրության և ցրանառության մարխայան բեռիան աօխտսանքի յերկակի բնույթի մասին՝ նրա ուսմունքի ուղղակի կիրառումն է, արժեքի և հավելյալ արժեքի նրա բեռիայի հետագա զարգացումը:

Հատկապես այդ հանգամանքը պայծառ լույս է նսրում վերարտադրության մարքոյան թեորիայի մի կողմի վրա ևս, բաց է անում այդ թեորիայի խոր իմաստը, վորն առաջնակարգ նշանակութուն ունի կապիտալիզմի հակառակությունները հասկանալու համար:

Կապիտալիզմի ջատագավորները պնդուս են, վոր կապիտալիզմի ժամանակ միանգամայն հնարավոր է հասարակական, ինչպես պարզ, այնպես ել ընդլայնված վերարտադրության անխափան ընթացքը: Նրանցից վոմանք, ինչպես բուրժուական տընտեսագետ Տուգան-Բարանովսկին և սոցիալ-ֆաշիստ Ոտտո Բաուերը, պնդում են, վոր Մարքսն իր սխեմաներում իբր թե ապացուցել է հասարակական արտադրության բոլոր մասերի լիակա-

տար համաձայնեցվածության առկայությունը կապիտալիզմի ժամանակ, ինչ վոր ներդաշնակության և հավասարակշռության առկայությունը: Այդ բոլոր պնդումները վոչ այլ ինչ են, յեթե վոչ Մարքսի թեորիան կոպտաբար և գիտակցաբար խեղաթյուրելու փորձ, վորպեսզի այդ դրոշի ներքո գուճազարդեն և թաքցնեն այն խոր հակասութունները, վորոնք ջլատում են կապիտալիզմը, և այն պատկերացնեն վորպես կազմակերպված հասարակական տնտեսութուն, վորպես «կազմակերպված կապիտալիզմ»:

Մենք արդեն յերկրորդ գլխում ցույց տվինք, վոր արժեքի որենքն ապրանքային արտադրության հավասարակշռության որենքը չէ, վոր արժեքն արտադրության ապրանք-կապիտալիստական յեղանակի հակասութունների արտահայտությունն է: Դրա համար Մարքսի վերարտադրության թեորիան, վորը նրա արժեքի թեորիայի հետագա զարգացումն է հանդիսանում, վոչ միայն չի ապացուցում կապիտալիստական վերարտադրության ինչ վոր ներդաշնակութունը, այլ ընդհակառակն, բաց է անում վերարտադրության և հասարակական կապիտալի ամբողջությամբ վերցրած շարժման խոր հասարակական բնույթը:

Մարքսն իր սխեմաներով միայն պատկերում է այն պայմանները, վորոնց ժամանակ հնարավոր են հասարակական արդյունքի իրացումը և վերարտադրությունը (ինչպես պարզ, այնպես ել ընդլայնված) կապիտալիզմի ժամանակ: Սակայն նա յերբեք ել չի ապացուցում, վոր այդ հնարավորությունը միշտ իրականություն է վերածվում: Այն բանից, վոր վորոշ պայմաններում հնարավոր է հասարակական կապիտալի վերարտադրությունը, իսկի ել չի հետևում, վոր այդ պայմանները միշտ առկա յեն:

Անխափան վերարտադրության պայմաններ են.—1) հասարակական արդյունքի վորոշ արժեքային և իրային կազմը և 2) հասարակական արդյունքի բոլոր բաղկացուցիչ մասերի ինչպես արժեքի, այնպես ել սպառողական արժեքի իրացումը: Բայց նույնիսկ այն դեպքում, յեթե հասարակական արդյունքի վերարտադրության համար անհրաժեշտ կազմն առկա յե, դեռևս չի ապացուցված նրա լիակատար իրացումը: Մենք տեսանք, վոր այդ հովված նրա լիակատար իրացումը յերկու ստորաբաժանումների կալիտալիստների ու բանվորների միջև կատարվող շրջանառության մի շարք բարդ պրոցեսների միջոցով: Հասարակական արդյունքի վող շրջանառությունը դասավորվում է առքի ու վաճառքի բազմաթիվ ակտերով, վորոնք կատարվում են մեկը մյուսից անկախ, սակայն հյուսվում են միմյանց հետ: Հենց պրոցեսի բազմաբար-

դուժյունը բազմաթիվ հիմքեր ե ընձեռում նրա նորմալ ընթացքի խախտման համար» (Մարտո, Կապիտալ, հ. II, էջ 363, ռուս.):

Սակայն դա դեռ բոլորը չէ: Այն բանից, վոր վերարտադրութեան համար հասարակական արդյունքի վորոշ կազմ ե անհրաժեշտ, դեռ չի հետևում, վոր այդ կազմն իրապես միշտ կա: Ավելի շուտ հակառակը—կապիտալիզմին յուրահատուկ արտադրութեան անարխիան հանգեցնում ե այն բանին, վոր հասարակական արդյունքն արտադրութեան սահուն ընթացքի համար անհրաժեշտ կազմը չունի: Վորպեսզի այդպիսի կազմն առկա լինի, արտադրութեան պլանային կազմակերպութեան պետք ե լինի ամբողջ հասարակութեան մեջ, իսկ դա հակասում ե կապիտալիզմի բուն եյուրթեանը, վորն արտադրութեան հասարակական բնույթի ե կապիտալիստական յուրացման հակասութեանն ե: Կապիտալիզմի այդ հիմնական հակասութեանն անհնարին ե դարձնում կապիտալիստական վերարտադրութեան սահուն ե անխափան ընթացքը ե պայմանավորում ե նրա հակասական բնույթը:

Կապիտալիստական վերարտադրութեան ե նրա հակասութեանները հարցը—քաղաքատնտեսութեան կենտրոնական հարցերից մեկն ե: Ինչպես արդեն ցույց ե տրվել VI գլխում, կապիտալիստական վերարտադրութեանը սրում ե կապիտալիզմի հակասութեանները ե նրա կործանման պայմաններն ու սոցիալիստական կարգի նախադրյալներն ե պատրաստում: Կապիտալիստական վերարտադրութեան հակասութեանները հարցն այսպիսով խոշորագույն նշանակութեուն ունի պրոլետարիատի հեղափոխական պայքարի համար՝ ընդդեմ կապիտալիզմի:

Վերարտադրութեան մարքայան թեորիայի հեղափոխական բովանդակութեունը լիովին բաց ե արվել ու զարգացվել ե Լենինի կողմից դեռևս անցյալ դարի վերջում, յերբ Ռուսաստանում դեռ նոր եր ձևակերպվում հեղափոխական բանվորական ինքնուրույն շարժումը:

Բուրժուական ինտելիգենցիայի շարքերում յերևացին «գիտնականներ» (Տուզան-Բարանովսկի, Ստրուվե, Բուլգակով), այսպես կոչված «լեզալ մարքսիստներ», վորոնք պնդում եյին, վոր վերարտադրութեան մարքայան սխեմաներից, իբր թե, բղխում ե, վոր կապիտալիզմը հակասութեուններից զուրկ միակ հառաջադիմական (պրոգրեսիվ) կարգն ե, վորն կոչված ե անսահմանորեն զարգացնելու հասարակութեան արտադրողական ուժերը: Նրանք փորձում եյին բանվորական շարժումը հպատա-

կեցնել բուրժուազիայի շահերին ե այն զրկել ինքնուրույնութեունից: Նրանց պոչից քարշ եյին գալիս մենշևիկները:

Մյուս կողմից նարդնիկները, այդ մանր բուրժուական քուցիալիստները, մասամբ ընդունում եյին կապիտալիզմի հակասութեունները, սակայն չեյին հասկանում նրանց բնույթը: Նրանք պնդում եյին, վոր կապիտալիզմի հակասութեուններից բղխում ե նրա զարգացման անհնարինութեունը, վոր կապիտալիզմը մանր օպրանքային արտադրութեան համեմատութեամբ մի քայլ նահանջ ե, վոր իսկական սոցիալիզմը մանր օպրանքային արտադրութեան պահպանման մեջն ե: Մանր բուրժուազիայի այդ զաղափարախոսները բանվոր դասակարգին նկատի ունեյին վորպես ոժանդակ ուժ գյուղացիական շարժման համար:

Բանվոր դասակարգին ինքնուրույն հեղափոխական ուղուց ծռելու այդ բոլոր փորձերի դեմ հանդես յեկավ Լենինը: Այն գլխավոր ե ուժեղագույն դեմքերից մեկը, վոր Լենինն ուղղեց պրոլետարիատի բացահայտ ե թաքուն թշնամիների դեմ, կապիտալիստական վերարտադրութեան մարքայան թեորիան եր: Ընդվորում Լենինը վոչ միայն բաց արեց Մարքսի թեորիայի վողջ հեղափոխական բովանդակութեունը, այլ ե այն զարգացրեց ե նոր բովանդակութեամբ հարստացրեց:

Լենինը մանրամասնաբար մշակեց ե կոնկրետացրեց կապիտալիզմի զարգացման ուղիները հարցը, այն, թե ինչ ձևերով ե տեղի ունենում կապիտալիզմի հիմնական հակասութեունը: Այդ հիման վրա նա բաց արեց կապիտալիզմի զարգացման ուղիներն Ռուսաստանում ե ի հակադրութեուն նարդնիկները, ցույց տվեց, վոր Ռուսաստանում կապիտալիզմի արագ զարգացում ե տեղի ունենում, վոր այդ զարգացման ընթացքում աճում ե համախմբվում ե հեղափոխական բանվոր դասակարգը—դեկավար հեղափոխական ուժը՝ ինքնակալութեան ե ֆեոդալիզմի մնացորդների դեմ մղվող պայքարում:

Լենինը ցույց տվեց, վոր Ռուսաստանում սպասվելիք հեղափոխութեունը պետք ե վերջ դնի ցարիզմին, վորպեսզի անմիջապես անցնի հաջորդ ետապին—կապիտալիզմի տապալմանը, պրոլետարական հեղափոխութեանը, վորն համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան սկիզբն ե հանդիսանում:

Կապիտալիստական վերարտադրութեան հակասութեունների ե Լենինի կողմից վերարտադրութեան մարքայան թեորիայի զարգացման հարցը մենք կքննենք այն պայքարի կապակցութեամբ,

վոր Լենինը մղում եր մանր բուրժուական սոցիալիստների և բուրժական ջատագովների դեմ:

3. ԿՍՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐՍՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կուսակցության հեռագրում բյաթ յեվ ցեբիս օուկայի հարցը

Մանր բուրժուական սոցիալիզմի նախահայրը, վորի թեորիան ամբողջութամբ յուրացրեն ուսական նարողնիկները, շվեյցարական տնտեսագետ Սիսմոնդիներ, վորը պնդում եր, թե կապիտալիզմի ժամանակն արտադրութունն սպառումից առաջ ե անցնում բանվորների սպառման ցածր մակարդակի պատճառով, դրա համար ել հավելորդային արդյունք ե գոյանում, վորն չի կարող սպառումն գտնել: Կապիտալիզմը քայքայում ե մանր արտադրողներին և զրանով իսկ նեղացնում ե իր սպառման շուկան: Դրա համար ել կուտակումը հնարավոր ե միայն արտաքին շուկայի առկայութան դեպքում. և վորովհետև համաշխարհային արենայում նոր կապիտալիստական յերկիրներ են հանդես գալիս, ապա յուրաքանչյուր յերկիրն ավելի ու ավելի դժվար ե դառնում արտաքին շուկա գտնել: Սիսմոնդիի այդ թեորիան յուրացրին ուսական նարողնիկները, վորոնք պնդում եյին, վոր ուսաստանում, վորն ուշ ե համաշխարհային շուկա դուրս յեկել, կապիտալիզմի զարգացումն անհնարին ե:

Սմենից առաջ քննենք մանր արտադրողների քայքայման հարցը: Ճիշտ ե, վոր նա կրճատում ե կապիտալիզմի շուկան: Մանր գյուղացին, վորն իր արդյունքի միայն մի մասն ե շուկա հանում, իսկ մնացած մասն ինքն ե սպառում, վորն իր սպառած առարկաների մեծ մասն ինքն ե արտադրում (հաց, կտավ, ևայլ), ավելի քիչ ե ոժտնդակում կապիտալիստական շուկայի ընդլայնմանը, քան քայքայված մանր գյուղացին: Այդ վերջինը հարկադրված ե իր համարյա ամբողջ բերքը վաճառելու, վորպեսզի վճարի պարտքերն ու հարկերը, իսկ հետո հարկադրված ե շուկայից հաց գնել: Նա հարկադրված ե վաճառելու իր աշխատույժը—բատրակութուն անել կամ քաղաք գնալ սեղոնային աշխատանքի: Նա շատ ավելի քիչ չափով ե զբաղվում տնային տնտեսութամբ և սպառման առարկաները գնում ե: Մանր արտադրողի քայքայումը, այսպիսով, ընդլայնում ե սպառման առարկաների շուկան:

Մյուս կողմից, մանր արտադրողների աննշան մասը դառնում ե կապիտալիստական ձեռնարկատեր, վորոնք արտադրամիջոցների մեծացրած պահանջարկ են առաջադրում: Դրա հետև-

անքով ընդլայնվում ե նաև արտադրամիջոցների սպառման շուկան:

Կապիտալիստական շուկայի ընդլայնումը մանր արտադրողներին քայքայման միջոցով տեղի յե ունենում մանր արտադրողների ճնշող մասի դրության վատթարացման հաշվին: Բայց նա այլ կերպ ել լինել չի կարող կապիտալիզմի ժամանակ: Յերբ մանր բուրժուական սոցիալիստները մանր արտադրողների քայքայման փաստից յեղրակացնում են, վոր կրճատվում ե կապիտալիզմի շուկան և քարոզում են խոշոր կապիտալիստական արտադրութունից վերադարձ դեպի մանր արտադրութայնը, նրանք չեն հասկանում կապիտալիզմի բուն] եյությունը, ինչպես նաև չեն հասկանում այն բանը, վոր կապիտալիզմը հենց ծնվում ե մանր արտադրութունից: «Կապիտալիզմի զարգացումն ընթանում ե աղբանքային տնտեսութայն զարգացման դուզընթաց, և այն չափով, վորչափով տնային արտադրութայնը տեղը զիջում ե վաճառքի արտադրութայնը, իսկ տնայնագործը տեղը զիջում ե ֆաբրիկային—շուկա յե գոյանում կապիտալի համար» (Լենին, հ. 11, եջ 14. ուս.):

Այժմ քննենք Սիսմոնդու յերկրորդ (զլեռավոր) պատճառաբանութունը, այսինքն այն, վոր կապիտալի շուկան նեղանում ե այն բանի պատճառով, վոր արտադրութունն սպառումից առաջ ե անցնում: Ըստ վորում Սիսմոնդին յելակետ ե ընդունում վերելվում մեր քննած Սմիտի թեորիան, թե հասարակական արդյունքի արժեքը բաժանվում ե միայն փոփոխուն կապիտալի և հավելյալ արժեքի վրա և վոր հասարակական ամբողջ արդյունքը պետք ե սպառվի վորպես յեկամուտ: Նա սրանից անում ե այն յեղրասկացութայնը, վոր արտադրութայնը պետք ե համապատասխանի սպառմանը: Իսկ քանի վոր իրականութայն մեջ սպառումը հետ ե մնում արտադրութայնից, ապա, ըստ Սիսմոնդու, պետք ե մշտական հավելուրդային արդյունք գոյանա, վորը չի կարող վաճառվել կապիտալիստների կողմից: Դրա համար ել, ըստ Սիսմոնդու, կուտակումն անհնարին ե:

Ընդլայնված վերարտադրութայն սխեմայից (տես եջ 42 յերևում ե, վոր արտադրամիջոցների արտադրութունն ավելի արագ ե անում սպառման առարկաների արտադրութունից: Ըստ վորում մենք յենթադրում եյինք կապիտալի անփոփոխ որդանահան կազմ: Բայց իրականութայն մեջ, կապիտալիզմի զարգացման ընթացքում, հաստատուն կապիտալն ավելի արագ ե անում, քան փոփոխունը, վորովհետև կապիտալի որդանահան կազմի անը կապիտալիզմի զարգացման որենքն ե: Կապիտալի

որգանական կազմն աճում և հասարակական արտադրութեան ըստ ճշուղիքում: Յե՛վ վորովհետև հաստատուն կապիտալի առարկայական տարրերը—արտադրամիջոցները—արտադրվում են միայն առաջին ստորաբաժանման կողմից, ապա այդ վերջինը միշտ ավելի ու ավելի աճող չափով արտադրամիջոցներ պետք և արտադրի վո՛չ միայն իրեն համար, այլ և II ստորաբաժանման համար: Հասարակական արտադրութեան I ստորաբաժանումը II-ից ավելի արագ և աճում:

Հաստատուն կապիտալի, նրա կուտակման աճը նշանակում է, վոր աճում է արտադրամիջոցների—I ստորաբաժանման արդյունքները—սպառումը: Իսկ արտադրամիջոցների սպառման աճը նշանակում է, վոր աճում է կապիտալիզմի շուկան: Արտադրութեան ընդլայնումը, կապիտալի կուտակումը հենց շուկա յի ստեղծում արտադրամիջոցների սպառման համար: Բայց արտադրութեան ընդլայնումը տանում է դեպի բանվորների սպառման վորոշ աճի: Արտադրամիջոցների արտադրութունը մեծացնելու համար անհրաժեշտ է բանվորներին ներդրավել դեպի I ստորաբաժանումը: Իսկ այդ ավելադեր բանվորները սպառման առարկաների՝ ավելադեր պահանջարկ կներկայացնեն: Ընդլայնված վերարտադրութեան մեր սխեմայում I ստորաբաժանման բանվորների սպառումը մեծացավ 100-ով: Իսկ սպառման առարկաների արտադրութեան աճ է առաջ բերում II ստորաբաժանման մեջ և այդ ստորաբաժանման բանվորների 50-ի ավելադեր պահանջարկը: Այսպիսով արտադրութեան հետևից անմիջապես դարձանում է սպառումը: Կապիտալիզմի զարգացումը գլխավորապես տեղի յի ունենում արտադրամիջոցների արտադրության անման միջոցով:

Արտադրությունն ու սպառումը կապիտալիզմի ժամանակ

Թեև սպառման վորոշ ընդլայնումը հանդիսանում է արտադրութեան ընդլայնման հետևանքը, բայց մասսաների սպառումը

այնուամենայնիվ չի համապատասխանում արտադրութեան աճին և հետ է մնում նրանից, վորովհետև բանվոր դասակարգի բացարձակ և հարաբերական աղքատացումը կապիտալիզմի որենքն է:

Հասարակական կապիտալի վորոշ արդյունքի մեջ սպառման առարկաների բաժինն ընկնում է: Միսմոռին և նրա հետևորդներն այստեղից անում են այն յեղրակացութունը, վոր կապիտալիզմը չի կարող զարգանար նրանք չեն տեսնում, վոր կապիտալիզմի զարգացումը կարող է տեղի ունենալ միայն այդ ուղիով:

Արտադրութեան (հետևաբար նաև ներքին շուկայի) զար-

գացումն առավելապես ի հաշիվ արտադրամիջոցների, պարագուհա-յին¹ և թվում և իրանից, անկասկած, հակասութուն է ներկայացնում: Դա իսկական «արտադրութուն է արտադրութեան համար»,—արտադրութեան ընդլայնումը առանց սպառման համապատասխան ընդլայնման: Սակայն դա վո՛չ թե դուրերնայի² այլ իրական կյանքի հակասութունն է դա իսկապես այնպիսի ռեալիտետում է, վորն համապատասխանում է կապիտալիզմի հենց բնությանը և հասարակական տնտեսութեան այդ սխեմայի մնացած հակասութուններին: Հատկապես արտադրության այդ բնդլայնումն առանց սպառման համապատասխան բնդլայնմանը՝ համապատասխանում է կապիտալիզմի պատմական միսխային յե՛վ նրա հասարակական ստուգանքային.—առաջինը հասարակության արտադրողական ուժերի զարգացումն է, յերկրորդը, բացառում է այդ տեղի-նիկական միանումների ուժիկացիան բնակչության զանգվածի կողմից» (Լենին, հ. III, էջ 31, ուս. ընդգծումն իմն է.—Լ. Ս.:

Մանր բուրժուական սոցիալիստները կապիտալիզմի ժամանակ արտադրութեան և սպառման միջև հավասարութեան են տեսնում: Սակայն դրանից նրանք անում են այն յեղրակացութունը, վոր կապիտալիստական հասարակութեան շրջանակներում պետք է սպառում չգտնող ապրանքների մտանքն ավելցուկ գոյութուն ունենա³, վոր կապիտալիստական կուտակումն առանց արտաքին շուկայի անհնարին է, Բայց ըստ էյութեան դա նշանակում է կապիտալիզմի անհնարինութունը, վորովհետև չի վոր «արտաքին շուկայում» էլ մանր արտադրողների քայքայում, բանվոր դասակարգի մասսաների աղքատացում է տեղի ունենում, այնտեղ էլ արտադրութունը պետք է առաջ անցնի սպառումից: Վորքան վոր կապիտալիզմը համենայն դեպս իրական փաստ է, վորը չի կարելի ժխտել, մանր բուրժուական սոցիալիստներն այն հայտարարում են ինչ վոր այլանդակ յերե-վոյթ, շեղումն մարդկային հասարակութեան զարգացման ճոր-մալը ընթացքից. նրանք վորոշում են այն դժբախտութունների մասին, վորոնք կապիտալիզմը բերում է մասսաներին, և նկարագրում են մանր ապրանքային արտադրութեան բարձրված և բարձր կարգի պատկերները, վորի համեմատութեամբ կապիտա-

¹ Անհավանական.— Լ. Ս.:

² Թեորիայի.— Լ. Ս.:

³ Ժամանակ առ ժամանակ այդպիսի ավելցուկ ինարիկ, պետք է անխուսափելիորեն գոյանա (ձգնաժամերը): Դրա մասին մենք կխոսենք ներքևում:

լիզմը մի քայլ նահանջ եւ ժարդկային հասարակութեան զարգացման մեջ:

Մանր բուրժուական սոցիալիստները կանգնած են մանր արտադրութեան պահպանման տեսակետի վրա, նրանք մանր արտադրողներին գաղափարախոսներ են և դրա համար ել չեն կարողանում հանկանալ, վոր կապիտալիզմը մարդկային պատմութեան անհրաժեշտ էտապ է, վոր նա զարգացնում է հասարակութեան արտադրողական ուժերը և մինչև իր զարգացման վորոշ աստիճանը, մինչև իր իմպերիալիզմի վերածման արտադրութեան առաջադիմական (պրոգրեսիվ) յեղանակ է հանդիսանում, վորովհետև նա զարգացնում է արտադրողական ուժերը և հեղափոխական բանվոր դասակարգ է ստեղծում, վորն կոչված է վերջ դնելու մասսաների ամեն տեսակ շահագործման ու թշվառութեանը:

Մանր բուրժուական սոցիալիստները թաքնվում են իրականութունից և մասսաներին ջնեցնում են հեքիաթներ պատմելով մանր արտադրութեան իդեալական կարգի մասին, վորն իրականութեան մեջ հետամնացութեան և վայրենութեան կարգ է նրանք չեն տեսնում, վոր հենց այդ մանր արտադրութունից անխուսափելիորեն կապիտալիզմ է աճում և վոր կապիտալիզմին իսկապես վերջ տալու համար հարկավոր է վոչ թե հետ դնալ այլ առաջ: Իրա համար ել Մարքսն ասում էր, վոր մանր բուրժուական սոցիալիստներն իրականութեան մեջ ռեալիզմ են դնել, վորանք թաքնվում են իրականութունից և անուրջներ են կառուցում անցյալին վերադառնալու մասին, վորը նրանք իդեալականացնում են:

«Կապիտալիզմի ուժանակի դատավորներին տարբերութեանը մյուսներին¹ առհասարակ «միայն» «տեսակետի մեջ» եւ «միայն» այն բանի մեջ է, վոր վրամանք դատում են հետևից, իսկ մյուսները—առջևից, վրամանք այն կարգի տեսակետից, վորն կապիտալիզմի կողմից քայքայվում է, մյուսներն այն բանի տեսակետից, վորն կապիտալիզմի կողմից ստեղծվում է» (Լենին, հ. II, էջ 34 ռուս.):

Կապիտալիստական ստրկութեանից դուրս գալու յեւթը կապիտալիզմի զարգացման «արգելակումը» և մանր արտադրութեան վերադառնալը չեն, ինչպես այդ պահանջում են մանր բուրժուական սոցիալիստները:

¹ Լենինն այստեղ նկատի ունի հեղափոխական մարքսիստներին:

ժուական «սոցիալիստները»: Յեւթը կապիտալիզմի հակասութեաններին զարգացումն է, վորովհետև «վորջան ավելի չի դարգանում այդ հակասութեանը (արտադրութեան հասարակական բնույթի և յուրացման անհատական բնույթի միջև.—Լ. Ս.), այն քան ավելի հեշտանում է նրանից դուրս գալը»: (Լենին, հ. II, էջ 40. ռուս.): Հեշտ է նրա համար, վոր այդ հակասութեան զարգացումը նշանակում է, մի կողմից, հասարակական խոշոր արտադրութեան աճը, վորն ավելի ու ավելի անհամապատասխան է յե դառնում կապիտալիստական յուրացման հետ, իսկ մյուս կողմից,—բանվոր դասակարգի, նրա գիտակցութեան, կազմակերպվածութեան և կապիտալի ճնշումից վրդովվելու աճը, հեղափոխական ուժի աճը, վորն կոչված է տապալելու կապիտալիզմը:

Սիւմոնդու թեորիտիկական դիրքերին ըստ հյուսթեան հարում է նաև Ռոդա Լուքսեմբուրգը, թեև նա յերբեք ել մանր բուրժուական սոցիալիզմի կողմնակից չի հանդիսացել, այլ ընդհակառակն քննադատել է և Սիւմոնդուն և նարողնիկներին:

Ռ. Լուքսեմբուրգը վերաբարտութեան մարքսյան թեորիստներին դեմ դուրս յեկավ այն պնդումով, վոր միայն կապիտալիստներից և պրոլետարներից կազմված հասարակութեան մեջ կապիտալի կուտակումն ընդհանրապես անհնարին է: Ռ. Լուքսեմբուրգը պնդում էր, վոր ընդլայնված վերաբարտութեան մարքսյան սխեման (տես էջ 42). կուտակման հնարավորութեանները ցույց չի տալիս, վորովհետև հասարակական արդյունքի այն մասը, վորը ներկայացնում է կապիտալի վերածված հավելյալ արժեքը (I ստորաբաժանման 500 հավելյալ արժեքը և II ստորաբաժանման 150 հավելյալ արժեքը), չի կարող գնվել կապիտալիստների կողմից մեկը-մյուսից, վոչ ել բանվորների կողմից՝ կապիտալիստների մոտից: Կապիտալիստների կողմից հավելյալ արդյունքի մի մասի վաճառքը մեկը մյուսին, Ռ. Լուքսեմբուրգի կարծիքով չի նշանակում նրանց կապիտալի մեծացումը, իսկ նրանց կողմից հավելյալ արդյունքի մի մասի վաճառքը բանվորներին ըստ հյուսթեան նշանակում է, վոր կապիտալիստները հավելյալ արժեքը նվիրում են բանվորներին: Հավելյալ արդյունքի կուտակվելիք մասը կարող է գնել, իբրև, միայն վոչ կապիտալիստական մանր արտադրողները, այսպես կոչված «յերբորդ դեմքերը»:

Կապիտալի կուտակման մարքսյան թեորիստի իր ջննա-

դատութեան մեջ ըստ եյութեան նրա կողմից չհասկացված Ռ. Լուքսեմբուրգը մի շարք խոշոր սխալներ ե կատարել: Առաջինն ա միանգամայն չի հասկացել արտադրողական սպառման դերը— կապիտալիստները կողմից արտադրամիջոցների սպառումը վորպես հաստատուն կապիտալ: Հավելյալ արդյունքի մի մասը, վորը գոյութիւն ունի արտադրամիջոցների ձեռք, միացնելով հաստատուն կապիտալին, (սխեմայում I ստորաբաժանման մեջ 400 և II ստորաբաժանման մեջ 100), կապիտալիստները չեն վոչընչացնում հավելյալ արժեքի այդ մասը և այն վոչ վորքի չեն նվիրում, այլ այն վերածում են կապիտալի, բանվորներից հավելյալ աշխատանք դուրս ծծելու միջոցիւ Հետևաբար, կապիտալիստները համար իմաստ կա մեկը մյուսից գնելու այդ ավելորդ արտադրամիջոցները: Հետո, սպառման միջոցների ձեռք գոյութիւն ունեցող հավելյալ արդյունքի մասը միացնելով իրենց փոփոխուն կապիտալին (սխեմայում I ստորաբաժանման մեջ 100 և II ստորաբաժանման մեջ 50), կապիտալիստները նորից այդ չեն նվիրում բանվորներին, այլ գնում են հավելյալ արժեքի բուն աղբյուրը— աշխատույժը: Այսպիսով, կապիտալիստները, «յերբորդ դեմքերի» բացակայութեան ժամանակն ել կուտակելու հնարավորութիւն ունեն:

Յերկրորդ, ինչ են ներկայացնում այդ «յերբորդ դեմքերը»: Դրանք մանր, վոչ կապիտալիստական հասարակ ապրանք արտադրողներ են, սխմունդիական—նարոնիկական «արտաքին շուկան»: Յեւ հենց դրանց պետք ե կապիտալիստները վաճառին արդյունքի այն մասը, վորն իր մեջ պարունակում ե կուտակման համար նշանակված և արտադրամիջոցների նատուրալ ձեռք գոյութիւն ունեցող հավելյալ արժեքը: Բայց ինչպիսի արտադրամիջոցներ: Խոշոր մեքենաներ, զանազան տեսակի հումք և ոժանգակ նյութեր, վորոնք կարող են գործադրվել միայն կապիտալիստական ֆաբրիկայում:

Սակայն յենթադրենք անհնարավորը,— վոր մանր արտադրողները գնել են հասարակական կապիտալի արդյունքների այդ մասը և այդպիսով կապիտալիստները հաշտութեամբ փողի յեն վերածել կուտակման գնալիք հավելյալ արժեքը: Սակայն այդ դեպքում նրանք վմրտեղից կարող են գնել կուտակման համար, այսինքն արտադրութեան ընդլայնման համար, անհրաժեշտ արտադրամիջոցները: Չե՞ վոր նրանք դրանք ծախսել են «յերբորդ դեմքերին»: Նշանակում ե, վոր նրանք դրանք պետք ե հետ գնին հենց նույն «յերբորդ դեմքերից»: Սակայն նրանք կարող են նույն

հաշտութեամբ, այդ արտադրամիջոցները չվաճառելով «յերբորդ դեմքերին», գնել մեկը մյուսից: «Յերբորդ» դեմքերն այստեղ միանգամայն ավելորդ են:

Ռ. Լուքսեմբուրգի կուտակման այդ սխալ թեորիայի հետ ամենաանբար կերպով կապված ե նրա խոշորագույն սխալը հեղափոխութեան շարժիչ ուժերի հարցում:

Հեղափոխութեան հիմնական հարցերից մեկը պրոլետարիատի դեպի գյուղացիութիւնն ունեցած վերաբերմունքի հարցն ե: 1905 թ. բուրժուական-դեմոկրատական հեղափոխութեան մեջ պրոլետարիատի հեգեմոնիայի և այդ հեղափոխութեան պրոլետարականի վերածելու մասին բոլշևիկյան-լենինյան գծին հակառակ Ռոզա Լուքսեմբուրգը մենշևիկ Պարվուսի հետ ստեղծեց «պերմանենտ հեղափոխութեան» թեորիան, վորին միացավ Տրոցկին, վորը Պարվուսի հետ միասին այդ թեորիան առաջ քաշեց բոլշևիկի դեմ մղած իր պայքարում: Այդ թեորիայի եյութիւնն այն ե, վոր իբր պրոլետարիատի և գյուղացիութեան միջև անհաղթահարելի հակասութիւններ գոյութիւն ունեն, վոր գյուղացիութիւնն իր զանգվածով հակահեղափոխական ե և միշտ բուրժուալիայի կողմը կլինի ընդդեմ պրոլետարիատի:

Միանգամայն պարզ ե, վոր Ռ. Լուքսեմբուրգի այդ քաղաքական դիժը սերտորեն կապված ե կապիտալի կուտակման նրա թեորիայի հետ: Բանի վոր կապիտալի կուտակումը, Ռ. Լուքսեմբուրգի կարծիքով, հնարավոր ե միայն «յերբորդ դեմքերի» (գյուղացիութեան) գոյութեան շնորհիվ, ապա գյուղացիութիւնն արգելադրում ե, հետաձգում ե կապիտալիզմի կործանումը, պրոլետարիատին թշնամի ուժ ե հանդիսանում: Դրա համար ել պրոլետարիատը պետք ե ցանկանա գյուղացիութեան տրազագույն պրոլետարացումը, և յերբեք ել չձգտի դաշն կապելու գյուղացիութեան հետ և իր հեգեմոնիան հաստատելու այդ դաշինքում: Բայց գյուղացիութեան նկատմամբ պրոլետարիատի հեգեմոնիայից հրաժարվելը փաստորեն նշանակում ե հրաժարվել հեղափոխութեանից:

Այն փաստը, վոր կապիտալիզմի թեորիայի ամենակարեւոր, ամենավճակաւ հարցերից մեկում Ռ. Լուքսեմբուրգը կանգնած եր նույն դիքերի վրա մինչպատերազմյան և Ինտերնացիոնալի ներսում յեղած ոպորտունիզմի հետ, այն պատճառներից մեկն ե, վոր ոպորտունիզմի դեմ նրա մղած պայքարը չեւ կարող կիսատ պատ և անվճռական չլինել: Ռ. Լուքսեմբուրգը տատանվում

եր մենշեիդմի և բուլղեիդմի միջև, մի շարք հարցերում դեմ դուրս գալով բուլղեիկներին:

Բուլղեական քառագույն
կամ բերդաձևի բնագա-
տաբանությունը

Լենինի պայքարը կապիտալիստական կու-
տակման անհնարինությունը մասին յեղած
տեսակ թեորիաների դեմ չի նշանակում, վոր մարքսիզմ-լե-
նինիզմն ընդունում է ընդլայնված վերաբրտադրութեան սահուն, ան-
խափան ընթացքի հնարավորութունը կապիտալիզմի ժամանակ:
Լենինի պայքարը մանր արտադրութեան համեմատութեամբ կապի-
տալիզմի անառաջդիմականութեան մասին յեղած մանր բուրժուա-
կան թեորիաների դեմ, չի նշանակում, վոր մարքսիզմ-լենինիզ-
մը կապիտալիստական կարգը բացարձակորեն առաջդիմական
է համարում և չի տեսնում նրա պատմականորեն անցողիկ
բնույթը: Հատկապես Մարքսն ու Լենինն են մինչև տակը բաց
արել կապիտալիզմի խորագույն հակասութեանները և ցույց
տվել նրա անցողիկ բնույթը: Հատկապես Լենինն և ցույց տվել,
վոր կապիտալիզմն իր դարգացման իմպերիալիստական ստադիա-
յում, յերբ լինում հասունացել են սոցիալիզմի նախադրյալնե-
րը, դադարում է արտադրութեան առաջդիմական յեղանակը
լինելուց և վերածվում է փտող ու մահացող կապիտալիզմի:

Կապիտալիզմի հավիտենական և անճշմարտապիստոս
զացման թեորիան բուրժուական ջատագովներն են քարոզում:
Այսպես, Տուգան-Բարանովսկին պնդում էր, վոր կապիտալիզմը
կարող է դարգանալ անվերջ ու անճշմարտ, յեթե նույնիսկ ամ-
բող յերկրագնդի վրա մնա միայն մեկ բանվոր—անհրաժեշտ է
միայն վորոշ համամասնութուն արտադրութեան ճուղերի
միջև:

«Այդ միակ բանվորը,—ասում է Տուգան-Բարանովսկին,—
շարժման մեջ կդնի մեքենաների վորջ վիթխարի գանգվածը և
նրանց զգնութեամբ կարտադրի նոր մեքենաներ ու կապիտա-
լիստական դասակարգի սպառման առարկաներ: Բանվոր դասա-
կարգը կանհետանա, բայց դա յերբեք չի դժվարացնի կապիտա-
լիստական արտադրութեան արդյունքների իրացումը» (Տուգան-
Բարանովսկի, Արդյունաբերական պարբերական ճշմարտաները,
հջ 212, ռուս.): Զգալիորեն կիրճատվի սպառման առարկաների
արտադրութունը, բայց դրա փոխարեն կաճի արտադրամիջոց-
ների սպառումը և կապիտալիստական շուկան անվերջ կնդար-
ձակվի: Քարածուխն ու յերկաթը կարտադրվեն նրա համար, վոր
պեսզի... ևլ ավելի շատ քարածուխ և յերկաթ արտադրեն: Ահ
թե ինչպիսի անմտութեան են հասնում բուրժուական ջատա-

գովները՝ կապիտալիզմի հակասութեանները ժխտելու իրենց
ճգնման մեջ:

Տուգան-Բարանովսկու հեաքերով գնաց սոցիալ-դեմոկրա-
տական առաջնորդներից մեկը—Հիլֆերդինգը, վորը դեռ պա-
տերազմից առաջ դրում էր, թե ինչքան էլ վոր ցածր լինի մաթ-
սաների սպառումը, արտադրութունը կարող է անսահմանորեն
և անճշմարտաձև աճել, յեթե միայն համապատասխան համամասնու-
թուն պահպանվի հասարակական արտադրութեան յերկու ստորա-
բաժանումների միջև: Նույնն էր պնդում նաև Ոտտո Բաուե-
րը՝ իսկ այժմ նույնն են պնդում բոլոր սոցիալ-ֆաշիստները:
Դա նրանց «կազմակերպված կապիտալիզմի» ջատագովական թեո-
րիայի հիմունքներից մեկն է: Հավասարակշռութեան և կազմա-
կերպված կապիտալիզմի աջ ոպորտունիստական թեորիաներն
այդ բոլոր բուրժուական—ջատագովական թեորիաների բեկոր-
ներն են:

Վերաբրտադրութեան մարքսիստական-լենինյան թեորիան
ցույց է տալիս, վոր կապիտալիստական վերաբրտադրութեան և
վորջ մի հավասարակշռութեան մասին խոսք լինել չի կարող: Ինչ-
պես պարզ, այնպես էլ ընդլայնված վերաբրտադրութեան նորմալ
ընթացքի կապիտալիզմին յուրահատուկ պայմաններն այնպիսի
պայմաններ են, «վորոնք փոխարկվում են վերաբրտադրութեան
աննորմալ ընթացքի նույնքան բազմաթիվ պայմանների, ճշմարտ-
աննորմալ ընթացքի հնարավորութեանները, վորովհետև այդ
մերի նույնքան բազմաթիվ հնարավորութեանները, վորովհետև այդ
արտադրութեան արտադրութեան ճշմարտաները» (Մարքս, Կապիտալ,
վաստահեղուքայունը պատահականությունն է) (Մարքս, Կապիտալ,
հ. 11, հջ 362. ռուս. ընդգծումն իմն է.— Լ. Ս.):

Մենք տեսնք, վոր կապիտալի կուտակումը և կապիտալի
շուկայի ընդլայնումը տեղի յե ունենում գլխավորապես արտա-
դրամիջոցների և վորջ թե սպառման առարկաների արտադրութեան
աճի հաշվին: Սակայն դա չի նշանակում, վոր արտադրութունը
միանգամայն կախումն չունի սպառումից:

Չէ վոր ամեն մի արտադրամիջոց անմիջաբար կամ թե վեր-
ջին հաշվով պետք է ծառայի սպառման միջոցների արտադրու-
թեանը: Հետևաբար, խոսելով հասարակական արտադրութեան
ստորաբաժանումների համամասնականութեան մասին, մեր վայ-
թեորիաները, վորոնք ցանկանում են «վերանալ» սպառումից,
բաց էլութեան շոշափում են սպառման հարցը: Վորովհետև խոսքը
վերաբերում է արտադրամիջոցներ արտադրող ստորաբաժանման
և սպառման առարկաներ արտադրող ստորաբաժանման համամաս-

նախադրյալներէ ստեղծմանը: Նա ստեղծում է սօցիալիզմի կա-
ռուցման համար անհրաժեշտ նյութական-տեխնիկական նախա-
դրյալները և միաժամանակ անխուսափելի յե դարձնում միլիոնա-
վոր մասսաների ապստամբութիւնն ընդդէմ կապիտալիստական
սխտեմբ:

ՃԳՆԱԺԱՄԵՐԸ

I. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԿԱՊԻՏԱԼԻՍՏԱԿԱՆ
ՅՈՒՐԱՑՄԱՆ ՀԱԿԱՍՈՒԹՅՈՒՆԸ ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՊԱՏՃԱՌՆ Ե

Հասակական կապիտալի վերարտադրութեան ու շրջանառու-
թեան պրոցեսի վերածումը մ'Յ դ ընդհուպ մոտեցրեց ճգնաժամեր
հարցին: Մենք տեսանք, վոր հասարակական կապիտալի շարժու-
մը լի յե խոր հակասութիւններով, վորոնք կապիտալիզմի հիմնա-
կան հակասութեան արտահայտութիւնն են: Այս շարժումը հա-
մաչափ չի ընթանում: Նրա բնորոշ ձևն են արագ, թոխչքածե
տնցումներն աշխուժացումից դեպի անկում, ճգնաժամ և դադար:
«Արդյունաբերական կյանքը վերածվում է միջակ աշխուժացման
բարգաձագման, գերարտադրութեան, ճգնաժամի ու դադարի հա-
շորդական շրջանների շարքի» (Մաքս, Կապիտալ, 1, 5.):

Այս բոլոր մոմենտներն առաջացնում են պարբերաբար կրկն-
վող ցիկլեր: Այս դեպքում վճռական մոմենտ է հանդիսանում
ճգնաժամը: Հենց ճգնաժամն է ավարտում նախընթաց շարժումը
և հանդիսանում հետագա շարժման յեղակետը:

Ճիշտ այն պահին, յերբ կապիտալիստական արտադրութիւ-
նը լրիվ ընթացքի մեջ է, յերբ արտադրվում են ավելի ու ավելի
մեծ քանակով ապրանքներ, յերբ գներն աճում են և նրանց հետ
միասին աճում են նաև կապիտալիստների շահույթները, յերբ
գործազրկութիւնը կրճատվում է և աշխատավարձը բարձրանում,
— հենց ճիշտ այդ պահին հանկարծ պայթում է ճգնաժամը:

Ահավասիկ, թե ինչպիս է նկարագրում ճգնաժամերը
Ենգելսը. «Առևտուրը կանգ է առնում, շուկաները լցվում են
չվաճառվող արդյունքների քանակով, առկա փողը չքանում է
շրջանառութիւնից, վարկը վոչնչանում է, գործարանները կանգ
են առնում, բանվորները զրկվում են գոյութեան ամեն մի միջոցից
հենց այն պատճառով, վոր նրանք այդ միջոցներն արտադրել են
չափազանց մեծ քանակութեամբ. սնանկացումները հաշորդում

են սնանկացումները, աճուրդը փոխարինվում է աճուրդով: Դառաբը տեղում է ամբողջ տարիներ, արտադրողական սեփերի ու արդյունքների մասաները վոչնչացվում ու վատնվում են, մինչև վոր կուտակված ապրանքները վերջապես վաճառվեն քիչ թե շատ իջեցրած գներով և նորոգվի արտադրութայան ու փոխանակութայան շարժումը: Կամաց կամաց այս շարժումն արագանում է, քայլը փոխարինվում է արագաքայլով, արդյունաբերական արագաքայլը փոխարինվում է վազքով, վորն իր տեղը զիջում է սրբաշավ կարյերային, իսկական թռիչքին՝ արդյունաբերութայան, առատրի, վարկի ու սպեկուլյացիայի խոչընդոտներով հանդերձ, վորպեսզի կապիտալ թռիչքներեց հետո կրկին ընկնի սնանկացման փուլը: Յե՛վ այսպես ամեն անգամ սկզբեց՝ (Ննգելս, Անտի-Դյուրինգ):

Այս է ճգնաժամերի ընդհանուր պատկերը: Ճգնաժամերի մասին խոսելով, մենք նկատի ունենք վոչ թե հասարակական արտադրութայան ինչ-վոր մասնակի խանգարումներ, այսինքն վոչ թե մասնակի ճգնաժամեր, վորոնք պատահաբար կարող են ընդգրկել այս կամ այն ճյուղը, այլ ընդհանուր ճգնաժամեր, վորոնք ընդգրկում են ամբողջ կապիտալիստական արտադրությունը, նրա բոլոր կարեվորագույն ճյուղերը: Այս գեպքում մենք նկատի ունենք վոչ թե հասարակական արտադրութայան խանգարումները, վոր յերբեմն հետևանք են ընութայան տարերային աղետները, ինչպես որինակ, անբերբիությունը, յերկրաշարժը և այլն, կամ թե չե այնպիսի, ընավ վող պատահական, հասարակական յերևութային, ինչպես պատերազմները, — մենք նկատի ունենք վոչ թե թերարտադրությունը, այլ կապիտալիզմի ժամանակ կանոնավոր կրկնվող քնդհանուր գերաբարձրության նգնաժամեր:

Սովորաբար ասում են, վոր ճգնաժամերի պատճառը արտադրութայան անարխան¹ է: Սա սխալ է: Չի վոր արտադրութայան անարխիան տերում էր նակ պորզ ապրանքային տնտեսութայան մեջ, իսկ ճգնաժամեր տեղի չեյին ունենում նրանում:

Արտադրության անարխիան պորզ ապրանքային տնտեսության մեջ յե՛վ կապիտալիզմի ժամանակ

Մանր ապրանք արտադրողների հասարակութայան մեջ նույնպես կապ չի կազմակերպված առանձին արտադրողների միջև և դա իրականացվում է տարերայնորեն

փոխանակութայան միջոցով: Բայց այստեղ աշխատանքի բաշխումը դեռ շատ քիչ է զարգացած կապիտալիստական հասարակու-

¹ Անարխիա, բառացի նշանակում է «անիշխանություն»:

թյան աշխատանքի բաժանման համեմատությամբ: Աշխատանքի մանր և անհատական գործիքները գործի յե գցում ամեն մի առանձին ապրանք արտադրող արտադրութայան հիմքը ձեռքի աշխատանքն է. ամեն մի այսպիսի արտադրող աշխատում է մենակ. աշխատանքը բաշխված է ինքնուրույն ապրանք-արտադրողների միջև, բայց արհեստանոցի ներսում աշխատանքի բաշխում չկա: Բանի վոր արտադրությունն առհասարակ փոքր էր և աշխատանքի բաշխումը թույլ էր զարգացած, ապա ապրանք արտադրողները միջև կապի կազմակերպված չլինելը մեծ նշանակություն չեր կարող ունենալ, չեր ցնցում ամբողջ հասարակական արտադրությունը:

«Ճրված մանր արտադրողներից յուրաքանչյուրը միանգամից կատարում էր միջանի գործողություն և այս պատճառով նրանք համեմատաբար՝ անկախ էյին ուրիշներից յեթե, որինակ, անայնագործն ինքն էր վուշ ցանում, ինքը մանում և ինքը գործում — նա համարյա անկախ էր ուրիշներից: Մանր, ցրված ապրանք-արտադրողների այսպիսի ռեժիմի վերաբերմամբ էր հենց (և միայն նրա վերաբերմամբ) արդարանում այն ասացվածքը, թե՛» ամեն մեկը էր համար, իսկ բոլորի համար աստված, «այսինքն շուկայական տատանումների անարխիա» (Լեճին, 1 հ.):

Միանգամայն այլ է գրությունը կապիտալիզմի ժամանակ: Աշխատանքն այստեղ հանրայնացված է: Ամեն մի բանվոր կազմում է ձեռնարկութայան բանվորների կոլեկտիվի մի մասը, աշխատանքի գործիքներն այնպիսին են, վոր նրանց մի բանվորը չի կարող գործի գցել. աշխատանքի բաշխում գոյություն ունի վոչ միայն ձեռնարկությունների միջև, այլև ամեն մի ձեռնարկութայան մեջ առանձին. արտադրությունը կատարվում է խոշոր մասշտաբով. աշխատանքի բաժանումը չափազանց ճյուղավորված է, գոյություն ունեն արտադրութայան բազմաթիվ ճյուղեր, և նրանք բոլորը խիստ կախում ունեն միմյանցից:

Կապիտալիզմի հանրայնացում է աշխատանքը վոչ միայն այն իմաստով, վոր ձեռնարկութայան ներսում կապիտալիզմի հրամանատարությամբ աշխատում են շատ բանվորներ, այլև այն իմաստով, վոր ավելի ու ավելի յե ուժեղանում առանձին ձեռնարկությունների կախումը միմյանցից:

«Աշխատանքի հանրայնացումը կապիտալիստական արտադրությամբ ամենևին այն չե, վոր մարդիկ աշխատում են մի շենքում (սա միայն պրոցեսի մի մասնիկն է), այլ այն, վոր կապիտալիզմի համակենտրոնացումը ուղեկցում է հասարակա-

կան աշխատանքի մասնագիտացումով, կապիտալիստների թվի նվազումով արդյունաբերության յուրաքանչյուր տվյալ ճյուղում և արդյունաբերության հատուկ ճյուղերի թվի մեծացումով (նույն տեղում):

Վորջան ավելի յե մասնագիտացած աշխատանքը հասարակության մեջ, այնքան ավելի աշխատանքի ամեն մի տեսակ կախում ունի մնացած բոլորից, այսինքն, վորջան ավելի ուժեղ և զարգացած աշխատանքի բաժանումը, այնքան ավելի յե հանրայնացված աշխատանքը: Այսպիսի պայմաններում, կապիտալիզմի պայմաններում, արտադրության անարխիան անհատական և մեջ և բնկնում արտադրության հասարակական բնույթի հետ: Յեթե կանգնում տեղի յե ունեցել ճիշտը ձեռնարկության մեջ, վորը նվիրված և արդեն արդյունաբերության շատ մասնագիտացած ճյուղի և այս պատճառով աշխատում և համարյա ամբողջ հասարակության համար և իր հերթին կախում ունի ամբողջ հասարակությունից . . . — այն ժամանակ արդեն գործը պետք և կանգ առնի հասարակության բոլոր մնացած ձեռնարկություններում, վորովհետև նրանք անհրաժեշտ արդյունքներ կարող են ստանալ միայն այս ձեռնարկություններից բոլոր ապրանքները կարող են իրացնել միայն նրա ապրանքների առկայության դեպքում) (նույն տեղում):

ձգնաժամների հետազոտությունը յեզ նգնաժամների անհրաժեշտությունը

Յեզ այսպես, պարզ ապրանքային արտադրության ժամանակ արտադրության անարխիան անհամեմատ ավելի քիչ նշանակություն ունի, քան արտադրության կապիտալիստական յեղանակի տիրապետության ժամանակ: Պարզ ապրանքային տրանսպորտային մեջ ձգնաժամները հետազոտել են, բայց բնավ անհրաժեշտություն չեն: Այսպիսի նրանք անխուսափելի չեն, նրանք կարող են լինել, բայց կարող են և չլինել: Իսկ կապիտալիզմի որով ձգնաժամները վոչ միայն կարող են, այս և պետք և տեղի ունենան, — նրանք վոչ միայն հետազոտել են, այլ և անհրաժեշտ:

Յերրորդ գլխում (տես I պր. եջ 77—78) մենք ցույց տվինք թե ինչպես ձգնաժամների հնարավորությունն առաջանում և արդեն ապրանքի յերկարումից՝ ապրանքի ու փողի, թե ինչպես ապրանքն առնապարակ սաղմային ձևով պարունակում և ձգնաժամներ:

Պարզ ապրանքային արտադրության որոք արտադրության նպատակն և ապրանք արտադրողների պահանջմունքների բավարարումը և վոչ թե շահույթը: Շուկայի չափերը սահմանափակ են:

վորովհետև աշխատանքի բաժանումը դեռևս լիակատար չափով չի զարգացել: Շուկան մեծ մասամբ տեղական և և հեշտ տեսանելի: Բացի սրանից, հասարակության արտադրողական ուժերը դեռ շատ քիչ են զարգացած, — արտադրությանը դեռևս անհատական ձեռնաշխատ արտադրություն և, նա կատարվում և սահմանական չափերով և չի կարող արագորեն լայնանալ:

Ուստի պարզ ապրանքային արտադրության մեջ ընդհանուր գերարտադրությունը թեև հնարավոր և, բայց անխուսափելի չեն: Պարզ ապրանքային արտադրության մեջ գերարտադրության ընդհանուր ձգնաժամներ տեղի չեն ունեցել:

Կապիտալիստական արտադրության հանդես գալը տանում և դեպի ձգնաժամների հնարավորության հետագա ուժեղացումը և ստեղծում այնպիսի պայմաններ, վորոնց դեպքում ձգնաժամների հնարավորությունը գերաճում և դառնում և նրանց անհրաժեշտությունը, կապիտալիզմի ժամանակ ապրանքային արտադրությունը ընդհանուր տարածում և գտնում: Արտադրության շարժիչ ուժը շահույթն է. ամեն մի կապիտալիստ ձգնում և ամենից ավելի ընդարձակել արտադրությունը նպատակ ունենալով հնարավորության չափ շատ շահույթ ստանալ: Արտադրությունը կատարվում և արդեն վոչ թե փոքր, այլ ճիշտը մասշտաբով մեքենաներ կիրառելով, ուստի նա կարող և արագորեն ընդարձակվել: Աշխատանքի բաժանումը ավելի ու ավելի յե բարդանում. զարգանում և վարկը, վոր մի միասնական շղթայի մեջ և կապում բոլոր կապիտալիստներին: Աշխատանքի բաշխման աճման հետ զուգընթաց ուժեղանում և արտադրության անարխիան թիաժամանակ կապիտալիզմի իջեցնում և մասսաների կյանքի մակարդակը, տեղի յե ունենում բանվոր դասակարգի աղքատացում: Արտադրության ընդլայնումը, վոր հետևանք և կապիտալիզմի ու ավելի մեծ քանակությամբ հավելյալ աբժեք ստանալու ձգնումն, բաղխման մեջ և մտնում մասսաների սահմանափակ սպառողական ուժի հետ: Այս բոլոր պայմանների հետևանքով ձգնաժամներն արդեն դառնում են անխուսափելի:

Պարզ ապրանքային տրանսպորտային հատուկ և հասարակական ու մասնավոր աշխատանքի հակասությունը, բայց այստեղ դեռևս հակասություն չկա արտադրության յերդանակի ու յուրացման յերդանակի միջև (տես I պր. եջ 92—93): Կապիտալիզմի որոք հասարակական ու մասնավոր աշխատանքի հակասությունը վերածվում և հասարակական արտադրության ու կապիտալիստական յուրացման հակասության:

«Մասնավոր անձանց ձեռքով ապրանքային տնտեսութեան կազմակերպած հասարակական աշխատանքի արդյունքի յուրացում, — ահա, թե վորն է կապիտալիզմի ելությունը» (Լենին, I, հ. 6):

Քանի վոր ձգնաժամերի հնարավորութեանը, վոր հատուկ է արդեն պարզ ապրանքային արտադրութեան, վերածվում է նրանց անհրաժեշտութեան միայն կապիտալիզմի հիման վրա, ապա ակնհայտ է վոր, ձգնաժամերի պատճառը մենք պետք է վորոշենք հատկապես կապիտալիզմի հիմնական հակասութեան մեջ՝ վորը նրան տարբերում է պարզ ապրանքային արտադրութեանից:

Վերն է կապիտալիզմի հիմնական հակասութեան բուն ելությունը: Չի կարելի որինակ այս հակասութեանը պատկերել իրեն այսպիսի գոեհիկ ձևով, թե մի կողմում հասարակական արտադրութեանն է, մյուս կողմում՝ կապիտալիստը, արտադրվում են հասարակական արդյունքները, իսկ հետո զալիս է կապիտալիստը և յուրացնում դրանք:

Կապիտալիզմի հիմնական հակասութեանն այն է, վոր հասարակական արտադրութեանը յենթադրված է կապիտալիստների դասակարգին: Կապիտալիստական յուրացումը վոչ միայն արդյունքների յուրացում է, այլև բուրժուազիայի սեփականութեանը արտադրութեան հասարակական միջոցների նկատմամբ՝ Հենց այն պատճառով, վոր կապիտալիստներն արտադրութեան հասարակական միջոցների մասնավոր տերերն են, նրանք ել յուրացնում են հասարակական աշխատանքի արդյունքը: Հետևաբար, կապիտալիզմի հիմնական հակասութեանը կապիտալի թիրապետությունն է հասարակական աշխատանքի նկատմամբ:

Այստեղից բխում է, վոր հասարակական արտադրութեանն ինքը գոյութեան ունի վոչ թե հասարակութեան պահանջմունքները բավարարելու, այլ կապիտալի պահանջմունքները բավարարելու համար: «Կապիտալն ու նրա արժեքի ինքնաձուլը արտադրութեան յեղակետն ու վախճանակետն են, նրա գրդապատճառն ու նպատակը. արտադրութեանը միայն արտադրութեան է կապիտալի համար, և վոչ թե ընդհակառակը, արտադրութեան միջոցները սոսկ միջոցներ չեն արտադրողների հասարակության կյանքի պրոցեսի մշտական ընդլայնման համար» (Մարքս, Կապիտալ, III, հ. 62 171 — 172):

Արտադրության անսահման ընդլայնման սեղաններ

Վորչափով վոր հասարակական արտադրութեանը միայն մի միջոց է կապիտալի արժեքը մեծացնելու համար, ապա նրան կապիտալը հենց ոգտադրործում է իբրև այդպիսի միջոց:

կապիտալը ձգտում է անսահման ընդլայնվել արտադրութեանը նպատակ ունենալով ամեն կերպ մեծացնել հավելյալ արժեքը և զրա հետ միասին կապիտալի արժեքը (կուտակում):

Դեռ ավելին՝ ամեն մի կապիտալիստ հարկադրված է սնանկացման յերկյուղից ընդարձակելու և բարելավելու արտադրութեանը: Արցուկութեան պայքարին դիմանալու համար, այսինքն վոչ միայն նրա համար, վորպեսզի մեծացնի իր շահույթը, այլև ուղղակի նրա համար, վորպեսզի վտարված չլինի շուկայից, յուրաքանչյուր կապիտալիստ ձգտում է եժան ծախել: Յուրաքանչյուր կապիտալիստ պետք է մշտապես ձգտի հարվածել իր մրցակիցներին, այլապես նա ինքը կհարվածվի:

Մակայն ուրիշ կապիտալիստներին ցածր գներով հարվածելու համար պետք է նվազեցնել իր արտադրութեան ծախքերը, եժան արտադրել, իսկ սրան կարելի յե հասնել աշխատանքի արտադրողականութեանը բարձրացնելու միջոցով, շահագործումն ուժեղացնելու միջոցով, արտադրութեանն ընդարձակելու միջոցով: «Արտադրութեան հասարակական անարխիայի անողոք ուժը խոշոր արտադրութեան մեքենաների անվերջ կատարելագործման հնարավորութեանը ամեն մի առանձին կապիտալիստի համար դարձնում է հարկադրական անհրաժեշտութեան անընդհատ կատարելագործելու իր մեքենաները սնանկացման յերկյուղից ... նրանց համար հենց այսպիսի հարկադրական անհրաժեշտութեան է դառնում նաև իր արտադրութեան չափերն ընդարձակելու և պարզ փաստական հնարավորութեանը» (Նեգել, Անտի-Դյուրինգ):

Այնուհետև կապիտալի որդանական կազմի բարձրացման հիման վրա կապիտալիստներին արտադրութեան ընդարձակման և աշխատանքի արտադրողականութեան բարձրացման է հրում շահույթի միջին նորմայի անկումը, վոր ինքնին հետևանք է կապիտալի որդանական կազմի աճման: Վորքան ցածր է շահույթի միջին նորման, այնքան ավելի շատ պետք է արտադրել մեծ քանակութեամբ շահույթ ստանալու համար: Բայց այն միջոցները, վորոնցով ձեռք է բերվում սա, — կապիտալի որդանական կազմի բարձրացումը, — հանգում են շահույթի միջին նորմայի հետագա անկման, իսկ սա իր հերթին դրդում է դեպի արտադրութեան հետագա ընդարձակումը և այլն և այլն (տես I պր. եջ 214 — 215):

Բլոր ասածներից հետևում է, վոր «արտադրության կապիտալիստական յեղանակին ներհասուկ է արտադրողական ուժերի բացարձակ գտագուման ձգեղն անկախ արժեքից և վերջինիս մեջ ամ-

կապիտալիզմի դրած նպատակը, այսինքն կապիտալի արժեքի մեծացումը չպատահանց սահմանափակ և նեղ և այն միջոցների համար, վոր նա պետք է կիրառի այս նպատակին հասնելու համար, այսինքն չափազանց նեղ և հասարակական արտադրութեան անսահման ընդարձակման համար: Ուրիշ խոսքով՝ կապիտալիստական արտադրական հարաբերութեանը չափազանց նեղ են հասարակական արտադրութեան համար:

Այն սահմանները, միմիայն վորոնց մեջ կարող է տեղի ունենալ այն կապիտալ արժեքի պահպանումն ու մեծացումը, վոր հիմնվում է արտադրողների լայն մասսաների շահագործման ու աղքատացման վրա, այս սահմաններն այս պատճառով մշտապես ընդհարման մեջ են մտնում արտադրութեան այն մեթոդների հետ, վոր պետք է կիրառի կապիտալը հանուն իր նպատակների և վորոնք ուղղված են դեպի արտադրութեան անսահման մեծացումը,—արտադրութեան, իբրև ինքնանպատակի, աշխատանքի հասարակական արտադրողական ուժի անսպաժան դարձացումը: Միջոցը—նախադեպիկան արտադրողական ուժերի անսահման զարգացումը—ուստիկան ընդհարման մեջ է լինում սահմանափակ նպատակի՝ գոյություն ունեցող կապիտալի արժեքի մեծացման հետ (Մարքս, կապիտալ, III հ., էջ 172: Ընդունում իմն եւ— I. Ս.):

Հասարակական արտադրողական ուժերի և կապիտալի սահմանափակ նպատակի այս ընդհարումն է, վոր արտահայտվում է միայն նախադեպիկան գերարտադրութեան ձգնածամբերի մեջ: Հասկանալի չէ, վոր սահմաններն ավելցուկը ավելցուկ է վոչ թե այն բանի համեմատութեամբ, ինչ հասարակութեանն առհասարակ կարող եր սպասուել, այլ այն բանի համեմատութեամբ, ինչ նա կարող է սպասուել կապիտալիզմի տիրապետութեան ժամանակ: Բանվոր դասակարգի սպասողական ուժը կապիտալիզմի ժամանակ վորոշվում է վոչ թե նրա պահանջմունքներով, այլ նրա գնողական ուժով:

Արտադրութեան անարխիան և բանվոր դասակարգի աղքատացումը բխում են կապիտալիզմի հիմնական հակասութեան ից՝ արտադրութեան հասարակական բնույթի և յուրացման կապիտալիստական բնույթի հակասութեան ից: Կապիտալի զարգացումն հասարակական արտադրողական ուժերը չեն տեղափոխվում նրանց վրա գերիշխող և նրանց հակասող կապիտալիստական յուրացման շրջանակների մեջ: Այսպիսով, ձգնածամբերի պատճառը

նախադեպիկան արտադրութեան և կապիտալիստական յուրացման հակասութեան մեջ է:

Բնականաբար առաջանում է հետևյալ հարցը: Չձգնածամբերի պատճառը—հասարակական արտադրութեան ու կապիտալիստական յուրացման հակասութեանը—գոյութեան ունի և դործում է մշտապես,—իսկ ինչո՞ւ այս դեպքում ձգնածամբերը տեղի չեն ունենում միայն ժամանակ առ ժամանակ, ինչո՞ւ կապիտալիստական արտադրութեանը չի գտնվում պերմանենտ (անընդհատ) ձգնածամբի կացութեան մեջ, այլ շարժվում է վերելքի, ձգնածամբի, դադարի, վերելքի փոփոխությամբ և այլն:

Այս հարցին պատասխանելու համար մենք պետք է մտաբերենք, թե ինչպես է առհասարակ տեղի ունենում կապիտալիստական արտադրութեան ընդարձակումը:

Նախընթաց դիտում մենք տեսանք, վոր կապիտալիստական ընդլայնած վերարտադրութեան որոնքը արտադրութեան միջոցների արտադրութեան ավելի արագ աճումն է անձնակազմի սպառման առարկաների արտադրութեան համեմատութեամբ: Սա վոչ միայն ուժեղացնում է հասարակական արտադրութեան յերկու ստորուժեղացումն է հասարակական արտադրութեան և տանում դեպի բաժանումներն անհամապատասխանութեանը և տանում դեպի ձգնածամբերը, այլև միևնույն ժամանակ պատճառն է հանդիսանում այն բանի, վոր հասարակական արտադրութեան ու կապիտալիստական յուրացման հակասութեանն առաջացնում է վոչ թե մշտական, այլ միայն ժամանակ առ ժամանակ կրկնվող գերարտադրութեան:

Կապիտալի որդանական կազմի տնում նշանակում է, վոր հասարակական արդյունքի ավելի ու ավելի մեծ մասն է սպառվում իբրև մշտական կապիտալ այսինքն մտնում արտադրողական իբրև մշտական կապիտալ (ի տարբերութեան գոյութեան միջոցներից, վոր սպառման մեջ (ի տարբերութեան գոյութեան մեջ): Ուստի մինչև բոնք մտնում են միայն անձնական սպառման մեջ): Առհասարակ կարող է մեծանալ վորոշ սահման արտադրութեանն առհասարակ կարող է մեծանալ վորոշ սահման արտադրութեանն սպառում ից: Վորչափով վոր արտադրութեան միջոցներն անմիջականորեն չեն մտնում պրոլետարիատի թեյան միջոցներն անմիջականորեն չեն մտնում պրոլետարիատի անձնական սպառման մեջ, այդ չափով արտադրողական սպառումն ավելի արտադրութեան միջոցների սպառումը չի սահմանափակված մը, արտադրութեան միջոցների սպառումը չի սահմանափակված մասսաների գնողական ուժով:

Հասարակական կապիտալի որդանական կազմի աճման հետևանքով տեղի ունեցող արտադրութեան միջոցների սպառման աճումը, կապիտալիստների կողմից ստեղծում է արտադրութեան

միջոցները ազիլի ու ազիլի մեծ քանակութիւնն պահանջարկ, միջոցներ, վորոնք այսպիսով վաճառահանվում են հենց արտադրութեան մեջ:

Մյուս կողմից՝ սրա հետեանքով աճում է նաև բանվոր դասակարգի սպառումը: Յերբ ընդարձակվում է արտադրութեանը, պահանջվում է ազիլի շատ բանվոր, հետևաբար վճարվում է ազիլի շատ անշատավարձ, աճում է բանվոր դասակարգի գնողական ուժը: Բանվոր դասակարգի սպառումը, ինչպես մենք գիտենք, պայմանավորվում է կապիտալի կուտակման պահանջմունքներով: Երբ արտադրութեան ընդարձակման համար կապիտալիստները լրացուցիչ բանվորներ են ներգրավում և վորոշ պայմաններում ստիպված են բարձրացնելու աշխատավարձը, նրանք գրանով իսկ ընդարձակում են վաճառահանման շուկան նաև մասսայական սպառման առարկաների համար:

Այսպիսով հասարակական արտադրութեան և կապիտալիստական յուրացման հակասութիւնը մինչև վորոշ սահման կարող է դարգանալ, այսպես սասած, առանց հասարակական արտադրութեան աճման և այն նեղ սահմանները ընդհարման, վոր նրա համար դնում է կապիտալիստական յուրացումը, — առանց ճշնագրի:

Արտադրութեան միջոցների սպառման ընդարձակումը ժամանակ առ ժամանակ նկատվում է արտադրութեան անսահման ընդարձակման տենդենցը պետք է ընդհարվի իր խոչընդոտի՝ հասարակութեան սահմանափակ սպառողական ուժի հետ:

Արտադրութեան դիպրոպոցիոնալութիւնը յեզ արտադրութեան ու սպառման նախադրութիւնը

Չէ՞ վոր վերջին հաշիվով արտադրութեան միջոցները ծառայում են սպառման առարկաների արտադրութեան համար: Կապիտալիստները համար առհասարակ միանգամայն նշանակութիւն չունի, թե ինչպիսի սպառողական արժեքներ են նրանք արտադրում: Նրանց համար արտադրութեան միջոցները կապիտալ են, այսինքն բանվոր դասակարգից չհատուցված աշխատանք գուրս ծծելու միջոց: Բայց հավելյալ արժեք արտադրելու համար կապիտալիստները չեն կարող խուսափել միանգամայն կոնկրետ սպառողական արժեքներ արտադրելու անհրաժեշտութիւնից, և նրանք վորքան էլ արտադրութեան միջոցներ արտադրեն, ամեն մի արտադրութեան միջոց, ինչպես մենք ատ-

սանք նախընթաց գլխում, վերջին հաշիվով պետք է ծառայի սպառման առարկաների արտադրութեանը:

Արտադրութեան միջոցների ազիլի արագ աճումը վերջիվերջո պետք է հանգի հասարակական արտադրութեան I և II ստորաբաժանութիւնների դիսպրոպոցիալութիւն: Արտադրութեան միջոցներն անխուսափելիորեն չափազանց շատ են արտադրվում այն բանի համեմատութեամբ, ինչ պահանջվում է II ստորաբաժանման համար: Գերարտադրութեան և սկսվում I ստորաբաժանման մեջ: Բայց այս գերարտադրութեանը տեղի ունի, վորովհետև սպառման առարկաներ արտադրող II ստորաբաժանումը չի կարող իր արտադրութեանն այնքան արագ ընդարձակել, վոր ի վիճակի լինի կիրառելու I ստորաբաժանման առաջարկած արտադրութեան բոլոր միջոցները: Չի կարող, վորովհետև նա անմիջականորեն դեմ է առնում մասսաների սահմանափակ սպառողական ուժին:

Արտադրութեան դիսպրոպոցիոնալութիւնը բխում է հասարակական արտադրութեան և կապիտալիստական յուրացման հակասութիւնից: Արտադրութեան անսահման ընդարձակման և մասսաների սահմանափակ սպառողական ուժի հակասութիւնը նույնպես բխում է կապիտալիզմի այս հիմնական հակասութիւնից: Սա կապիտալիզմի հիմնական հակասութեան արտահայտման յերկու ձևերն են միայն:

Ուստի արտադրութեան նյութերի դիսպրոպոցիոնալութիւնը և արտադրութեան ու սպառման նախադրութիւնը չի կարելի դիտել իբրև նգնաժամերի պահանջներ: Չգնաժամերի պահանջը նախադրութեան և կապիտալիստական յուրացման նախադրութիւն է: Արտադրութեան և կապիտալիստական նգնաժամերի հիմքը, նրանց պահանջարկը կապիտալիստական նգնաժամերի բուն սխեմի մեջ է» (Սալիբ, Լենինից մի հարցեր: Ընդգծումն իմն է. — Լ. Ս.):

2. ՃԳՆԱԺԱՄԻ ԸՆԹԱՅԲԸ

Այն ձևերի բարդութիւնը, վորոնց մեջ ընթանում է ճշնագրի ծամը, հանգում է ճշնագրի իսկական պատճառների կատարելության միջոցները: Ահա վախճանը մի քանի որինակ: Չգնաժամը նախ դրսևորվում է վոր թե արտադրութեան, այլ վարկի ու առևտրի ասպարեզում: Այս պատճառով ստեղծվում է յերեութեանութիւնը, թե իբր վորակի ու առևտրի խանութում է, վոր հանդիսանում է ճշնագրի պատճառը: Կապիտալիզմի հիմնական հակասութիւնը հանգում է այն

ների անվճարունակութունը տանում և դեպի բուն իսկ բանկերի սնանկացումը: Մնանկացումը հետևում և սնանկացման: Բանկերի ավանդատուները, ցանկանալով անվտանգ դարձնել իրենց ավանդները, գրանք հանում են բանկերից: Մեծանում և վարկային կապիտալի պահանջարկը, իսկ նրանց առաջարկը նվազում և այս պատճառով փխտ բարձրանում և տեղի մակարդակը:

Վարկի ասպարեզից ճգնաժամը փոփոխվում և առևտրի մեջ: Քանի վոր կապիտալիստները (ինչպես արդյունաբերական, այնպես ել առևտրական) փողի կարիք են դրում, նրանք իջեցնում են իրենց ապրանքների գները՝ վաճառելու համար, բայց սա սրում և սրցութունը և տանում դեպի գները ել՝ ավելի իջեցում: Թեև գները անկումը անհամաչափ և տեղի ունենում տարբեր ասպարեզներում, բայց նա ընդհանուր բնույթ ունի և տեղի յն ունենում անակնկալ:

Վերջապես ճգնաժամը պայթում և արտադրութայն ասպարեզում: Մնանկացումների, գների անկման, կուտակված պաշարը չվաճառվելու և պատվերների պակասելու հետևանքով արտադրութունն սկսում և կրճատվել: Գործարանները փակվում են, իսկ այն գործարաններում, վորոնք շարունակում են աշխատել, արտադրութունը կրճատվում և: Բանվորները հեռացվում են մասսայորեն: Սկսվում և կապիտալիստների հարձակումն աշխատավարձի վրա:

ճգնաժամը ծավալում և սրանում է: Բուն արտադրութայն մեջ ճգնաժամն անպայման չի սկսվում այն ճյուղերում, վորոնք արտադրում են սպառման առարկաներ:

Ընդհանուր արտադրութայն մեջ ճգնաժամի սկսվելու համար բնավ անհրաժեշտ չեն, վոր մեկեն, միաժամանակ բոլոր ճյուղերում ապրանքների ավելցուկներ լինեն, վորոնք գնորդներ չեն գտնում: Բավական և, վոր գերարտադրութունն սկսվի ամբողջ հասարակական արտադրութայն համար ելյական նշանակութուն ունեցող արդյունաբերական ճյուղում: «Ճգնաժամն (հետևաբար, և գերարտադրութունն) ընդհանուր լինելու համար բավական և, վոր նա ընդգրկի առևտրի գլխավոր առարկաները» (Մարքս, Հասկայլ արժեքի թեորիա, II հ., 2-րդ մաս, էջ 193):

XIX դարի սկզբին արդյունաբերութայն այսպիսի վճռական ճյուղն եր տեքստիլ արդյունաբերութունը, իսկ համաշխարհային տեքստիլ արդյունաբերութայն մեջ վճռական դիրք եր գրավում Անգլիան: Ուստի անգլիական տեքստիլ արդյունաբերութայն մեջ գերարտադրութունը վերածվում եր վոչ միայն

Անգլիայի, այլև բոլոր կապիտալիստական յերկիրների ընդհանուր գերարտադրութայն ճգնաժամի: Բայց սկսած այն ժամանակից, յերբ ուժեղ զարգացան մեքենաշինութունը, մետալուրգիան ու հանքային արդյունաբերութունը, այսինքն ծանր ինդուստրիան և նրանք դարձան վճռական ճյուղեր, ընդհանուր գերարտադրութայն ճգնաժամիը սովորաբար սկսվում են այս ճյուղերի գերարտադրութունից: Այսպես որինակ՝ 1929 թ. աշնանը սկսված արդի տնտեսական ճգնաժամն ամենից առաջ հարվածեց մետալուրգիային ու ածխարդյունաբերութայնը և միայն բավական ուշ փոխադրվեց թեթև արդյունաբերութայն մեջ:

Արտադրութայն միջոցներ արտադրող ճյուղերում ճգնաժամը շատ ավելի ուժեղ ազդեցութուն և գործում, քան սպառման առարկաներ արտադրող ճյուղերում: Այս բանն առանձին ախտաբանութայն գերան է դալիս՝ արդի համաշխարհային տնտեսութայն ճգնաժամի մեջ, վորն ընդգրկել է բոլոր կապիտալիստական յերկիրները: Որինակ՝ Գերմանիայում 1932 թ. արտադրութայն միջոցների արտադրութունը նվազել և 53,4%, 1928 թ. միջին ամսական արդյունաբերութայն համեմատությամբ, իսկ գոյամիջոցների արտադրութունը կրճատվել և միայն 26,4%: Գերմանիայի տեքստիլ արդյունաբերութայն արտադրանքը 1932 թ. կրճատվել և 1929 թ. համեմատությամբ 16%, կոշիկի արտադրութունը՝ 24%, մեքենաշինութունը կրճատվել և 60%, Վոլգայի արտադրութունը՝ 60%:

Կապիտալիստական բոլոր յերկիրները, միասին վերցրած, արտադրութայն միջոցների արտադրութունը 1932 թ. կրճատվել և 50% - 1928 թ. համեմատությամբ, նախաշինութունը՝ 90%, իսկ տեքստիլ արդյունաբերութունը՝ միայն 15%:

Ամբողջ հասարակական արտադրութայն մեջ քիչ դեր խաղացող արդյունաբերական ճյուղում գերարտադրութունը չի կարող վերածվել ընդհանուր գերարտադրութայն ճգնաժամի: Որինակ՝ փողպատների կամ այլ արդուզարդի ապրանքների արտադրութունն իր արդյունքով, զբաղված բանվորների քանակով, իր կազմով մյուս ճյուղերի հետ չի հանդիսանում այնպիսի ճյուղ, յեր կազմով վորն գերարտադրութունը կարողանա իր հետևից տանել վորի միջի գերարտադրութունը կարողանա:

Մնացած բոլոր ճյուղերի գերարտադրութունը, վորոնք արտադրում են արտադրութայն միջոցներ: Մետալուրգիան, մեքենադրում են արտադրութայն միջոցներ: Մետալուրգիան, մեքենադրում են արտադրութայն միջոցներ, ածխարդյունաբերութունը արտադրութայն միջոցներ են մատակարարում ժողովրդական տնտեսութայն բոլոր շոցներ են

ճյուղերին, նրանց արտադրանքը մեծ բաժին է կազմում ամբողջ հասարակական արտադրութեան մեջ, նրանք զբաղեցնում են մեծ քանակությամբ բանվորներ: Քանի վոր նրանցում արտադրութեանն աճում է շատ ավելի արագ, քան սպառման առարկաներ արտադրող ստորաբաժանում, ապա նրանց գերարտադրութեանը կակսվի նույնիսկ այն դեպքում, յերբ սպառման առարկաները բացահայտ գերարտադրութեանն էլիս: Սպառման համար արտադրված առարկաները դեռևս կարող են վաճառվել, բայց քանի վոր II ստորաբաժանումն արդեն չի կարող բնդարձակել իր արտադրութեանը, ապա I ստորաբաժանման կողմից նրան առաջարկվող արտադրութեան միջոցներն իրենց անընդհատ աճող քանակով եզերարտադրված են դուրս գալիս:

Վորչափով վոր արտադրութեան միջոցներ արտադրող ճյուղերում զբաղված են շատ բանվորներ, ապա զբաղված բանվորների թվի կրճատումը և չկրճատված բանվորների աշխատավարձի իջեցումը միանգամից բավականաչափ նվազեցնում են սպառման առարկաների պահանջարկը, և այն սպառման առարկաները, վոր առաջ տուտ չեն, այժմ դուրս են գալիս եզերարտադրված: Այսպիսով գերարտադրութեանը փոխադրվում է և այն ճյուղերի վրա, վորոնք արտադրում են սպառման առարկաներ: Այս ճյուղերում կրճատվում է բանվորների թիվը և իջնում աշխատավարձը, իսկ սա տանում է դեպի սպառման առարկաների պահանջարկի հետագա կրճատում: Յեթե առաջ, ճգնաժամի նախորդակին, II ստորաբաժանումը չի ավելացնում իր պատվերներն I ստորաբաժանմանը, ապա այժմ նա արդեն կրնասում է այս պատվերները, և այս պատճառով I ստորաբաժանման գերարտադրութեանն ավելի յե ուժեղանում և այլն և այլն:

Յեվ այսպես, մենք տեսնում ենք, վոր ճգնաժամն իր արտաքին ձևերով ծավալվում է մի ուղղությամբ, վոր հակադիր է պատճառների ու հետևանքների իրական կարգին: Մասնկութեաններն ու վարկի խանգարման պատճառը, գների անկման ու վաճառքի չկատարվելու պատճառը գերարտադրութեանն է,—այն փաստը, վոր կապիտալիստական արտադրութեանը դուրս է յեկել կապիտալիստական արտադրական հարաբերութեանները պայմաններում հնարավոր սահմաններից: Բայց ճգնաժամը նախ զբաղում ու պայթում է վոչ թե արտադրութեան մեջ, այլ վարկի ու առևտրի բնագավառում և միայն հետո յե ընդգրկում արտադրութեանը: Սա տեղի յե ունենում նրանից, վոր կապիտալիստական վերարտադրութեան պրոցեսը ներառնում է թե

արտադրութեանը և թե շրջանառութեանը: Ձեռնարկութեաննեղի արտադրական կապը և արտադրութեան ու սպառման կապն իրազարծվում է փոխանակութեամբ: Այս պատճառով էլ ճգնաժամն ամենից առաջ դրսևորում է վարկային ու առևտրական կապերի ասպարեղում: Այստեղից էլ առաջանում է այն պատկերացումը, թե իբր ճգնաժամի պատճառը վարկի պակասութեանն է և գների անկումը:

Ապրանքների գների անկումն իր հետևից բերում է կապիտալի արժեզրկում: Ապրանքները մեկն են այն ձևերից, վորով դոյութեան ունի կապիտալը, այն է՝ ապրանքային կապիտալի ձևը: Բայց արժեզրկվում է և այն կապիտալ կապիտալի արժեզրկում: Բայց արժեզրկվում է և այն կապիտալը, վոր ներդրված է արտադրութեան մեջ: Բանն այն է, վոր գերարտադրված ապրանքների նշանակելի մասը արտադրութեան միջոցներ են՝ մեքենաներ և հումք: Յեթե շուկայում ընկնում է հումքի գինը, ապա արժեզրկվում են և հումքի այն պաշարները, վոր արդյունաբերող կապիտալիստներն առաջ գնել են ավելի վոր արդյունաբերող կապիտալիստներն առաջ գնել են ավելի քան իրենց անմիջական վերավաճառման, այլարտադրելու համար: Նույն բանն է տեղի ունենում և սարքավորման հետ:

Կապիտալի արժեզրկումն ընթանում է նաև հետևյալ կերպով, յեթե վորևէ կապիտալիստ սնանկանում է և նրա ձեռնարկութեանը վաճառվում է նրա պարտքերը վճարելու համար, ապա նա վաճառվում է ավելի ցածր գնով, քան նա արժեք իր տիրոջը: Նա վաճառվում է ավելի ցածր 1 միլ. ու, իսկ վաճառվում է 800 Յեթե ձեռնարկութեանն արժե 1 միլ. ու, ապա նոր տիրոջ համար սա նշանակում է արտադրութեան ծախքերի իջեցում, թեև վոչ մի փոփոխութեան չի առաջացել այս ձեռնարկութեան տեխնիկայում: Նոր ձեռնարկատերը կարող է արտադրել նույն ապրանքները և շահույթ ստանալ այդ ապրանքների ավելի եժան վաճառքից: Ճգնաժամների ժամանակ սնանկացած կապիտալիստների ձեռնարկութեաններն անցնում են ավելի ուժեղ և դիմացկուն կապիտալիստների ձեռքը: Ուժեղանում է կապիտալի կենտրոնացման պրոցեսը:

Կապիտալի արժեզրկումը վոչ այլ ինչ է, բայց յեթե կապիտալի արժեքի մի մասի վոչնչացում, ընդվորում կապիտալի իրային տարրերը՝ մեքենաները, հումքը և այլն—սրանից չեն փոփոխում իրենց մեծութեանը: Մինչդեռ ճգնաժամների ժամանակ տեղի յե ունենում թե ապրանքների և թե արտադրութեան մի-

Չոցները ուղղակի վոչնչացուած Արդեն հենց միմիայն գործարանները անգործութունն առաջացուած և անարտադրական մաշվածք, այսինքն մտքնանները, շենքերի փչացում և այլն: Բայց կապիտալիստները դիմում են և սպառողական արժեքների գիտակցական վոչնչացման: Բոլորին հայտնի յեն այնպիսի փաստեր, ինչպէս շոգեկաւքերի տաքացումը ցորենով ու սուրճով, կաթի՝ ծովը լցնելը, հակայական քանակութեամբ բաժակի վոչնչացումը ետլն: Նմանապէս քանդուած են ձեռնարկութուններ, ջրով լցվում են հանքահորեր: Այսպէս 1932 թ. Գերմանիայում ամբողջովին քանդվեց տեխնիկայի վերջին խոսքով սարքավորված խեմիցի խոշոր մեքենաշինական գործարանը, վորտեղ առաջաշխատում էին 20 հազ. բանվոր: Ռինտա վճարելու անհրաժեշտութունն այն հողամասի տիրոջը, վորի վրա գտնվում է անգործ գործարանը, ավելի ձեռնտու յե դարձրել գործարանը քան դելով մաս առ մաս վաճառելը: Յեղ աս յեղակի փաստ չէ:

Ճշնաժամի ժամանակ տեղի յե ունենում բանվորական ուժի՝ հասարակութեան այս հիմնական արտադրողական ուժի սաստիկ քայքայում: Գործազրկութունը, սովը, ցուրտը, հիվանդութունները—այս բոլորը վոչնչացնում են բանվորական ուժը: Բայց կապիտալիստներն ուղղակի շահագրգռված են սրանով, վորովհետեւ բանվոր դասակարգի կարիքի աճումը թեթևացնում է աշխատավարձի իջեցման գործը:

ձգնաժամեր կապիտալիզմի հակառակուսինները մասնաւորապէս յայտնուած ու բռնի հակառակութունն են

Ի՞նչ նշանակութուն ունեն դները անկումը, կապիտալի արժեզրկումը, աշխատավարձի իջեցումը, արտադրութեան կրճատումը, սպառողական արժեքների ուղղակի

Ֆիզիկական վոչնչացումը, ամենաթուշ կապիտալիստների սնանկացումներն ու կապիտալի կենտրոնացումն ավելի ուժեղների ձեռքում: Այս բոլոր սրբոցնաները բռնի ուժով հավասարեցնում են հասարակական արտադրութեան ու կապիտալիստական յուրացման հակասութունը: Այս հիմնական հակասութունը հանդել է այն բանին, վոր հասարակական արտադրողական ուժերը դուրս են յեկել այն սահմաններից, վոր նրանց համար դնում են կապիտալիստական արտադրողական հարաբերութունները, վորի հետևանքով առաջացել է ձգնաժամը: Իսկ ձգնաժամ կապիտալի արժեզրկման, ապրանքների վոչնչացման, արտադրութեան կրճատման և այլ միջոցներով վոչնչացնում է հասարակութեան արտադրողական ուժերի «ավելցուկը» և նրանց համապատասխան դարձնում կապիտալիստական յուրացմանը: ձգնաժամը աճած արտադրողական

ուժերը բռնի կերպով, այսպէս ասած, խցկում է կապիտալիստական արտադրողական հարաբերութունների շրջանակների մեջ:

Ինքը լինելով կապիտալիզմի հետևանք և ամենացայտուն արտահայտութուն, յերկու թշնամական ուժերի՝ հասարակական արտադրութեան ու կապիտալիստական յուրացման բախում, ձգնաժամը ժամանակավորապէս հավասարեցնում է այս հակասութունը: ձգնաժամեր հանդիսանում են «բուժուսեղան եկոնմիկայի բոլոր հակասութունների միացումն ու բռնի հավասարեցումը» (Մարքս, Հակելյալ արժեքի թեորիան, II հ., Զ-րդ մաս, էջ 186: Ընդգծումն իմն եւ—Լ. Ս.): Արտադրողական ուժերի վոչնչացման հետևանքով, աշխատավարձի իջեցման, կապիտալի արժեզրկման ու նրա կենտրոնացման հետևանքով նվազում են արտադրութեան ծախքերը, այսինքն հնարավորութուն է ստեղծվում շահույթ ստանալու նաև ապրանքների ցածր գներ լինելու դեպքում: Իսկ քանի վոր կապիտալիստները համար արտադրութեան ծախքերի իջեցումը խթան է տալիս արտադրութեան ընդարձակմանը,

Այսպիսով, ձգնաժամը ժամանակավորապէս լուծում է կապիտալիզմի հակասութունները, պայմաններ ստեղծելով կապիտալիստական արտադրութեան հետագա շարժման համար. դրանով իսկ ձգնաժամը հնարավորութուն է ստեղծում կապիտալիզմի հիմնական հակասութեան հետագա շարժման համար:

Ձգնաժամերը մշտապէս հանդիսանում են դոյութուն ունեցող հակասութունների միայն ժամանակավոր բռնի լուծումը, բռնի պայթումներ, վորոնք մի սկիւթարթ վերականգնում են խախտված հավասարակշռութունը» (Մարքս, Կապիտալ III հ., էջ 171):

Գները կարող են անկումից ու արտադրութեան կրճատումից հետո սկսվում է դեպրեսիա (դաղար), վորի ժամանակ ապրանքային պաշարները մասամբ վոչնչացվում են, մասամբ աստիճանաբար եժան ծախսվում, ճծվում: Ի՞նչ թե շատ տևական դեպրեսիայից հետո աստիճանաբար սկսվում է վերելք, վորի հիմքն է արդյունաբերութեան հիմնական կապիտալի վերանորոգումը:

ձգնաժամի ժամանակ անվստահ ֆնացած կապիտալիստները ձգտում են իջեցնել արտադրութեան ծախքերը՝ ցածր գների դեպքում ավելի մեծ շահույթ ստանալու համար: Սրա համար բացի աշխատավարձի իջեցումից մացվում են մի շարք կատարելագործումներ, հնարվում են նոր մեքենաներ, մացվում են արտադրութեան նոր մեթոդներ և այլն: Հին, պտկաս կատարելագործված

մեքենաները փոխարինվում են նորերով դեռևս նրանց մաշվելուց առաջ (դարձյալ արտադրողական ուժերի վոչնչացում): Տեղի յե ունենում հիմնական կապիտալի փոխարինումը: «Մրցության» պայքարը, վոր մանավանդ ուղեկցվում է խոշոր հեղաշրջումներով, հարկադրում է աշխատանքի հին միջոցները փոխարինել աշխատանքի նոր միջոցներով դեռևս մինչև նրանց բնական մահը: Ազնաներ, ճգնաժամեր—անա, թե ինչն է գլխավորապես ստիպում լայն հասարակական մասշտաբով այնպես վաղաժամ նորոգելու արտադրական պատկանելիքները» (Մարքս, Կապիտալ II հ., էջ 110—111):

Իսկ հիմնական կապիտալի փոխարինումը նրա «բնական մահվանից» առաջ նշանակում է նոր կապիտալի ներդրման անհրաժեշտություն: Բարձրանում է պահանջարկ արտադրության միջոցների նկատմամբ,—այստեղից բխում է արտադրության ընդարձակում արտադրության միջոցներ արտադրող ճյուղերում, այստեղից բխում է բանվորների յետ ներգրավում արտադրության մեջ և սպառման առարկաների պահանջարկի աճում, այստեղից բխում է արտադրության ընդարձակում սպառման առարկաներ արտադրող ճյուղերում և այլն: Սկսվում է նոր աշխուժացում, վորին հետևում է նոր վերելք:

ձգնաժամերի պարբերակա- հիտեանք է ճգնաժամի, այսպիսով հիմք է ծառայում նոր վերելքի համար: «Ճգնաժամը մշտապես յելակետ է հանդիսանում կապիտալի նոր խոշոր ներդրումների համար՝ հետևաբար, գործը գիտելով ամբողջ հասարակության տեսակետից, նա շատ թե քիչ չափով նոր նյութական հիմք է տալիս սպառողների հաջորդ ցիկլի համար» (Մարքս, Կապիտալ, II հ., էջ 122):

Ճգնաժամին հաջորդող նոր վերելքն արդեն տեղի յե ունենում ավելի կենտրոնացած կապիտալի հիման վրա, վորն ավելի բարձր որգանական կազմ ունի, քան մինչև ճգնաժամը: Այս պատճառով արտադրողական ուժերը ճգնաժամից հետո ավելի ուժեղ են, քան մինչև ճգնաժամը: ձգնաժամն այսպիսով նպաստում է հասարակական արտադրողական ուժերի ամրացման, բայց սրան նպաստում է արտադրողական ուժերի խորհակման միջոցով:

Վոր չափով վոր ճգնաժամից հետո կապիտալն ավելի կենտրոնացած է և ավելի բարձր որգանական կազմ ունի, ապա հասարակական արտադրությունն էլ կարող է շատ ավելի արագ աճել, քան մինչև ճգնաժամը: Բայց սա նշանակում է, վոր նա-

արտադրողական արտադրության և կապիտալիսական յուրացման հասարակությանն անեն մի նգնաժամից հետո ավելի յե սրվում, քան նախ մինչև նգնաժամը, վոր արտադրության անսահման ընդարձակման ձգտումը դարձյալ պետք է բաղախվի, և այն էլ շատ ավելի ուժեղորեն բաղախվի հասարակության սպառողական ուժի հետ, վորին սահմանափակում է կապիտալը: Պետք է վրա հասնի ավելի ուժեղին ու ավելի խորտակիչ ճգնաժամ:

Աշխուժացումն սկսվում է հին, հիմնական կապիտալը նորով փոխարինելու կապակցությամբ, այսինքն հասարակական արտադրության I ստորաբաժանումից (արտադրության միջոցների արտադրություն), II ստորաբաժանման վերելքը հետևում է I ստորաբաժանման վերելքին: Բանվոր դասակարգի սպառման ընդարձակումը կրկին վոչ թե արտադրության նպատակն է, այլ միայն ընդլայնած արտադրության հետևանքը: Նա դարձյալ կապիտալիզմի հիմնական հակասության հետևանքով հետ կմնա արտադրության ընդարձակումից:

Հենց վոր սկսվում է վերելքը, մեծանում է ապրանքների պահանջարկը և բարձրանում են գները: Այս դեպքում ապրանքների պահանջարկն աճում է շատ ավելի մեծ չափով, քան դրա պահանջմունքը կա կապիտալիստական վերաբաղման համար. պահանջարկն արհեստականորեն ուղեկցվում է առևտրի, վարկի, սպեկուլյացիայի կողմից:

Այսպիսով, ճգնաժամը չի վերացնում հակասությունը, այլ միայն ժամանակավորապես շրջում է», հավասարեցնում է, ճգնաժամը միայն «մի ակնթարթ վերականգնում է խախտված հավասարակշռությունը», վորպեսզի իսկույն ևեթ խախտի նրան:

Ինչպես և վերացնում ճգնաժամերը բուրժուազիան: Մի կողմից ահագին քանակությամբ արտադրողական ուժերի հարկանքի վոչնչացման ճանապարհով, մյուս կողմից նվաճելով նոր շուկաները և ավելի ընդարձակ շահագործման յինթարկելով հները: Հետևաբար վոչ այլ բանով, քան ավելի ընդարձակ և ուժեղին ճգնաժամեր նախապատրաստելով և նվազեցնելով նրանց հակադրելու միջոցները» (Մարքս և Ենգելս, Կոմունիստական մանիֆեստ: Կուսկրատ 1932 թ., Յերևան):

Յեվ իրոք, սկսած 1825 թվից կապիտալիստական աշխարհն ապրել է մի շարք ճգնաժամեր, վորոնք կրկնվել են մոտավորապես 10 տարին մեկ, իսկ հետո 6—7 տարին մեկ: ճգնաժամեր տեղի յեն ունեցել 1825 թ., 1836 թ., 1847 թ., 1857 թ., 1866 թ., 1877 թ.: 80-ական թվականներին և 90-ական թվականներին

սկզբին տեղի ունեցավ դադար կարեւորագոյն կապիտալիստական յերկիրներէ արտադրութեան մեջ. այնուհետեւ սկսվում է վերելք, վոր վերջանում է 1900—1901 թ. թ. ճգնաժամով: Այնուհետեւ գալիս են 1907 թ., 1913 թ., 1921 թ. և 1929—1934 թ. թ. ճգնաժամերը: Այս վերջին ճգնաժամը ամենաուժեղն է այն բոլոր ճգնաժամերի մեջ, վոր յերբեիցե ապրել է կապիտալիզմը: (Արդ՛ ճգնաժամի մասին մենք կխոսենք վերջին դիւնում):

Յուրաքանչյուր նոր ճգնաժամ տեղի յե ունենում արտադրողական ուժերի այլեւի բարձր մակարդակի վրա, քան նախընթացը, ուստի ճգնաժամերն ամեն անգամ ավելի ու ավելի խոր բնույթ են կրում:

Այսպիսով գերարտադրութեան ճգնաժամերը պարբերական ճգնաժամեր են, նրանք անխուսափելիորեն կրկնվում են վորոշակի ժամանակամիջոց հետո: Հենց այն պատճառը, վոր առհասարակ ճգնաժամ է առաջացնում, հանդիսանում է նաև ճգնաժամերի պարբերականութեան պատճառը: Հասարակական արտադրութեան ու կապիտալիստական յուրացման հակասութիւնը, վոր նգնաժամի պատճառն է, իր ժամանակավոր լուծումն է գտնում նգնաժամի մեջ, բայց այնպիսի լուծում, վորն անխուսափելի յե դարձնում նոր նգնաժամը: Ճգնաժամերը բոլորում են կապիտալիզմի հենց բնութարանից, և ուստի նրանք կարող են վերացվել միայն նասարակական արտադրողական ուժերի նկատմամբ կապիտալի գերիշխանութիւնը վոչնչացնելով, կապիտալիզմը վոչնչացնելով:

3. ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ճգնաժամերը կապիտալիզմի բոլոր հակասութիւններէ ամենացայտուն արտահայտութիւնն են: Ճգնաժամի ժամանակ միանգամայն ակներև է դառնում, թե ինչ անհաշտելի հակասութեան մեջ են գտնվում հասարակական արտադրութիւնն ու կապիտալիստական յուրացումը:

Հասարակական արտադրութիւնը, վոր պետք է բավարարէ արտադրողների պահանջմունքները, կապիտալիզմը վեր է ածում այդ պահանջմունքների բավարարմանը խոչընդոտ հանդիսացող միջոցի: Բանվոր դասակարգը սովորաբար և լինում է զրկանք կրում վոչ թե այն պատճառով, վոր նա շատ քիչ է արտադրել, այլ այն պատճառով, վոր նա չափազանց շատ սպառման առարկաներ է արտադրել:

Եթանվորները գրկվում են գոյութեան ամեն միջոցից հենց այն պատճառով, վոր նրանք այդ միջոցներն արտադրել են չափազանց

եծ քանակութեամբ» (Նեգելս, Անտի-Դյուրինգ: Ընդդժումն իմն ե.— 1. Ս.):

Բանվորները զրկվում են աշխատանքից վոչ թե այն պատճառով, վոր չկան արտադրութեան միջոցներ, այլ այն պատճառով, վոր արտադրութեան այդ միջոցները չափազանց շատ են: Բանվորների ու արտադրութեան միջոցների միջև կանգնած է կապիտալը, վոր խանգարում է նրանց միացմանը:

Ճիշտ այն պահին, յերբ գործազրկութիւնը, կարիքն ու սովը հասնում են իրենց ամենաբարձր կետին, վոչնչացվում են արտադրութեան միջոցներն ու սպառման առարկաները, վորոնք կարող են գործադրվել գործազրկութեան, կարիքի ու սովի վոչնչացման համար:

Ճգնաժամերի բնույթն իբրև առատու-
նգնաժամ արտադրողական ուժերի յնվ արտադրողական նասարկութիւնների բաշխումն է
թյունն է, կատարյալ պարզութեամբ ցույց է տալիս, վոր կապիտալիստական արտադրողական հարաբերութիւններն անհամատեղելի, անհաշտելի յեն հասարակութեան գոյութեան հետ: Ճգնաժամերը ցույց են տալիս ամբողջ ակնառութեամբ, վոր հասարակութեան գոյութեան համար անհրաժեշտ է վերացնել կապիտալիզմը, հասարակական արտադրութիւնն ազատել կապիտալի գերիշխանութիւնից:

Արտադրութեան նախկին յեղանակների համեմատութեամբ կապիտալիզմը հանդիսացավ հասարակական մի ձև, վորն արագորին գարգացրեց հասարակական արտադրողական ուժերը: Ճգնաժամերը ցույց են տալիս, վոր կապիտալիզմն այնքան է զարգացնել ժամերը ցույց են տալիս, վոր նա արդեն կանցնում է արտադրողական ուժերի մեջ, սակայն գարգացնում է արտադրողական ուժերի վիթխարի քայքայման գնով:

«Ճգնաժամի ժամանակ հասարակական արտադրութեան և կապիտալիստական յուրացման հակասութիւնը վերածվում է յերկու թեմանի ուժերի ամենադաժան բաղխման (Նեգելս, Անտի-Դյուրինգ: Ընդդժումն իմն ե.— 1. Ս.): Հասարակական արտադրութիւնը Ընդդժումն իմն ե.— 1. Ս.): Հասարակական արտադրողական հարաբերութիւնը և գալիս կապիտալիստական արտադրողական հարաբերութիւնների շրջանակներէից, և ուստի խանգարվում է կապիտալիստական արտադրութեան ամբողջ մեխանիզմը:

Ճգնաժամը, դա յերկու թշնամի ուժերի բաղխումն է այս բանի իսկական մտքով: Հասարակական արտադրութիւնը, ինչպես

Թափոխվող շրջանների պարզ սիմպտոմները¹ նա համարում ե նրանց պատճառները (Մարտ, Կապիտալ, 1 հ.):

Ճգնաժամների պատահականությունը ու վերացնելիությունը Թեորիան այնպիսի խղճուկ սնանկացման յենթարկվեց, վոր վերջին ասրիններս բուրժուական քաղաքատնտեսությունն առհասարակ մի կողմ է նետել ճգնաժամների բացատրման ամեն մի փորձ և դրա փոխարեն զբաղվում է դրանց պարզ նկարագրությունով: Կապիտալիզմի ժամանակ ճգնաժամների վերացնելիությունն ապացուցելու խնդիրն իր վրա յե վերցրել սոցիալ-դեմոկրատիան, բուրժուազիայի այս գործակալությունը բանվոր դասակարգի մեջ:

Սոցիալ-դեմոկրատիան չի կարող պարզապես կրկնել բուրժուական տնտեսագետների պնդումները, նա նրանց քողարկում է մարքսիստական ֆրազարանությունը:

Սոցիալ-դեմոկրատիան ունի ճգնաժամների յերկու ամենից ավելի տարածված թեորիա. որանք են՝ 1) դիսպրոպորցիոնալություն թեորիան և 2) թերասպառման թեորիան:

Նախընթաց շարադրանքի մեջ մենք արդեն ցույց տվինք, վոր արտադրության ճյուղերի դիսպրոպորցիոնալությունը և մասսաների սահմանափակ սպառումը բղխում են հասարակական արտադրության և կապիտալիստական յուրացման հիմնական հակասությունից և վոր վոչ դիսպրոպորցիոնալությունը, վոչ ել մասսաների սահմանափակ սպառումը չեն կարող դիտվել իբրև ճգնաժամների պատճառներ. ճգնաժամների պատճառը կապիտալիզմի հիմնական հակասությունն է:

Սոցիալ-ֆաշիստ թեորետիկները ճգնաժամների պատճառը դիտում են մերթ դիսպրոպորցիոնալության, մերթ սպառման նեղ մակարդակի մեջ: Նրանցից վոմանք պնդում են, թե ճգնաժամների պատճառը ճյուղերի դիսպրոպորցիոնալ զարգացումն է և վոր ճգնաժամները վոչ մի ընդհանուր բան չունեն մասսաների պրոլետարական կացություն հետ, իսկ մյուսները պնդում են, վոր ճգնաժամների պատճառը մասսաների թերասպառումն է: Յերկու հայացքների ներկայացուցիչներն ել արտաքուստ կարծես թե կողմնակից են մարքսիստական թեորիային. չի՞ որ Մարքսն ել խոսում եր դիսպրոպորցիոնալության մասին, խոսում եր թերասպառման մասին: Իսկ իրականում այս յերկու թեորիան ել արմատապես հակասում են մարքսիզմին:

Դիսպրոպորցիոնալության թեորիան

Դիսպրոպորցիոնալության թեորիայի ամենաակնազարկը ներկայացուցելը գերմանական սոցիալ-ֆաշիստների առաջնորդներից մեկն է՝ Հիլֆերդինգը, վոր իր թեորիան փոխ է առել Տուգան-Բարանովսկուց: Վերջինս պնդում եր, վոր արտադրության ճյուղերի միջև (I և II ստորաբաժանումների) պրոպորցիոնալությունը պահպանելիս հնարավոր է կապիտալիզմի անճգնաժամը զարգացումը նույնիսկ այն դեպքում, յերբ անձնական սպառումը հասցվի զերոյի: Ուստի ճգնաժամի պատճառը միայն պրոպորցիոնալության խախտումն է, այսինքն դիսպրոպորցիոնալությունը:

Վերև (տես եջ 57) մենք արդեն ըստեյություն վերլուծեցինք այն պարզապ ֆրազի վողջ անմտությունը, վոր արտադրության միջոցների արտադրության և սպառման առարկաների արտադրության միջև հնարավոր է պրոպորցիոնալություն անկախ հենց այս սպառման կացությունից ու չափից: Ուստի մենք այլևս չպետք է վերլուծենք դիսպրոպորցիոնալության թեորիան: Միայն հիշեցնենք, վոր արտադրության դիսպրոպորցիոնալությունը կապիտալիզմի հիմնական հակասությունն անխուսափելի արդյունքն է «Արտադրության անարխիա», «արտադրության պլանաչափության բացակայությունը» — ինչի մասին է խոսում այս արտադրության հասարակական ընույթի և հայտությունները: Արտադրության հասարակական ընույթի և յուրացման անհատական ընույթի հակասության մասին» (ԼեՆԻՆ, II հ., եջ 39):

Բացասելով մասսաների սպառման ցածր մակարդակը, Հիլֆերդինգը դրանով իսկ բացասում է կապիտալիզմի հիմնական հակասությունը, վոր արտադրության ընդարձակման առջև խոչընդոտ է դնում հասարակության սպառման սահմանափակ ուժի կերպարանքով: Բայց կապիտալիզմի այս հիմնական հակասության, դրան ճգնաժամներն անխուսափելի դարձնող պատճառի, բացասումն իբրև ճգնաժամներն անխուսափելի դարձնող պատճառի, վոր հարկավոր է սոցիալ-դեմոկրատներին ապացուցելու համար, վոր կապիտալիզմի ժամանակ ճգնաժամները կարող են վերացվել յեկապիտալիզմի ճյուղերի դիսպրոպորցիոնալությունը, հարթե միայն վերացվի ճյուղերի դիսպրոպորցիոնալությունը, հարկավոր է «կազմակերպված կապիտալիզմի» թեորիայի հիմնավորման համար:

Սոցիալ-դեմոկրատական յերկրորդ թեորիայի — թերասպառման թեորիայի — ամենաակնազարկը ներկայացուցելը մեր արդեն հիշատակած Տարանովն է: Այս թեորիան ել նոր չհնրան ստեղծել է, ինչպես նախընթաց գլխում

¹ Սիմպտոմներ՝ նախանշաններ, ցուցանիշներ:

մենք տեսանք, դեռևս XIX դ. սկզբին շվեյցարական մանր-բուր-
ժուական տնտեսագետ Սիսմոնդին: Սիսմոնդին պնդում էր. թե
քանի վոր ճգնաժամերը բղխում են մասսաների թերասպառու-
ժից և քանի վոր կապիտալիզմի ժամանակ մասսաները դատա-
պարտված են թերասպառման, ապա ճգնաժամերն էլ անվերաց-
նելի յեն: Սրանից Սիսմոնդին յեղրակացնում էր, թե անհրաժեշտ
է վերադառնալ հետ, դեպի մանր արտադրութիւնը:

Ժամանակակից սոցիալ-դեմոկրատիան հանձին Տարնովի և
ուրիշների վերցնում է այս թեորիան և միանգամայն հակադիր
յեղրակացութիւն անում. քանի վոր ճգնաժամը բղխում է թե-
րասպառումից, քանի վոր կապիտալիստները ճգնաժամից պա-
կաս չեն տուժում, քան բանվոր դասակարգը, ապա կապիտա-
լիստներն ուղղակի շահագրգռված են, վոր բանվորներն ավելի
սպառեն: Յեթե կապիտալիստները բանվորներին բարձր աշխա-
տավարձ տան, ապա ճգնաժամերն առմիշտ կվերանան, և Տարնո-
վը քննցնում է բանվորներին այն հեքիաթներով, թե կապիտա-
լիստներն իրենք կբարձրացնեն աշխատավարձը: Սրա համար
միայն անհրաժեշտ է, վոր... բանվորներն ավելի աշխատեն:

Յեթե Սիսմոնդին մասսաների թերասպառումից յեղրակաց-
նում է, թե կապիտալիզմը պրոգրեսիվ չէ և կոչ են անում հետ,
դեպի մանր արտադրութիւնը, ապա Տարնովը նրա նմաններն,
ընդհակառակը, հանգում են կապիտալիզմի շատագոյութիւն,
փորձելով գործն այնպես պատկերել, թե կապիտալիստներն ար-
յամբ են շահագրգռված աշխատավարձի բարձրացումով և վոր
բարձրացումը վերջ կդնի կապիտալիզմի ժամանակվա ճգնաժա-
մերին:

Կապիտալիզմի ժամանակ ճգնաժամերի հաղթահարման սո-
ցիալ-Փաշիստական դեղատոմսերը նույնպես քիչ են որիգինալ
ինչպես և ճգնամերի նրանց բացատրությունները:

Աշխատավարձը բարձրացնելով ճգնաժամերը հաղթահարելու
հրաշագործ միջոցը տակավին անցած դարի վերջին հնարել է
դերմանակաւն բուրժուական տնտեսագետ Չոմբարդը բանվորներին
հիմարացնելու համար:

Վոր աշխատավարձի բարձրացումը չի կարող կանխել ճգ-
նաժամը՝ ցույց է տալիս այն փաստը, վոր հենց ճգնաժամի նա-
խորյակին, այն է՝ արդյունաբերական արտադրութիւն վերելքի
Փազում աշխատավարձը սովորաբար աճում է: Վերելքի շրջանում
աշխատավարձի բարձրացումը սոսկ «ճգնաժամի մրկականիւն է»
(Մարքս, Կապիտալի II հ., էջ 297):

Բայց կարող են տեսլ, թե ինչ նշանակութիւն ունի ար-
տադրութիւնը ու սպառման հակասութիւնը կապիտալիզմի ժա-
մանակ, հակասութիւնը, վոր առաջադրել է Լենինն ընդդէմ բուր-
ժուական ջազագոյութիւնի, վորոնք բացասում են ճգնաժամերի
կապը մասսաների սպառման ցածր մակարդակի հետ:

Կապիտալիզմի ժամանակ արտադրութիւնը ու սպառման հա-
կասութիւնը, վոր հայտարարել է Մարքսը և դարգացրել Լենի-
նը, վոչ մի ընդհանուր բան չունի թերասպառման թեորիայի
հետ: Մենք ավարար սպառումը (վոր իբրև թե բացատրում է
ճգնաժամերը) գոյութիւն է ունեցել տնտեսական ամենատարբեր
ոեթիմների ժամանակ, իսկ ճգնաժամերը կազմում են միայն
մի ոեթիմի՝ կապիտալիստական ոեթիմի տարբերիչ հատկանիշը»
(Լենին, II հ., էջ 36): Հետևաբար բանն առհասարակ անբավա-
րար սպառումը չէ, պարզապես արտադրութիւնը ու սպառման
հակասութիւնը չէ, այլ այս հակասութիւնը ընդլայնել, իբրև կա-
պիտալիզմի հիմնական հակասութիւն արտահայտման ձևի: Այս
բանը չէր կարող տեսնել մանր բուրժուալիստի իդեոլոգ
Սիսմոնդին, այս չեն ուղղում տեսնել կապիտալիզմի սոցիալ-Փա-
շիստական ապոլոգետները:

Բանն այն է, վոր կապիտալիզմը հանուն իր կուտակման
պահանջմունքների ճգնում է անսահմանորեն ընդարձակել հասա-
րակական արտադրութիւնը և հենց ինքն էլ խոչընդոտ է դնում
այս ընդարձակման առջև՝ իջեցնելով մասսաների սպառումը:
Հետևաբար, ամբողջ գործը հասարակական արտադրութիւնը ու
կապիտալիստական յուրացման հակասութիւնն է: Թերասպառ-
ման սոցիալ-Փաշիստական թեորիան այնպես, ինչպես և դիս-
պրոպոգրիտնալիստական թեորիան բացասում է այս հակասու-
թիւնը նպատակ ունենալով ապացուցել ճգնաժամերի վերացնե-
լութիւնը կապիտալիզմի ժամանակ:

Ռ. Լուքսեմբուրգի ճգնաժամերի թեորիան
Ռ. Լուքսեմբուրգի
Բողոքում է նրա կուտակման թեորիայից:
Վերև ցույց արվեց, վոր նա, ճիշտ այնպես, ինչպես և Սիսմոնտին,
անկարելի յի համարում արտադրանքի իրացումը դուռ կապի-
տալիստական հասարակութիւն մեջ: Մասսաների սպառման ցա-
ծը մակարդակի հետևանքով դուռ կապիտալիզմի մեջ պետք է
լինի մշտական գերարտադրութիւն, պերմանենտ ճգնաժամ:
Կապիտալիստական արտադրանքի իրացումը հնարավոր է իբրև
թե «յերորդ անձանց» «արտաքին» վոչ-կապիտալիստական շու-
կայում: Վորչափով վոր կապիտալիստները վաճառում են մանր

արտագրողները շրջանում, այդ չափով կուտակումը տեղի յն
ուեննում հարթ, բայց հենց վոր կրճատվում է այդ էյերորդ ան-
ձանց» պահանջարկը, ճգնաժամն անխուսափելի յի դառնում:

Լենինը ցույց է տվել, վոր թերասպուման սիստեմիայի ան-
թերիան ճգնաժամերը բացատրում է վոչ թե կապիտալիստական
արտադրութեան ներքին հակասութեւններով, այլ արտաքին
յերեւոյթներով: Սիստեմիայի թերիան ճգնաժամերը բացատրում
է բանվոր դասակարգի արտադրութեան ու սպառման հակա-
սութեամբ, յերկրորդ այսինքն Մարքսի թերիան:—(Լ. Ս.)—արտա-
դրութեան հասարակական բնութի և յուրացման մասնավոր
բնութի հավասարութեամբ: Հետեւաբար, առաջինը յերեւոյթները
արմատը տեսնում է «արտադրութեանից դուրս... յերկրորդը՝
հատկապես արտադրութեան պայմաններում» (Լենին II հ., էջ 36):

Լենինի այս խոսքերը լրիվ և ամբողջութեամբ պահպանում
են իրենց ուժը նաև Ռ. Լուքսեմբուրգի վերաբերմամբ:

Բացասելով հավելյալ արժեքի կուտակվող մասի վաճառման
հնարավորութեւնը կապիտալիստական սիստեմի սահմաններում
և ճգնաժամերը բացատրելով «յերրորդ անձանց» պահանջարկի կըր-
ճատումով, Ռ. Լուքսեմբուրգը զրանով իսկ բացատրում է ճգնա-
ժամերը վոչ թե կապիտալիզմի ներքին հակասութեւններով, այլ
կապիտալիզմի հարաբերութեւններով զեպի նրա արտաքին միջա-
վայրը: Հետեւաբար, նա եյապես շեղվել է կապիտալիզմի հիմնա-
կան հակասութեւնից:

ճգնաժամի մտերմաց-
կան-լենինյան բնորոյի
նուսախարչութեւնը

Մենք տեսնում ենք վոր ճգնաժամերը
կապիտալիզմի հիմնական հակասութեամբ
չբացատրելու ամեն մի փորձ ըստ եյու-
թեան այդ հակասութեան բացասումն է: Իսկ կապիտալիզմի հիմ-
նական հակասութեան բացասումը ուղղակի թե անուղղակի ճա-
նապարհով տանում է զեպի հրաժարում պրոլետարական հեղա-
փոխութեւնից:

Ճգնաժամերի մարքսիստական-լենինյան թերիայի հեղա-
փոխական մեծ նշանակութեւնն այն է, վոր նա ցույց է տալիս,
վոր ճգնաժամերը բխում են կապիտալիզմի բուն, եյութեւնից
և ուստի կարող են վերացվել միայն կապիտալիզմի հետ միասին:
Ճգնաժամերի մեջ ամեն անգամ ավելի լրիվ ու սուր կերպով
մերկանում են կապիտալիզմի բոլոր հակասութեւնները և զբա-
վորվում է կապիտալիզմի անընդունակութեւնը կառավարելու
հասարակական արտադրութեւնը: Ճգնաժամերն ամեն անգամ
իրենց ամբողջ հասակով հարց է դնում կապիտալիզմը վերացնե-

լու անհրաժեշտութեան, պրոլետարական հեղափոխութեան ան-
հրաժեշտութեան մասին: «Մի կողմից արտադրութեան կապիտա-
լիստական յեղանակն ինքն է դրսևորում իր անընդունակութեւն-
ը հետագայում կառավարելու արտադրողական ուժերը, մյուս
կողմից՝ արտադրողական ուժերն իրենք հարաճուն ուժով նեա-
վում են զեպի այս հակասութեան վոչնչացումը, զեպի իրենց
աղատագրումն իրենց կապիտալիստական հատկութեւններից:
զեպի նրանց բնույթի՝ հասարակական տրտադրողական ուժերի
բնույթի փաստական անումը» (Նեգել, Անդի-Պյուրիզմ):

Ճգնաժամերի այս հեղափոխական նշանակութեւնն առանձ-
նապես ընդգծում էր Լենինը: «Պրոլետարիատի բանական ամբանում
և բոլոր յերկիրներում: Նրա դիտակցականութեւնը, համախմբ-
վածութեւնն ու վճռականութեւնն աճում են վոչ թե որերով,
այլ ժամերով: Յեկ կապիտալիզմը հաջողութեամբ հող է տանում
ճգնաժամերի հաճախացման մասին, վորոնցից ոգտվում են այս
բանակը կապիտալիզմի խորտակման համար» (Լենին, XII հ.,
էջ 93):

Ճգնաժամերի նշանակութեւնն լենինյան հարցադրումն ա-
մենասերտ կերպով կապված է այն անհաշտ պայքարի հետ, վոր
Լենինը մղում էր վերարտադրութեան ու ճգնաժամերի մարքս-
յան թերիայի քննադատները դեմ, մարքսյան թերիայի մեա-
կողմանի մեկնաբանութեան վորձերի դեմ իբրև դիսպրոպրեցիո-
նալութեան կամ իբրև թերասպուման թերիայի:

Այս պայքարում Լենինը, բացելով ճգնաժամերի մարքսյան
թերիայի ամբողջ խոր բովանդակութեւնը, զարգացրեց կապի-
տալիզմի հիմնական հակասութեան մարքսյան ուսմունքը, իբրև
ճգնաժամերի պատճառ, ինչպես և փայլուն կերպով մշակեց ճգնա-
ժամերի մարքսյան թերիայի նաև մյուս կողմերը: Լենինը ցույց
տվեց, վոր Մարքսը արտադրութեան ու սպառման հակասութեւնը գի-
լութեւնը և արտադրութեան ու սպառման հակասութեւնը՝ հասարակա-
տում էր իբրև կապիտալիզմի հիմնական հակասութեան՝ յուրացման հակասու-
կան արտադրութեւնն ու կապիտալիստական յուրացման հակասու-
թեան արտահայտութեան յերկու կողմը, յերկու ձևը: Պայքարելով
թեան արտահայտութեան յերկու կողմը, առանձնապես այն
մարքսիզմի բոլոր բացահայտ թշնամիները, առանձնապես Ֆրադաբանու-
«մարքսիստներին» դեմ, վորոնք մարքսիստական Ֆրադաբանու-
թեամբ թագնված՝ իրականամ աղճատում ու կեղծում էին մարք-
սիզմը, ամորձատելով նրա հեղափոխական բովանդակութեւնը,
«Լենինը սրեց ու զարգացրեց Մարքսի ուսմունքը կապիտա-
լիզմի հիմնական հակասութեան վերաբերյալ իբրև ճգնաժամերի

պատճառի: Յե՛վ իբրև հակակշիռ ուղորտունիզմին, վոր ձգտում էր շեղել բանվոր դասակարգին կապիտալիզմի դեմ հեղափոխական պայքար մղելու ուղուց դեպի «զուրկ տնտեսական» պայքարի ուղին, դեպի «հեֆոբիզմի ու բուրժուազիայի հետ համաձայնվելու ուղին», «թեորիաներ» հնարելով կապիտալիզմի ժամանակվա ճգնաժամերը վերացնելու հնարաձորութեան մասին, Լենինն ամբողջ հասակով պրոլետարիատի առաջ խնդիր դրեց հեղափոխական դասակարգային պայքար մղելու կապիտալիզմի տապալման համար, վորը նաև վերջ կդնի ճգնաժամերին:

«Ճգնաժամը ցույց է տալիս, վոր բանվորները չեն կարող սահմանափակվել կապիտալիստներից ստանալիք առանձին զիջումներին համար պայքարելով... գալիս է կրախը, և կապիտալիստները վաճ միայն հետ են վերցնում իրենց տված զիջումները, այլև ոգտվում են բանվորների անոգնականութեամբ վարձնել ավելի իջեցնելու համար: Յե՛վ այսպես անխուսափելիորեն կշարունակվի մինչև այն ժամանակ քանի դեռ սոցիալիստական պրոլետարիատի բանակները չեն տապալի կապիտալի ու մասնավոր սեփականութեան գերիշխանութունը» (Լենին, IV հ., էջ 166—167):

5. ՃԳՆԱԺԱՄԵՐԻ ԱՆԿԱՐԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԽՍՀՄ-ՈՒՄ :

Պրոլետարական հեղափոխութեանը վոչնչացնում է կապիտալի իշխանութեանը հասարակական արտադրողական ուժերին նկատմամբ և զբանով իսկ վերացնում հասարակական արտադրութեան և կապիտալիստական յուրացման հակառութեանը, վերացնում է ճգնաժամերի բուն պատճառը: Յեթե կապիտալը ձգտում է տնտեսմանորեն ընդարձակել արտադրութեանը կուտակման նպատակով, յեթե այս կուտակումը պայմանավորում է հասարակութեան սպառողական ուժը, վոր խոչընդոտ է դնում արտադրութեան աճման առջև, ապա ԽՍՀՄ-ում, ընդհակառակը գնողականութեան աճումն առաջ է անցնում արտադրութեան աճումից:

Արտադրողական ուժերը ծառայում են պահանջմունքների բավարարման նպատակներին, իսկ մասսաների պահանջմունքներն անխախտորեն պետք է աճեն: Նրանք աճում են և անսահմանորեն պետք է աճեն, վորովհետև նրանք սահմանափակված չեն կապիտալով: Այսպիսով արտադրութեան աճմանը չի հակադրված մասսաների ցածր սպառողական ուժը, ընդհակառակը՝ սպառումը առաջ է մղում արտադրութեանը: «Մեզ մոտ՝

ԽՍՀՄ-ում մասսաների սպառման (գնողունակութեան) աճումն ամբողջ ժամանակ առաջ է անցնում արտադրութեան աճումից, առաջ է մղում նրան» (Սալիև, Լենինիզմի հարցեր): «Աշխատավորութեան նյութական դրութեան սխտեմատիկ բարելավումն ու նրանց պահանջմունքների (գնողունակութեան) անընդհատ աճումը մշտապես լինելով արտադրութեան ընդարձակման աճող պատճառ, բանվոր դասակարգին յերաշխսավորում է գերարտադրութեան ճգնաժամերից, գործազրկութեան աճումից և այլն» (Նույն տեղում):

Չնայած ԽՍՀՄ չինական պարսպով չի անջատված կապիտալիստական աշխարհից, չնայած մենք առևտրական կապեր ունենք համաշխարհային տնտեսական ճգնաժամի ջրապտույտի մեջ մտցված կապիտալիստական յերկիրների հետ, ճգնաժամը չէր կարող տարածվել մեր տնտեսութեան վրա, վորովհետև մեր արտադրութեան սխտեմն ինքը բացառում է ճգնաժամերի հնարավորութեանը: Կապիտալիստական համայն աշխարհը վողողած համաշխարհային տնտեսական ճգնաժամի ալիքները ջարդվում են ընդհարվելով մեր տնտեսութեան սոցիալիստական սխտեմին: Սա հարկելով մեր տնտեսութեան սոցիալիստական սխտեմին: Սա այնքան ահներև փաստ է, վոր ԽՍՀՄ բոլոր թշնամիները հարկադրված են ընդունելու:

Տրոցկին պնդում էր, վոր մեր տնտեսութեանը գտնվում է համաշխարհային կապիտալիստական տնտեսութեան վերահսկողութեան տակ և վոր կապիտալիստական յերկիրներին ճգնաժամը կընդգրկի նաև ԽՍՀՄ: Այս պնդումը ամենասերտ կապ ունի կընդգրկի նաև ԽՍՀՄ: Այս պնդումը կառուցելու անկարելիութեանը բերում է ԽՍՀՄ-ում սոցիալիզմ կառուցելու անկարելիութեանը և այն բանին, վոր մեր տնտեսութեանը պետ կապիտալիզմի սխտեմ է: Կապիտալիստական յերկիրներին ամենաուժեղ ճգնաժամը և սոցիալիստական արտադրութեան բուն աճումը ԽՍՀՄ-ում շուտ ցիալիստական արտադրութեան բուն աճումը և մերկացնում նրա հակահեղափոխական բնույթը:

ԽՍՀՄ-ում ճգնաժամերի հնարավոր լինելու հարցի առթիվ հանդես յիկան նաև աջ ուղորտունիստները: Յինելով կուլակի՝ սոցիալիզմի մեջ ներաճելու իրենց թեորիայից, բացասելով կուլակի յերաճման անհրաժեշտութեանը, և ինդուստրացման արագ լեկտիվացման անհրաժեշտութեանը, ալիքը հանձին իրենց նախկին թեորեմալի անհրաժեշտութեանը, ալիքը հանձին իրենց նախկին թեորեմալի կան առաջնորդ ընկ. Բուխարինի առաջադրեցին մի թեորեմալի, թե ինդուստրացման արագ տեմպը դիսպրոպորցիոնալութուն դրիս, թե ինդուստրացման արագ տեմպը դիսպրոպորցիոնալութուն է ստեղծում մեր տնտեսութեան մեջ (այն է՝ դիսպրոպորցիոնալ

լուծելու արդյունաբերութեան ու գյուղատնտեսութեան միջև), խախտում է մեր տնտեսութեան «սեկտորներէ հավասարակշռութեանը» և վոր սա անխուսափելիորեն պետք է տանի դեպի ճգնաժամ: Ընդ է, ընդ. Բուխարինը սրա հետ միասին պընդում էր, թե սա հատուկ ճգնաժամ է, պերարտադրութեան ճգնաժամ չէ, այլ «շուռ տված» ճգնաժամ: Բայց սա ամենևին չի փոխում աջերի թեորիայի բուն ելուծյունը, վոր հանգում է այն բանին, վոր ինդուստրացման արագ տեմպը հարուցում է «տնտեսական հիմնական պրոպորցիաների խախտում յերկրում» (Բուխարին, Տնտեսագետի դիտողութեաններ):

Այս հայացքը բղխում է մեր վերև վերլուծած աջ ոպորտունիստական «աշխատանքային ծախսումների որենքից» և «հավասարակշռութեան» թեորիայից:

Ընդ. Բուխարինը պերարտադրութեան մարքայան թեորիան դիտում էր իբրև հավասարակշռութեան թեորիա և հավասարակշռութեան այս չափանիշը կիրառում էր նմանապես և արդյունաբերութեան ու գյուղացիական տնտեսութեան հարաբերակցութեան հարցի վերաբերմամբ սոցիալիստական շինարարութեան պայմաններում: Սոցիալիստական շինարարութեան համար իբրև թե անհրաժեշտ է հավասարակշռութեան գյուղատնտեսական հատվածի և սոցիալիստական արդյունաբերութեան միջև:

Հավասարակշռութեան աջ ոպորտունիստական այս թեորիան լրիվ ու ամբողջութեամբ մերկացրեց ընդ. Ստալինը, վորը աջերի դեմ պայքարելիս պերարտադրութեան մարքայատեղանքին յայն թեորիան վարճացրեց սոցիալիստական շինարարութեան ինդիքները վերաբերմամբ: Սոցիալիստական ընդլայնած վերարտադրութեան անմտութեան և առանց գյուղատնտեսութեան ընդլայնած վերարտադրութեան: Բայց «մեր մանր-գյուղացիական տնտեսութեան», — ասում է ընդ. Ստալինը, — վոչ միայն իբր մասսայով ամեն տարի չի իրականացնում ընդլայնած վերարտադրութեանը, այլև, ընդհակառակը, նա միշտ չէ, վոր հնարավորութեան ունի իրականացնելու նույնիսկ պարզ վերարտադրութեանը... Կարելի չէ արդյոք քիչ թե շատ տեղական ժամանակաշրջանում խորհրդային իշխանութեանն ու սոցիալիստական շինարարութեանը խարսխել յերկու ջարբեր հիմքերի վրա՝ ամենախոշոր ու միացյալ սոցիալիստական արդյունաբերութեան և ամենամանրագույն ու հետամնաց մանր-տպրանքային գյուղացիական տնտեսութեան վրա: Վոչ, չի կարելի: Սա յերբեք

պետք է վերջանա ամբողջ ժողովրդական տնտեսութեան լիակատար քայլաբայութեամբ» (Ստալին, Լենինի դիմի հարցեր):

Այլերի պահանջը սեկտորների հավասարակշռութեան պահանջն լու վերաբերյալ ըստ ելուծյան այն պրոպորցիաների պահանջման պահանջն է ժողովրդական տնտեսութեան մեջ, վոր դասավորվել են կապիտալիզմի ժամանակ: Բայց հարց է ծագում, թե ինչպէս կարելի չէ սոցիալիզմ կառուցել չխախտելով այս «պրոպորցիաները»: Չէ վոր այս պրոպորցիաներն արտահայտում են մասսաների ցածր սպասում, նրանք սահմանված են կապիտալի պահանջմունքներով, և վոչ թե հասարակութեան պահանջմունքներով: Ինչպէս կարելի չէ սոցիալիզմ կառուցել չկիրառելով ինդուստրացման արագ տեմպ, վորը միակն է, վոր հնարավորութեան է տալիս համայնացնելու մանր-գյուղացիական տնտեսութեանները: Վոչ մի կերպ չի կարելի: Ուստի հավասարակշռութեան թեորիան և աշխատանքային ծախսումների որենքը արտահայտում են վոչ այլ ինչ, բայց յեթե նահանջ սոցիալիստական շինարարութեան դժվարութեանները հանդեպ, հրաժարում այս շինարարութեանից, մանր ապրանքային արտադրութեան հավերժացում և դրանով նրա ստեղծած կապիտալիզմի հավերժացում:

Արտադրական ապարատի ընդարձակման ժամանակ արտադրության աճման այս կտրուկ յանկման հետևանքը ձեռնարկայինների խոնրիկացումն էր բերաբեռնումն է, վորը նույնիսկ վերելքի տարիներին հիմնական կապիտալիստական յերկիրներում կազմում եր արտադրական ապարատի (մի հերթով աշխատելիս) կեսից ավելին: Արդյունաբերության թերաբեռնումը առանձնապես կտրուկ կերպով ուժեղացավ արդի անտեսական ճգնաժամի հետևանքով: ամենակարևոր կապիտալիստական յերկիրների արդյունաբերական ամենակարևոր ճյուղերում արտադրական ապարատը հաճախ ոգտագործվում ե ընդամենը միայն 10—20%-ով: Արտադրական ապարատի այս խոնրիկական թերաբեռնման հիմնական պատճառը մասսաների կյանքի մալաբարակի կտրուկ իջեցումն է և բազմազան պատկերի աղբյուրացումն ուժեղացումը:

Պատերազմի ծախսերը կազմեցին պատերազմած յերկիրների ամբողջ ազգային հարստության կեսը: Հասկանալի յե, վոր բուրժուական այս ծախսերի հատուցումը բոլոր ուղիներով գցում ե բանվոր դասակարգի ուսերին: Բայց բանը սրանով չի սպառվում: Պատերազմից հետո կտրուկ կերպով մեծացան «խաղաղ»

ժամանակվա ռազմական ծախսերը մինչև պատերազմը կատարվող այդ ծախսերի համեմատությամբ. տեխնիկայի պատրաստությունն է տեսնվում նոր պատերազմի համար (պատերազմից հետո սպառողինումներն ու ռազմական ծախսերի աճման վերաբերյալ տվյալները տես ներքև): Բուրժուական աշխատավորական մասսաներին ստիպում ե հատուցել վոչ միայն անցած պատերազմի այլև նոր պատերազմի պատրաստության ծախսերը:

Այսպիսով պատերազմից հետո խիստ աճում են վոչ արտադրական ծախսերը նախապատերազմյան ժամանակվա համեմատությամբ: Այդ ծախսերը ծածկելու համար բուրժուական դեմումն է բանվոր դասակարգի կյանքի մակարդակի իջեցման վոչ միայն աշխատավարձի իջեցնելու աշխատորը յերկարացնելու և այլ միջոցներով, այլև հարկերի միջոցով, վորոնք պատերազմից հետո հակայական չափերով աճել են:

Հեթապեթագլյան ագրարային ճգնաժամի հետևանքով, վոր տևում ե արդեն ավելի քան 13 տարի, խիստ իջել ե նաև գյուղացիական մասսաների գնողունակությունը: Պատերազմից հետո կրճատվել ե յեվրոպական յերկիրների ցանքերի տարածությունը և ընդարձակվել անդրովկիանյան յերկիրների ցանքերի տարածությունը: Բայց պատերազմից հետո համաշխարհային ցանքի տարածության մի մասն ավելորդ դուրս յեկավ, գլխավորապես մասսաների սպառման կրճատման հետևանքով: Այսպես որինակ բնակչության մի շնչին ընկնող ցորենի ու հաճարի միջին տարեկան սպառումը Անգլիայում 1909—1913 թթ. կազմում եր 164,4 կլգ., իսկ 1924—1925 թթ.—153,3 կլգ., և համապատասխան կերպով Գերմանիայում՝ 254,7 և 149 կլգ., Ֆրանսիայում՝ 243,8 և 213,6 կլգ., ՀԱՄՆ-ում՝ 178,6 և 152,5 կլգ.: Խիստ կրճատվեց բամբակի սպառումը մասամբ մասսաների գնողական ուժի կրճատման հետևանքով, մասամբ ել արհեստական մետաքսի միջոցով բամբակեղեն գործվածքների դուրս մղման հետևանքով: Կրճատվեց նաև գյուղատնտեսական հումքի մյուս տեսակների սպառումը: Բան զուգընթաց հետպատերազմյան գյուղատնտեսության մեջ արտադրեցին բավականաչափ տեխնիկական տեղաշարժեր (տրակտորի և կոմբայնի կիրառումը), վորոնք ամենից առաջ հարվածեցին մանր ու միջակ գյուղացությանը: Բոլոր յերկիրներում և առանձնապես գաղութներում ու կիսագաղութներում գյուղացուական քայքայման պրոցեսը չտեսնված չափեր ընդունեց: Այսպիսով առաջացավ գյուղացիության բազմամիլիոն մասսաների ստեղծման ուժի անկումը:

կում, թե իմպերիալիզմը կուրս է վերցրել զաղութները դարձնելու
ինքնուրույն արդյունաբերական տեսակետից դարգացած յերկիր-
ներ, չի նշանակում գաղութների «ապագաղութացում»։ «Ապա-
գաղութացման» թեորիան սոցիալ-դեմոկրատիան առաջադրել է
նպատակ ունենալով իր իմպերիալիստական բուրժուազիայի քա-
ղաքականութիւնը պատկերել իբրև պրոգրեսիվ քաղաքականու-
թյուն։ Իրականում «ապագաղութացման» թեորիան վոչ մի ընդ-
հանուր բան չունի իրականութեան հետ։ Մայրերկիրները գաղութ-
ներում թույլ են տալիս զարգացնելու թեթև ու արդյունահանող
արդյունաբերութիւնը և ամեն կերպ խոչընդոդ են հանդիսանում
մեքենաշինութեան զարգացմանը, այսինքն արդյունաբերութեան
այն ճյուղի, վորի զարգացումը կնշանակեր իսկական ինդուս-
տրացում։

Թույլ տալով արդյունաբերութեան զարգացումը գաղութ-
ներում իմպերիալիստները դրա հետ միասին արգելակում են նրա-
զարգացումը։ Հինց դրանով իմպերիալիզմի ճնշումը վոչ թե թու-
լանում է, այլ ուժեղանում։ Իմպերիալիստական ճնշման հինց այժ
ուժեղացումը գաղութներում պատերազմից հետո հանդիսանում է
պատճառներից մեկ այն հսկայական թափի ու խորութեան, վոր
ձեռք բերեց հետպատերազմյան հեղափոխական-ազատագրական
շարժումը գաղութներում։

Իմպերիալիստական կեղեքման ուժեղացումը գաղութներում
պայմանավորված է նրանով, վոր պատերազմից հետո, ինչպես
ցույց կտրվի ստորև, ուժեղացավ իմպերիալիստական յերկիրների
զարգացման անհամաչափութիւնը և նրանց միջև սրվեց պայքարն
աշխարհի նոր վերաբաժանման համար։ Ամեն մի իմպերիալիստա-
կան յերկիր ջղաձգորեն կառչում է իր գաղութներին, իսկ այն
գաղութներում, վորոնք մի վորևե իմպերիալիստական յերկրի
մոնոպոլ սեփականութիւնը չեն, ինչպես որինակ Չինաստանը,
տեղի յե ունենում անընդհատ պայքար իմպերիալիստական գի-
շատիչների միջև իրենց դիրքերի ամրացման ու ընդարձակման
համար։

Գաղութներն ազրարային յերկիրներ են։ Հետպատերազմյան
ազրարային ճգնաժամի խորտակիչ ներդրութիւնն ամենից ա-
ռաջ արտահայտվեց գաղութների աշխատավոր գյուղացիութեան
բազմամիլիոն մասսաների քայքայումով ու աղքատացումով։ Այժ
հանգամանքն ուժեղացնում է գաղութների հեղափոխական շար-
ժումը։

Վերջապես, Խորհրդային Միութեան գոյութիւնն իր ազգա-

յին քաղաքականութեամբ արագացնում ու առանձին ուժ է տա-
լիս գաղութային հեղափոխութեաններին։ Հոկտեմբերյան հեղա-
փոխութեանից հետո հեղափոխական-ազատագրական շարժման
առջև գաղութներում բացվում է այնպիսի հեռանկար, վորպիսին
չի յեղել մինչև պատերազմը, այն է՝ պրոլետարական պետութեան
հետ միացումը, սոցիալիստական պետութեաններին սխտեմի մեջ
մտնելը և սրա հիման վրա նյութական ու կուլտուրական արագ ա-
ճումը։ «Սոցիալիզմի կենտրոնների առկայութեան դեպքում հանձին
խորհրդային հանրապետութեաններին և նրանց տնտեսական հա-
րաճուն հզորութեան, իմպերիալիզմից անջատված գաղութները
խարհային սոցիալիզմի ինդուստրիալ ոճախներին, ներգրավվում
են սոցիալիստական շինարարութեան հունի մեջ, մեջ տալով կա-
պիտալիզմի իբրև գերիշխող սխտեմի հետագա զարգացման ֆազը
և տնտեսական ու կուլտուրական արագ պրոցեսի հնարավորու-
թիւն ստանում» (Կոմինտերնի ծրագրերը)։

Գաղութային հեղափոխութեաններն արդեն բարձրացել են
այնպիսի աստիճանի, վոր Չինաստանի տերիտորիայի հսկայա-
կան մասում առաջացել է խորհրդային իշխանութիւն, վորը փայ-
լուն կերպով դիմացել է իմպերիալիստների ու նրանց չինական
գործակալներին բազմիցս կատարած ռազմական ուժով խեղդելու
փորձերին։ Խորհրդային չինաստանն ընդգրկում է 700 հազ. քառ-
կում. տերիտորիա և ունի 350 հազ. հոգուց կազմված կանոնավոր
կարմիր բանակ ու 600 հազ. հոգուց կազմված զինված պարտի-
զանական ջոկատներ։

Չինաստանի տերիտորիայի բազմականաչափ մասում խոր-
հրդային հեղափոխութեան հաղթանակը հսկայական նշանակու-
թիւն ունի չինական մեծ հեղափոխութեան և մյուս գաղութնե-
րում հեղափոխական շարժման հետագա ծավալման համար և իր
ընդմահացու վտանգ է թաղցնում ճապոնական իմպերիալիզմի
համար նրա կողմից ԽՍՀՄ վրա հարձակվելու դեպքում։

«Խորհրդային հեղափոխութեան հաղթանակները Չինաստա-
նում, պարտիզանական պատերազմը Մանջուրիայում, հեղափո-
խութեան գեներալի աճում ճապոնիայում, գաղութային ժողովուրդ-
ների ազատագրական շարժումը նոր ռազմաճակատ են ստեղծում
իմպերիալիստների թիկունքում։ Չինաստանի խորհրդային հեղա-
փոխութեանը դարձել է համաշխարհային հեղափոխութեան խո-
շոր ֆակտոր» (ԿԻԳԿ XIII պլենումի թեղիաները)։

Պայթար առաջինի նոր վերաբաժանման համար

Վերլուծենք այն փոփոխությունները, վոր պատերազմն ու հետպատերազմյան զարգացումը մտցրել են իմպերիալիստական յերկրների հարաբերությունների մեջ:

1914 — 1918 թ. թ. համաշխարհային իմպերիալիստական պատերազմը վերջացավ կենտրոնական Ֆեդերալայի պետությունների պարտությունով: Պատերազմի այս յելքի հիման վրա աշխարհի վերաբաժանումն ամրապնդվեց Վերսալի դաշնագրով: Գերմանիան զրկվեց իր գաղութներէց, նրա վրա բարդվեց ռեպարացիաների (պատերազմի ծախսերի հատուցման) բեռը: Գերմանիայի գաղութներն անցան Ֆրանսիային, Անգլիային, Բելգիային և Իտալիային:

Բայց պատերազմի հետևանքով արտասովոր չափով ուժեղացան ՀԱՄՆ, վորոնք պատերազմի ժամանակ ֆինանսավորում էին Անգլիային ու Ֆրանսիային: Գերմանիայի ու ավստրիայի դեմ պատերազմած «դաշնակիցներէ» ընդհանուր պարտքը Միացյալ Նահանգներին կազմում եր 20 միլիարդ նախապատերազմյան ռուբլի: Գերմանիայի դաշնակիցներին վճարած ռեպարացիաներն ամբողջությամբ գնում էին ՀԱՄՆ պարտքերի վճարման վրա: Այս պարտքը ՀԱՄՆ ոգտագործում են իբրև յեվրոպական պետությունների վրա տնտեսական ու քաղաքական մշտական ճնշում գործադրելու մի գործիք:

Պատերազմից հետո ՀԱՄՆ վճռական գերակշռություն ստացան համաշխարհային ամբողջ կապիտալիստական տնտեսություն մեջ: Նրանք իրենց մեջ կենտրոնացրին համաշխարհային ամբողջ արդյունաբերական արտադրանքի կեսը և վոսկու համաշխարհային պաշարի մոտ կեսը:

Պատերազմն ուժեղացրեց զարգացման անհամաչափությունը: Այսպես, 1929 թ. կարևորագույն յերկրների արտադրանքը նրանց նախապատերազմյան արտադրանքի համեմատությամբ կազմում եր, ՀԱՄՆ-ում՝ 175,3%, Անգլիայում՝ 98, Գերմանիայում՝ 105,4, Ֆրանսիայում՝ 139: Անգլիայի բաժինը չուղուսի համաշխարհային արտադրանքի մեջ 1913 թ. 13,1%-ից 1927 թ. իջավ մինչև 8,6 ի, իսկ ՀԱՄՆ բաժինը 39,8-ից մինչև 42,8%-ի: Անգլիայի բաժինը պողպատի համաշխարհային արտադրանքի մեջ 10,2-ից իջավ մինչև 9,3%-ի, իսկ ՀԱՄՆ բաժինը 41,6-ից հասավ 44,7%-ի:

Համաշխարհային առևտրի մեջ փոփոխվեց նաև կարևորագույն իմպերիալիստական յերկրների դերը: 1913 թվից մինչև

1927 թ. Գերմանիայի բաժինը 12,6-ից իջավ 9,8%-ի, Ֆրանսիայի բաժինը՝ 9-ից 6,6%-ի, Անգլիայի բաժինը՝ 16,1-ից 14,1%-ի, իսկ ՀԱՄՆ բաժինը՝ 10,1-ից ավելացավ և հասավ 14,2-ի: ՀԱՄՆ Անգլիային՝ նախապատերազմյան իմպերիալիստական այս ամենաուժեղ յերկրին դուրս են շարտում համաշխարհային շուկայի իր տնտեսական դիրքերէց: Սա յերևում է հետևյալ աղյուսակից:

Անգլիայի և ՀԱՄՆ մասնակցությունը ներմուծման մեջ (սակասեցում)

	Հարավ.-Ամերիկայի		Զինաստանի		Ճապոնիայի	
	1911—1913թ.	1927 թ.	1913 թ.	1927 թ.	1913թ.	1926 թ.
Անգլիա . . .	28,3	19,7	36,9	28,0	16,8	7,2
ՀԱՄՆ . . .	14,4	30,8	6,0	16,2	16,8	28,6

Կապիտալների արտահանման մեջ նույնպես ՀԱՄՆ առաջ են անցել Անգլիայից ու Ֆրանսիայից, վորոնք մինչև պատերազմը առաջին տեղն էին զբաղում կապիտալների համաշխարհային արտահանման մեջ: Այսպես՝ կապիտալների արտահանումն Անգլիայից 1913 թ. 880 միլ. դոլարից 1928 թ. իջավ 740 միլ. դոլարի, այս նույն ժամանակամիջոցում կապիտալների արտահանումը Ֆրանսիայից նվազել է 225 միլ. դոլարից մինչև 180 միլ. դոլար, իսկ ՀԱՄՆ-ից 50 միլ. դոլարից հասել է 934 միլ. դոլարի: Պատերազմից հետո ՀԱՄՆ սկսեցին կապիտալ արտահանել Ֆեդերալ պապիտալորպես Գերմանիա: Շատ արագ է աճում կապիտալների պապիտալորպես ՀԱՄՆ-ից գաղութները. 1913 թ. մինչև 1928 թ. գաարտահանումը ՀԱՄՆ-ից գաղութները. 1913 թ. մինչև 1928 թ. գաարտահանումը ՀԱՄՆ-ից գաղութները ավելացան 194%-ով, դուրսերում ներդրված ՀԱՄՆ կապիտալներն ավելացան 194%-ով, անգլիական ներդրումները 18%-ով, իսկ ֆրանսիականները՝ 10%-ով: Այդ դեպքում ՀԱՄՆ Անգլիային դուրս են մղում իր կապիտալներէց. 1913 թ. 1.860 միլ. դոլար, իսկ ՀԱՄՆ ներդրումները՝ 417 միլ. պատերազմից հետո պատկերը կտրականապես փոխվեց—Անգլիայի կապիտալները կանադայում կազմում էին 1931 թ. 2500 միլ. դոլ., իսկ ՀԱՄՆ՝ 4.200 միլ. դոլար:

Իմպերիալիստական յերկու խոշորագույն յերկրների ուժեղի հարաբերակցություն այս արագ փոփոխությունը միանգամայն

չի համարատախանում պատերազմից հետո դասավորված աշխարհի տերրիտորիալ բաժանումը: Պատերազմի հետևանքով ՀԱՄՆ գաղութային տիրապետությունները չմեծացան: Ըստ տերրիտորայի՝ ՀԱՄՆ գաղութները կազմում են բոլոր գաղութների ընդամենը 1,9%⁰, իսկ Անգլիայի գաղութները՝ 43,8%⁰: Ըստ բնակչության ամերիկյան գաղութները կազմում են ամբողջ գաղութային բնակչության 3,3%⁰, իսկ անգլիական գաղութները՝ 65,5%⁰:

Պատերազմից հետո իմպերիալիստական պետությունների միջև յեղած բուր հակասություններից ամենագլխավորը Անգլիայի ու ՀԱՄՆ միջև յեղած հակասությունն է:

Իմպերիալիստների բանակում այս գլխավոր հակասությունից հետո գալիս են հակասությունները ՀԱՄՆ և Ճապոնիայի միջև, Անգլիայի ու Ճապոնիայի միջև, Ֆրանսիայի ու Անգլիայի միջև, Ֆրանսիայի ու Գերմանիայի միջև, Իտալիայի ու Ֆրանսիայի միջև, Իտալիայի ու Գերմանիայի միջև և մի ամբողջ շարք այլ ավելի պակաս խոշոր հակասություններ: Դրանցից վերջին ժամանակներս առանձնապես ուժեղացել են հակասությունները Ճապոնիայի, ՀԱՄՆ ու Անգլիայի միջև, Ինչպես և Գերմանիայի, Ֆրանսիայի ու Իտալիայի միջև:

Ճապոնական իմպերիալիզմի զավթողական պատերազմը Չինաստանում և նրա ձգտումները հետագայում զավթումներ կատարելու խաղաղ ուղիներուսի ավարանում՝ սպառնում են ՀԱՄՆ և Անգլիայի հիմնական «կենսական» իմպերիալիստական շահերին: Այս յերեք իմպերիալիստական գերատիրոջների հակասություններն այստեղ հասել են անսխալ ընթաց սրություն: «Համաշխարհային նոր պատերազմի հրդեհը կրոնկվի խաղաղ ուղիներուսի ավարանում» (ԿիԳԿ XIII պլենումի թեզիսները):

Համաշխարհային առաջին պատերազմից հետո անցած շրջանում փոփոխվել է նմանապես պարտված Գերմանիայի ու նրան հաղթողների ուժերի հարաբերակցությունը: Գերմանիան արագ վերականգնեց իր արդյունաբերությունը և իր տեխնիկայով ու արդյունաբերական նշանակությունը առաջին տեղը գրավեց ՀԱՄՆ-ից հետո: «Գերմանիան պահանջում է իմպերիալիստական լիակատար իրավագոր պետություն ղրություն... Գերմանիան հանդիսանում է իմպերիալիստական ամենասուր ու լարված կոնֆլիկտների կարևորագույն կենտրոններից մեկը» (ԿիԳԿ XII պլենումի թեզիսները): Յեվրոպայում առանձնապես ուժեղացավ հակասությունների լարումն այն ժամանակ, յերբ Գերմանիայում իշխանություն գլուխ անցան ֆաշիստները: «Գերմանիայի ֆաշիստա-

կան կառավարությունը պատերազմի դիտավոր հրձիգն է Յեվրոպայում... Յեվրոպան դարձել է վառոչի պահեստ, վորն ամեն բուսի կարող է պայթել:

Ոգտագործելով Յեվրոպայի պատերազմի նախորդակի տագնապը և Հեռավոր Արևելքի անցքերը, անգլիական ու ամերիկյան իմպերիալիզմն ուժեղացնում են իմպերիալիստական վճռական մարտի պատրաստությունն Ատլանտյան ու Սաղաղ ուղիներուսի ընդհանրում համաշխարհային հեղեմոնիա ձեռք բերելու համար» (ԿիԳԿ XIII պլենումի թեզիսները):

Տեղային տեմպով է ընթանում իմպերիալիստական նոր պատերազմի ռազմատեխնիկական պատրաստությունն աշխարհի վերաբաժանման համար:

Իմպերիալիստական հինգ գլխավոր պետությունների (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, ՀԱՄՆ, Ճապոնիա) բանակների քանակը 1913/14 թ. 1846 հազար մարդուց 1932/33 թ. ավելացել է հասել է 2145 հազար մարդու: Իսկ յեթե սրան ավելացնենք Գերմանիայի, Լեհաստանի, Ռումինիայի, Չեխո-Սլովակիայի և մի շարք ուրիշ, ավելի մանր պետությունների բանակների քանակը, ապա մենք կստանանք 4060 հազար մարդ: Իմպերիալիստական հինգ գլխավոր պետությունների ռազմական ծախսելը 1914 թ. 1182 միլ. դոլարից 1931 թ. հասել է մինչև 3500 միլ. դոլարի: Յեթե սրան ավելացնենք այս պետությունների պատերազմական պարտքերի վճարման գումարը, ապա 1931 թ. համար մենք կստանանք մի հսկայական գումար՝ 8380 միլ. դոլար ռազմական ծախս:

Ռազմական տեխնիկան շատ առաջ է անցել: Այսպես որինակ 1918 թ. ՀԱՄՆ, Անգլիայի ու Ֆրանսիայի շարային ողանավերի թիվը հասնում էր 7 հազարի, 1932 թ.—22 հազարի, տանկերի թիվը՝ 5 հազարից 18 հազարի: Ռազմական արդյունաբերությունը միակ ճյուղն է, վոր գերաբարադրություն ձգնաժամ չգիտե, նրա «վաճառահանման շուկան» մշտապես ընդարձակվում է:

«Միջազգային դուրյունը համաշխարհային նոր պատերազմի նախորդակի բնույթ է կրում» (ԿիԳԿ XIII պլենումի թեզիսները: Ընդգծումն իմն է:—1. Ս.):

Իմպերիալիստական նոր պատերազմի այս պատրաստությունն ամենասուր կապի մեջ է ՍՍՀՄ դեմ նոր ինտերվենցիա նախապատրաստելու հետ, վորի նպատակը վոչ միայն այն է, վոր վոչնչացնի համաշխարհային պրոլետարական հեղափոխության հիմքը, այլև այն, վոր ՍՍՀՄ-ը դարձնի յերկրի հսկայական տերրի-

տորիան իր բնական անհամար հարստութիւններով ու բազմամիլիոն բնակչութեամբ դարձնի միջազգային ֆինանսական կապիտալի ամենասանձարձակ շահագործման առարկա: «Իմպերիալիստական հակասութիւններէ ստեղծուած իմպերիալիզմի բռնակում ուժեղացումն է այս հակասութիւններն ի հատիկ ԽՍՀՄ յուժնու ճեմնեցնելը» (ԿԻԳԿ XII պլենումի թեղիաները: Ընդգծումն իմն է: — Լ. Ս.): Մանջուրիայի և Հյուսիսային Չինաստանի դրախտը ճապոնիայի կողմից իմպերիալիստական նոր պատերազմի սկիզբն է և միաժամանակ ինտերվենցիայի անմիջական սպառնալիք ԽՍՀՄ դեմ:

Արդի աշխարհի մեր վերլուծած հիմնական հակասութիւնները (յերկու սիստեմի պայքարը, կապիտալիզմի ներման աճումը և դասակարգային հակասութիւններն սրումը, գաղութներում ծավալվող հեղափոխական շարժումը, հակասութիւններն սրումն իմպերիալիստներն միջև) իրենց ամբողջութեամբ նշանակում են, վոր կապիտալիզմն սպրում է իր սիստեմի ընդհանուր ճգնաժամը, վորից ուրիշ յեղք չկա, բացի ամբողջ աշխարհում պրոլետարիատի դիկտատուրայի հաղթելուց:

Ֆաշիզմ յեղ սոցիալ ժա-
սիզմ

Կապիտալիզմի մուտքն իր բարձրագույն
ու վերջին փուլը—իմպերիալիզմի փուլը—
առնասարակ նշանակում է քաղաքական

ուժեղացում: «Նոր, եկոնոմիկայի, մոնոպոլիստական կապիտալիզմի (իմպերիալիզմը մոնոպոլիստական կապիտալիզմ է) քաղաքական վերնաշնչքը դեմոկրատիայից շրջադարձն է դեպի քաղաքական ուժեղացում: Ազատ մրցութեանը համապատասխանում է դեմոկրատիան: Մոնոպոլիստային համապատասխանում է քաղաքական ուժեղացում» (Լենին, XIX հ., էջ 207):

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն իրենով հատկանշում է քաղաքական ուժեղացում: Յերբ տեղի յե ունենում կապիտալիզմի քայքայում և բանվոր դասակարգն ամբողջ ու ամբողջ յե ազատում դեմոկրատական ու պարլամենտական պատրանքներէից, ամբողջ քիչ հնարավոր է լինում բանվոր դասակարգը հնազանդ պահել այս պատրանքներով նրան խաբելու միջոցով: Առաջին պլանի վրա յեն մղվում բանվոր դասակարգի ուղղակի ու բացահայտ բռնի ճնշման մեթոդները: Այս մեթոդները կապիտալիզմը կիրառել է մշտապես, մանավանդ նրա՝ իմպերիալիստական կապիտալիզմ դառնալուց հետո, բայց նրանք չեն յեն գերակշռում այն միջոցներն սիստեմում, վորոնց սգնութեամբ բուրժուազիան իրականացնում էր իր դիկտատուրան: Գերակշռում էին

բուրժուազիայի դիկտատուրայի դեմոկրատական-պարլամենտական ձևերը: Իսկ կապիտալիզմի ինդհանուր ճգնաժամն սկսվելուց հետո այն շրջադարձը դեմոկրատիայից դեպի քաղաքական ուժեղացում, վոր սկսվել էր դեռևս նախապատերազմային իմպերիալիզմի մեջ, ամբարտվում է և իր արտահայտութիւնն ստանում ֆաշիզմի անունով:

Թէ «դեմոկրատիան» և թէ ֆաշիզմը բուրժուազիայի դիկտատուրայի ձևն են: Ուստի նրանց միջև վոչ մի սկզբունքային տարբերութիւն չկա: «Գեմոկրատիան» մի ձև է, վոր դիմակալութում է այս դիկտատուրան:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամն պայմաններում այս դեմոկրատիայից աճում է ֆաշիզմը, վոր բուրժուազիայի մերկի վոչնչով չթագնված տերրորիստական դիկտատուրան է: Ֆինանսական կապիտալը ֆաշիստական դիկտատուրա հաստատելու միջոցով փորձում է յեղք գտնել ճգնաժամից բանվոր դասակարգի ու աշխատավորութեան հաշվին: Ֆաշիզմը հարկավոր է բուրժուազիային իմպերիալիստական պատերազմ նախապատրաստելու և վարելու, ԽՍՀՄ դեմ ինտերվենցիա կատարելու և իր սեփական յերկիւրներում հարածուն հեղափոխութիւնը ճնշելու համար:

Ֆաշիզմը բուրժուազիայի թուլութեան ցուցանիշն է, այն բանի հատկանիշը, վոր խախտվել են կապիտալիստական հասարակարգի հատկանիշը, վոր խախտվել են հաղթանակը Գեմոնիայում կապիտալիզմի բուն հիմքերը: «Ֆաշիզմի հաղթանակը Գեմոնիայում պետք է դիտել վոչ միայն իբրև բանվոր դասակարգի թուլութեան նշան և հետևանք այն բանի, վոր բանվոր դասակարգին դավաճանել է սոցիալ-դեմոկրատիան, վորը ճանապարհ է հարթել ֆաշիզմի համար: Այն պետք է դիտել նմանապես և իբրև բուրժուազիայի թուլութեան նշան, իբրև նշան այն բանի, վոր բուրժուազիան այլև ուժ չունի իշխելու պարլամենտարիզմի ու բուրժուական դեմոկրատիայի հին մեթոդներով, վորի հետևանքով նաստիպված է ներքին քաղաքականութեան մեջ դիմելու կառավարման տերրորիստական մեթոդներին,— իբրև նշան այն բանի, վոր նա այլևս ուժ չունի արտաքին խաղաղ քաղաքականութեան հիման վրա դուրս գալու ներկա դրութիւնից, վորի հետևանքով նա ստիպված է դիմելու պատերազմի քաղաքականութեան» (Սթալին, Հաշվետու զեկուցում ՃՎՄ կուսհամագումարին ՀամԿ(բ)Կ կէ աշխատանքի մասին):

Վոր ֆաշիզմը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի արդյունքն է և բուրժուազիայի թուլութեան նշանը, սրանից, հասկանալի յե՝ չի հետևում, թէ ֆաշիստական դիկտատուրան հեղա-

փոխութեանը նախորդող անխուսափելի փուլ է, վոր ֆաշիստական զիկտատուերայի հաստատումը պրոլետարական հեղափոխութեան նախադրյալն է: Ըստ եյուլթեան այս հայացքներէ կողմնակից եր գերմանական կոմկուսակցութեան շարքերում յեղած Ռեմմել-Նեյ-մանի կապիտուլյանտական խմբակը, վորը գտնում եր, վոր «ինչքան վատ, այնքան լալ»: վորքան ավելի շուտ հաստատվի ֆաշիստական զիկտատուերան, այնքան շուտ ֆաշիզմը կմերկացնի իրեն մասսաների առջև և այնքան հեշտ կլինի հեղափոխութեան կատարելը:

Չախական այս թեորիաներն իրականում հանդիսանում են ոպորտունիստական պասսիվութեան բուրժուազիայի հարձակման առջև, սոցիալ-դեմոկրատական կապիտուլյանտութեան թագնված անդիկալ ֆրագնեբով:

Կապիտալիզմը պատմականորեն դատապարտված է կործանման: Իմպերիալիզմը ներող, մահացող կապիտալիզմն է: Բայց բուրժուազիան, իբրև վերավոր գաղան, իր բոլոր ուժերը հավաքում է իր թշնամուն ձնշելու համար: Ֆաշիզմը բուրժուազիայի մերկապարանոց հարձակումն է բանվոր դասակարգի վրա: Կապիտալիզմն ինքնին չի մահանում: Նրա «մահացումը» տեղի յե ունենում նրա հեղափոխական տապալման միջոցով: Թե վերջան յերկար պիտի տևի այս պրոցեսը և նա ինչ գոհեր պիտի նստի բանվոր դասակարգին,—այս հարցն ամենևին անտարբերութեան մատնելու հարց չէ: Պատմականորեն բուրժուազիան այլևս վոչ մի յեղ չունի, բայց ամեն մի տվյալ մոմենտին այս կամ այն յերկրում նա վորոշ պայմաններում կարող է ձգձգել իր գերիշխանութեան վախճանը:

Հեղափոխական պայքարի պրակտիկան է միայն լուծում այն հարցը, թե արդյոք բուրժուազիային կհաջողվի ժամանակավորապես յերկարացնել իր գերիշխանութեանը, վոր ներկայումս նշանակում է մեծագույն տանջանքներ պատճառել բանվոր դասակարգին, թե չի հաջողվի: Պրոլետարիատը բուրժուազիային կարող է հաղթել վոչ թե ոպորտունիստորեն սպասելով կապիտալիզմի ավտոմատ, «ինքնահոս» փլուզմանը, այլ միայն բուրժուազիայի ֆաշիստական հարձակմանը պատասխանելով հեղափոխական վճռական հակահարձակումով:

«Ֆաշիստական զիկտատուերան բուրժուազիայի զիկտատուերայի անխուսափելի փուլը չէ բոլոր յերկիրներում: Նրա խափանման հնարավորութեանը կախված է մարտնչող պրոլետարիատի ուժից, վորին ամենից ավելի ջլատում է սոցիալ-դեմոկրատիայի քայքայիչ ազդեցութեանը» (ԿԻԳԿ XIII պլենումի թեզիսները):

Այն փաստը, վոր բուրժուազիան պրոլետարական հեղափոխութեանից փրկվելու համար դիմում է ֆաշիզմին, չի նշանակում, թե նա դադարել է սոցիալ-դեմոկրատիայի իբրև իր սոցիալական գլխավոր հենարանի, կարիքն զգալուց:

Սոցիալ-դեմոկրատիան կապիտալիստական յերկիրների մեծ մասում դեռևս մասսայական ազդեցութեան է վայելում բանվոր դասակարգի մեջ, և այս հանգամանքը բուրժուազիայի համար առանձնապես արժեքավոր է դարձնում սոցիալ-դեմոկրատիայի աշխատանքը: Բանվոր բասակարգը միակ դասակարգն է, վորի շահերը լրիվ ու ամբողջութեամբ հակադիր են բուրժուազիայի շահերին, նա միակ ուժն է, վոր կարող է վերջ դնել բուրժուազիայի զիկտատուերային, կապիտալիզմին: Հենց այն պատճառով, վոր սոցիալ-դեմոկրատիան բուրժուազիայի գործակալութեանն է բանվոր դասակարգին, ներքուստ խախտում է բանվոր դասակարգի պայքարը, հենց այս պատճառով նա բուրժուազիայի սոցիալական գլխավոր հենարանն է, պրոլետարական հեղափոխութեան գլխավոր խոչընդոտը:

Կապիտալիզմի ընդհանուր ձգնաժամի պայմաններում, վորչափով վոր խախտվում է կապիտալիզմի կայունութեանն ու աճում է մասսաների կոմունիստական շարժումը, տեղի յե ունենում սոցիալ-դեմոկրատիայի և ռեֆորմիստական արհմիութեաններին ղեկավար կադրերի ու ասպարատի սերտաճում բուրժուական պետութեան ու ձեռնարկուական կազմակերպութեանների հետ, տեղի յե ունենում սոցիալ-դեմոկրատիայի ֆաշիզացման պրոցեսը:

Սոցիալ-ֆաշիստները բանվորներին հետ են պահում կապիտալի հարձակման դեմ և ֆաշիզմի դեմ պայքարելուց: Նրանք բուրժուազիայի ակտիվ ոգնականներն են ֆաշիստական զիկտատուերայի պատրաստման ու հաստատման գործում:

Բայց և ֆաշիստական զիկտատուերան հաստատելուց հետո յել սոցիալ-դեմոկրատիան չի դադարում բուրժուազիայի սոցիալական գլխավոր հենարանի ֆունկցիան կատարելուց: Դասակարգային հակասութեանների սրումը, կոմկուսակցութեաննեյի ու նրանց ազդեցութեան աճումը, սոցիալ-դեմոկրատիայի դերի մերկացումը և մասսաների հեռացումը նրանից, —այս բոլորը ստիպում են սոցիալ-ֆաշիզմին, պաշտպանելով ֆաշիստական զիկտատուերան:

տատուերան և սողալով նրա առջև, կարծեցյալ ոսկոզեցիա խաղալ նրա դեմ և փորձել այս ճանապարհով կանգնեցնելու մասսաների հեռացումը դեպի հեղափոխութեան բանակը:

«Սոցիալ-դեմոկրատիան նաև բացահայտ ֆաշիստական դիկտատուերայի յերկիրներում շարունակում է խաղաղ բուրժուազիայի սոցիալական գլխավոր հենարանի դերը, պայքարելով պրոլետարիատի հեղափոխական միասնութեան ու ԽՍՀՄ-ի դեմ, ոգնելով բուրժուազիային բանվոր դասակարգի պառակտումով յերկաբացնելու կապիտալիզմի զոյությունը» (ԿիԳԿ XIII պլենումի թեզիսները):

Չլախձախելով սոցիալ-դեմոկրատիային, չվերացնելով սոցիալ-ֆաշիզմի ազդեցութեանը մասսաների վրայից, չի կարելի հաղթել բուրժուազիային: Ահա թե ինչու կոմկուսակցութեանները, մասսաներին գլխավորելով ու կազմակերպելով բուրժուազիայի դիկտատուերայի բոլոր ձևերի ու տեսակների դեմ պայքարելիս, իրենց ռազմագիտական հիմնական հողովածն ուղղում են սոցիալ-դեմոկրատիայի՝ բուրժուազիայի սոցիալական այս գլխավոր հենարանի, պրոլետարիան հեղափոխության այս գլխավոր խոչընդոսի դեմ:

Կապիտալիզմի բնիկները ձգնաձգում են յերեկ օրը

Չարգացման անհամաչափութեան ուժեղացումը կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի շրջանում անհամաչափ բնույթ է տալիս համաշխարհային պրոլետարական հեղափոխութեանը: Կապիտալիզմի խորտակումը պրոլետարիատի անընդհատ, անվերջ հաղթանակները ու բուրժուազիայի պարտութեան պրոցես չէ: Կապիտալիզմի հեղափոխական ճգնաժամի ընդհանուր աճման ժամանակ տեղի ունեն պրոլետարիատի վոչ միայն հաղթանակներ, այլև մասնակի պարտություններ, վորոնք, սակայն, չեն փոփոխում շարժման ընդհանուր ուղղութեանը: Սա հաստատվում է կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի զարգացման ամբողջ ընթացքով, վորի մեջ պետք է տարբերել յերեք շրջան:

Ընդհանուր ճգնաժամի առաջին օրջանը բնորոշվում է պատերազմի ժամանակ սկսված կապիտալիզմի քայքայման պրոցեսի արագ աճումով և սրա հիման վրա ամբողջ աշխարհում Ռուսաստանի պրոլետարական հեղափոխութեան ազդեցութեամբ հեղափոխական ճգնաժամի արագ աճումով: Անմիջականորեն պատերազմին հաջորդող տարիներին Յեվրոպայում տարածվեց հեղափոխութեանները, ապստամբութեանները և քաղաքական ու տնտեսական մասսայական մարտերի ալիք: Մի շարք ապստամ-

բություններ և հեղափոխական շարժման հզոր ծաղկում է տեղի ունենում դադարեցնելով:

Հեղափոխական մեծագույն վերելքի այս շրջանում բուրժուազիային անփոխարինելի ծառայութեան ցույց տվեց հակահեղափոխական սոցիալ-դեմոկրատիան, վորը գլխավորեց շարժումը նրան գլխատելու համար: Կապիտալիստական յերկիրներում մասսայական հմուտ կոմունիստական կուսակցութեանները դեռևս չկային: Սա հանդիսացավ ամենագլխավոր պատճառը, վոր բուրժուազիան ժամանակավորապես հաղթեց հեղափոխական շարժմանը: Բայց բուրժուազիային չհաջողվեց ջախջախել պրոլետարիատի դիկտատուերայի առաջին յերկիրը: «Հեղափոխական հեղաշրջման առաջին փորձերը՝ աճած կապիտալիզմի սուր ճգնաժամի հիման վրա (1918—1921 թ. թ.) վերջացան պրոլետարիատի դիկտատուերայի հաղթութեամբ ու ամբարցումով ԽՍՀՄ-ում և պրոլետարիատի պարտութեամբ մի ամբողջ շարք ուրիշ յերկիրներում... Այս պարտութեանները հիման վրա, վորոնք հնարավորութեան ստեղծեցին ուժեղին շահագործման յենթարկելու պրոլետարիատի ու գաղութային ժողովուրդների մասսաներին, նրանց կյանքի մակարդակը խիստ իջեցման հիման վրա բուրժուազիան հասավ կապիտալիստական հարաբերութեանների մասնակի կայունացման» (Կոմիտեերի ծրագիրը):

Վրա հասավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի յերկրորդ շրջանը: Այս շրջանի ընթացքում ստեղծվում է կապիտալիզմի ինչպես ներքին, այնպես էլ արտաքին հարաբերութեանների ժամանակավոր հարաբերական կայունացում: Կապիտալիզմական յերկիրները ներսում սա իր արտահայտութեանն է գտնում նրանում, վոր «վերականգնվում է» պատերազմի ժամանակ քայքայված տնտեսութեանն և հաշիվ բանվոր դասակարգի շահագործումն ուժեղացնելու («ուսցիտնալացում»), նրանում, վոր նախընթաց շրջանի համեմատութեամբ վորոշ չափով ամրացվում է բուրժուազիայի քաղաքական գերիշխանութեանը: Իմպերիալիստական պետութեանները հարաբերութեանների մեջ մասնակի կայունացումն արտահայտվեց նրանով, վոր աստիճանաբար վերականգնվում են պատերազմից խախտված տնտեսական կապերը կապիտալիստական յերկիրների միջև և վոր իմպերիալիստներին հաջողվեց ժամանակավորապես համաձայնութեան գալու Գերմանիան (Գառուսի պլանը) և գաղութներն ընդհանուր կողոպուտի յենթարկելու վերաբերմամբ:

Սակայն այս կայունացումը չի նշանակում վերադարձ

գեպի նախապատերազմյան հարաբերութիւնները, նա հաստատուն ու տեւական չէր և չէր կարող լինել, ինչպէս պնդում էյին սոցիալ-դեմոկրատիան ու աջ ուղորտունիստները: Սա խախտու ու նեխած կայունացում էր,—նա առաջացավ կապիտալիստական սխառեմի ընդհանուր ճգնաժամի սլայմաններում և նրա հիման վրա: Կապիտալիզմի մասնակի կայունացման հետ միաժամանակ տեղի յեր ունենում խՍՀՄ համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան հիմքի՝ արագ աճումն ու հետագա ամրացումը: Բուն կապիտալիստական յերկիրներում վատթարանում էր բանվոր դասակարգի դրութիւնը և սրվում էյին դասակարգային հակասութիւնները: Այս շրջանում տեղի յեն ունենում կոմունիստական կուսակցութիւնների ուժերի հաւաքում և ներքին կոնսոլիդացիա Կոմինտերնի ղեկավարութեամբ: Դասակարգային պայքարը չի մարել, նա վերածվում է այնպիսի հզոր շարժումների, ինչպէս 1926 թ. ընդհանուր գործադուլը և հանքագործների գործադուլն Անգլիայում, ինչպէս Վիեննայի բանվորների զինված պայքարը 1927 թ. հուլիսին: Միաժամանակ ծավալվում է չինական մեծ հեղափոխութիւնը, ժողովրդական ապստամբութիւն և տեղի ունենում Ինդոնեզիայում, աճում և Հնդկաստանի հեղափոխական շարժումը:

Կայունացման ներքին հակասութիւնները հանգում են կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի վոչ թե թուլացման, այլ ուժեղացման: «Մասնակի կայունացումից աճում և կապիտալիզմի ճգնաժամի ուժեղացում, հարաճուն ճգնաժամը քայքայում է կայունացումը—այս է կապիտալիզմի զարգացման դիալեկտիկական պատմական տվյալ մոմենտին» (Ստալին, ԿԿ քաղ. հաշվետվութիւն, Համ Կ(բ)՝ XV համագումարի սղագր. հաշվետվութիւն էջ 40 1928 թ.):

Կապիտալիզմի ներքին հակասութիւնների աճումը կայունացման շրջանում հանգում է յետոգ Երզնային, վորն սկսվեց 1927/28 թ., յերբ կապիտալիստական արտադրութիւնը դուրս յեկավ նախապատերազմյան մակարդակի սահմաններից և սրա հետևանքով խիստ սրվեց աճած արտադրական հնարավորութիւնների ու շուկայի անձուկ սահմանների հակասութիւնը: Նախապատերազմյան մակարդակի սահմաններից դուրս գալու հետևանքով կապիտալիստական ամբողջ աշխարհն ընդհուպ մոտեցավ խոր և սուր ճգնաժամի: Միևնույն ժամանակ խՍՀՄ անցնում է սոցիալիստական վերակառուցման և ամբողջ ճակատով ծավալուն սոցիալիստական հարձակման:

Ճերբորդ շրջանը հեղափոխական նոր վերելքի, մասնակի կայունացման վախճանի և հեղափոխութիւնների ու պատերազմների նոր տուրի անցնելու շրջանն է, ամբողջ գծով կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի խիստ սրման շրջանը: Այս տեսակետից առանձին նշանակութիւն ունի արդի համաշխարհային տնտեսական ճգնաժամը:

Հետպատերազմյան կապիտալիզմը գեթ արտադրութեան ճգնաժամ ապրեց 1920—1921 թթ. բայց այս ճգնաժամն ընդգրկեց վոչ բոլոր յերկիրները: Գերմանիային նա չընդամենաց: Իսկ արդի ճգնաժամը, սկսելով 1929 թ. և անհամաչափ զարգանալով, ընդգրկեց բոլոր կապիտալիստական ու զարգութեային յերկիրները և արտադրութեան բոլոր ճյուղերը (բացի ուղիմական արդիւնաբերութիւնից): «Արդի ճգնաժամը հանդիսանում է հում աշխատանքի առաջին տնտեսական ճգնաժամը պատերազմից հետո» (Ստալին, Լենինիզմի հարցեր):

Իր խորութեամբ ու քայքայիչ ներգործութեամբ արդի տնտեսական ճգնաժամը շատ է գերազանցում կապիտալիզմի պատմութեան մեջ տեղի ունեցած բոլոր ճգնաժամերին: Սա յերևում է հետևյալ աղյուսակից, վոր ցույց է տալիս չուղունաձուլման կրճատման տոկոսը կապիտալիստական յերկիրներում և համաշխարհային առևտրի կրճատման տոկոսը նախընթաց ճգնաժամերում և արդի ճգնաժամի միջոցին:

Ճգնաժամի տարիներ	Կրճատման տոկոսը	
	Չուղունի համաշխարհային ձուլման	Համաշխարհային առևտրի
1873—1874	8,0	5,0
1883—1885	10,0	4,0
1890—1892	6,5	0,5
1900—1901	0,25	1,0
1907—1908	23,0	7,0
1920—1921	44,0	—
1929—193	66,0	65,0

Ինչպէս ցույց տրվեց նախընթաց դուրսներում, ճգնաժամը սրա հետ միաժամանակ առաջացրեց նախընթաց ճգնաժամների պատմութեան մեջ չտեսնված գործադրութեան աճում և աշխատավարի ձի անկում: Բուրժուական անտեսագիտները հաշվով ճգնաժամ-

պատճառած ընդհանուր կորուստները գերազանցում են 1914—1918 թթ. իմպերիալիստական պատերազմի պատճառած կորուստներին:

Ճգնաժամի այս չափերն ու խորութիւնը դրսևորում են նրա բնույթն ու առանձնահատկութիւններն իբրև գերաբարձրութեան նգնաժամի, վոր ծավալվում է կապիտալիստական սխտեմի բնդհանուր նգնաժամի հիման վրա: Այս դեպքում բնորոշ է այն փաստը, վոր ի տարբերութիւն նախապատերազմյան ճգնաժամերի, արդի ճգնաժամին չնախորդեց քիչ թե շատ նշանակելի վերելք: Որինակ՝ Գերմանիայում արդյունաբերական արտադրանքը 1928 թ. հանդեպ կազմում եր՝ 1927 թ.—100 0/0, 1928 թ. 100 և 1929 թ.—102 0/0: ՀԱՄՆ-ում ավտոմոբիլային արդյունաբերութիւն արտադրանքը 1919 թվից մինչև 1923 թ.—ավելացավ 16, 9/0, իսկ 1924 թ. մինչև 1929 թ. միայն 4,7 0/0-ով Անգլիայում ճգնաժամից առաջ առհասարակ արտադրանքի աճում տեղի չունեցավ:

Ճգնաժամին նախորդող շրջանում բոլոր յերկիրներում արտեն կար, ինչպես գիտենք, ձեռնարկութիւնների բավականաչափ թերաբեռնվածութիւն և մասսայական լճացած գործազրկութիւն:

Արդի ճգնաժամը բոլոր նախընթաց ճգնաժամերից տարբերվում է իր ճնշողահանութեամբ: Առաջ 1—2 տարվա ընթացքում արտադրութիւնն ու գների անկումը սովորաբար հասնում եր իր ստորին կետին, իսկ արդի ճգնաժամն արդեն տևում է հինգ տարի, նա ամենայնիպարտե ճգնաժամն է կապիտալիզմի պատմութիւն մեջ յեղած ճգնաժամերից:

Արդի այս անորինակ ծանր, յերկարատե բնույթի տնտեսական ճգնաժամի պատճառները, ինչպիսցուցց տվեց ընկ. Ստալինը, հետևյալն են.

Նախ՝ արդի արդյունաբերական ճգնաժամն ընդգրկել է առանց բացառութիւն բոլոր կապիտալիստական յերկիրները: Յեթե միքանի յերկիրներ բռնված չլինեյին ճգնաժամով, ապա մյուս յերկիրները վորտեղ կա ճգնաժամ, կարող եյին իրենց արդանքների մի մասը վաճառել առաջին յերկիրներում, նրանք կարող եյին մանրել ի հաշիվ այդ յերկիրների: Բայց քանի վոր արդի տնտեսական ճգնաժամով բռնված են բոլոր կապիտալիստական յերկիրները, ապա դժվարացել է վորոշ յերկիրների մանրելումն ի հաշիվ մյուսների:

Յերկրորդ՝ արդյունաբերական ճգնաժամի միահյուսումն ազրա-

բայինի հետ, վորն ընդգրկել է բոլոր ազրաբային ու կիսաազրաբային յերկիրները: Արդյունաբերական ճգնաժամի հետևանքով նվազեց արդյունաբերութիւնն ունեցած գյուղատնտեսական հումքի պահանջարկը: Գործազրկութիւնն ու աշխատավարձի կրճատումը նվազեցնում են արդյունաբերական բանվորների պահանջարկը գյուղատնտեսական սննդամթերքների վերաբերմամբ: Մյուս կողմից՝ գյուղատնտեսութիւնն ճգնաժամը հանդում է այն բանին, վոր գյուղատնտեսութիւնը քիչ պահանջարկ է ունենում արդյունաբերական մթերքների նկատմամբ՝ արդյունաբերութիւն միջոցների ու սպառման արդյունաբերական առարկաների նկատմամբ: Այսպիսով, արդյունաբերական և ազրաբային ճգնաժամերի միահյուսումը առանձին ծանր ու տեական բնույթ տվեց արդի տնտեսական ճգնաժամին նախընթաց ճգնաժամերի համեմատութիւն:

Յերկրորդ՝ ազրաբային ճգնաժամն ընդգրկեց վոր միայն բոլոր յերկիրները, այլ գյուղատնտեսական արտադրութիւնն բոլոր ճյուղերը,—վոր միայն յերկարգործութիւնը, այլև անասնապահութիւնը: Կապիտալիստական աշխարհում գյուղատնտեսութիւնը սաստիկ անկում ունեցավ: Գյուղատնտեսութիւն մեջ խիստ կրճատվեց մեքենաների ու արհեստական սարարտանյութերի կրճատումը: Քանի վոր գյուղատնտեսութիւնն համար արտադրութիւն միջոցների արտադրութիւնը կազմում է արդյունաբերական արտադրանքի նշանակելի բաժինը, ապա գյուղատնտեսութիւնն ղեկըրողացիւն ել ավելի ձգձգեց արդյունաբերական ճգնաժամը:

Չորրորդ՝ մոնոպոլիստական կազմակերպութիւնների ձգգտումը պահպանելու ապրանքների բարձր գները: Սովորաբար, գների անկումը, հանդիսանալով ճգնաժամի արտահայտութիւն, միևնույն ժամանակ նպաստում է նրա հաղթահարմանը, գների անկման հետևանքով ներծծվում են ապրանքային պաշարները և մեղմանում է գերարտադրութիւնը: Վորքան ավելի դանդաղ են ընկնում գները, այնքան ավելի յե ձգձգվում ճգնաժամը: Հինց այս բանն է տեղի ունենում արդի ճգնաժամի հետ: Որինակ Գերմանիայում ճգնաժամի շրջանում մոնոպոլիստների արտադրած ապրանքների գներն ընկան միայն 20 0/0-ով, իսկ մոնոպոլիստական միավորութիւնների մեջ չմտնող ձեռնարկութիւնների արտադրած ապրանքների գները՝ 50 0/0-ով: Քանի վոր արդյունաբերական ապրանքների ճնշող քանակն արտադրում են մոնոպոլիստները, ապա մոնոպոլ գների անկման ուշացումն առանձնապես սաստիկ ձգձգում է ճգնաժամը:

Հինգերորդ՝ արդի տնտեսական ճգնաժամը տեղի յե ունե-

նում կապիտալիստական սխտեմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում: Սա այն զլխավոր ֆակտորն է, վոր ճգնաժամին տալիս է նախկին ճգնաժամերի ժամանակ չտեսնված սրությունն և խորտակիչ ուժ: «Արդյունաբերական ճգնաժամը տեղի ունեցավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի միջոցին, յերբ կապիտալիզմը վոչ հիմնական պետություններում, վոչ էլ գաղութներում ու կախյալ յերկիրներում այլևս չունի և չի կարող ունենալ այն ուժն ու կայունությունը, վոր նա ուներ մինչև պատերազմը և հոկտեմբերյան հեղափոխությունը, յերբ կապիտալիստական յերկիրների արդյունաբերությունն իմպերիալիստական պատերազմից ժառանգություն ստացավ ձեռնարկությունների խորնիհական թերաբեռնվածություն և գործազուրկների միլիոնավոր բանակներ, վորոնցից նա այլևս ուժ չունի ազատվելու» (Ստալին, հաշվետու ղեկուցում XVII կուսհամագումարին Համ Կ(բ) ԿԿ աշխատանքի մասին):

Արդի համաշխարհային տնտեսական ճգնաժամը մի շարք կապիտալիստական յերկիրներում ուղղեկցվում է բանկային խոր վրուզումներով և փողի շրջանառության խանգարումով: Փաստորեն դադարեցված է պատերազմական պարաքերի վճարումը, աճում են պետական բյուջեների դեֆիցիտները և տեղի յե ունենում ֆինանսական տեսակետից այնպիսի հզոր յերկիրներ՝ վալյուտայի կուրսի անկում, ինչպես Անգլիան և ՀԱՄՆ, վորոնք անցել են ինֆլյացիայի՝ ուղին:

Նախընթաց ճգնաժամերին գները կտրուկ անկումից և արտադրություն կրճատումից հետո վրա յեր հասնում դեպրեսիան (տես վերև, էջ 79), վորին հետևում էր վերելք, և ճգնաժամը 1—2 տարում վերջանում էր: Իսկ արդի ճգնաժամի շրջանում անկման ամենաստորին կետին հասան ճգնաժամի միայն չորրորդ տարվա վերջին՝ 1932 թ.: Այսպես ՀԱՄՆ-ում արդյունաբերական արտադրանքը 1929 թ. հանդեպ կաղմում էր՝ 1932 թ. 53,8, իսկ 1933 թ.—64,90%, Անգլիայում—83,8 և 86,10%, Գերմանիայում—59,8 և 66,80%, Ֆրանսիայում—69,1 և 77,40%:

Կապիտալիստական կարելիորագույն յերկիրներում 1933 թ. ընթացքում արտադրությունն ավելացել է: Բուրժուազիան կարողացել է սրան հասնել ի հաշիվ բանվորների «աստիկ շահագործման», ի հաշիվ իրենց յերկիրների ու գաղութների գյուղատնտեսության: Բայց արտադրության այս աճումը չի նշանակում, թե

¹ Ինֆլյացիայի մասին տես I պր. III գ. էջ 86.

ճգնաժամը վերջացել և սկսվել է վերելքը: Կապիտալիստական յերկիրներում վոչ մի իսկական վերելք չի կարող լինել այն պատճառով, վոր այս տնտեսական ճգնաժամը տեղի յե ունենում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, վորը զնալ խորանում է: Սովորաբար ճգնաժամից հետո վերելք սկսվում է հիմնական կապիտալի նորոգման հետևանքով: Բայց ներկայումս կապիտալիստական յերկիրներում ձեռնարկություններն այնչափ վիթխարի թերաբեռնում ունեն, վոր խոսք անգամ չի կարող լինել հիմնական կապիտալը քիչ թե շատ լուրջ նորոգելու մասին:

«Այնքան է, վոր մենք գործ ունենք արդյունաբերության ամենամեծ անկման կետից, արդյունաբերական ճգնաժամի ամենամեծ խորությունից դեպի դեպրեսիա անցնելու հետ, բայց վոր թե սովորական, այլ առանձին տեսակի դեպրեսիա, վորը չի տանում դեպի արդյունաբերության նոր վերելք ու ծաղկում, բայց և չի վերադարձնում նրան դեպի ամենամեծ անկման կետը» (Ստալին, Հաշվետու ղեկուցում XVII կուսհամագումարին Համ Կ(բ) ԿԿ աշխատանքի մասին):

«Այնտեղ՝ կապիտալիստական յերկիրներում դեռևս փոթորկում է տնտեսական ճգնաժամը» (Յուլյան Երզնկա):

Արդի տնտեսական ճգնաժամը, վոր տեղի յե ունենում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի պայմաններում, խորացնում ու սրում է վերջինս:

Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի այս սրումն իր արտահայտությունը գտավ նրանում, վոր արդեն 1932 թ. վրա հասավ կապիտալիզմի հարաբերական կայունացման վախճանը և վոր կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը մոտենում է իր դարգացման նոր աստիճանին, հեղափոխությունների ու պատերազմների նոր տուրին:

Այն ժամանակ, յերբ կապիտալիստական ամբողջ աշխարհը դանվում է ճգնաժամի ճիրանների մեջ, ԽՍՀՄ համաշխարհային

—պատմական նշանակություն ունեցող և ձեռք բերելու արտադրության ամեն բուռն տեմպ և մասսաների նյութական ու կուլտուրական մակարդակի վերելք, առաջին հնդամյակի իրագործում և անցում դեպի անդասակարգ հասարակության կառուցումը: «Կապիտալիստական յերկիրների եկոնոմիկայի փլման պայմաններում, այս յերկիրներում գործազրկության, աղքատության, սովի անորինակ աճման պայմաններում հնդամյակի իրա-

գործումը ԽՍՀՄ-ում վոչ թե հինգ, այլ չորս տարում (ավելի հինգ՝ չորս տարում և յերեք ամսում) արգի պատմութեան մեջ ամենից ավելի աչքի ընկնող փաստ եւ (Կենտկոմի 1933 թվի հունվարյան պլենումի բանաձևը): Արդյունաբերական արտադրանքի ծավալը (տոկոսներով 1929 թ. հանդեպ) 1933 թ. կազմում եր ԽՍՀՄ-ում 201,6 ՀԱՄՆ-ում—64,9 Անգլիայում—86,1, Գերմանիայում—66,8, Ֆրանսիայում—77,4: Արտադրութեան մի շարք կարևորագույն ճյուղերում ԽՍՀՄ-ում առաջին հնգամյակի շրջանում վճռական թոիչք կատարեց, հասնելով և առաջ անցնելով կապիտալիստական յերկիրներին: Իսկ յերկրորդ հնգամյակում ԽՍՀՄ վերածվում է մի յերկրի, վորը տեխնիկատնտեսական տեսակետից անկախ է մյուս յերկիրներից, միջպետութուն, վոր տեխնիկական տեսակետից ամենաառաջավորն է Յեվրոպայում:

Սոցիալիզմի այս հաջողութունները, վոր նշանակում են մեր անկախութեան աճում կապիտալիստական աշխարհից, մեր պաշտպանունակութեան աճում և ամրացում, ԽՍՀՄ հեղափոխականացող ազդեցութեան աճում ամբողջ աշխարհի շահագործվող մասսաների վրա և ԽՍՀՄ նշանակութեան աճում իբրև համաշխարհային պրոլետարական հեղափոխութեան հենակետի, հսկայական տեղափոխում են սեղծում սոցիալիստական ու կապիտալիստական աշխարհի հարաբերակցության մեջ և սրում կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը:

Մի կողմից ճգնաժամի ազդեցութեան տակ, մյուս կողմից՝ սոցիալիզմի աճող հաջողութունների—բոլոր իմպերիալիստական յերկիրներում ու գաղութներում տեղի յե ունենում հեղափոխական վերելքի արագ աճում: Վերջին տարիների ընթացքում տեղի յեն ունեցել մի շարք ամենախոշոր մասսայական «գործադուներ, վորպիսիները կապիտալիստական Յեվրոպան չի տեսել 1918—1923 թ. թ. հեղափոխութունների առաջին ավիջից հետո: Ըստ վորում գործադուներն ավելի ու ավելի ցայտուն արտահայտված քաղաքական բնույթ են ընդունում: Հաճախանում են բանվորների մասսայական ընդհարումները վոստիկանութեան ու ֆաշիստների հետ, հեղափոխական շարժումներ են բռնկվում բանակում: Ծավալվում են գյուղացիական մասսաների յերլույթները:

Հակասութունների խիստ սրում տեղի ունեցավ իմպերիալիստների միջև, վորոնք միանգամայն բացահայտ ու տնդորեն

պատրաստվում են նոր պատերազմի: Ուժգնորեն հեղափոխական պատերազմ է պատրաստվում ԽՍՀՄ դեմ:

Այս բոլոր փաստերի հիման վրա Կոմունիստական ինտերնացիոնալն արդեն 1932 թ. կարող եր հաստատել, վոր վերջացել է կապիտալիզմի հարաբերական կայունացումը և վոր տեղի յե ունենում անցում դեպի դասակարգերի միջև և պետութունների միջև տեղի ունեցող խոշոր բաղխումների նոր տուր, դեպի հեղափոխութունների ու պատերազմների նոր տուր (ԿԻԳԿ XII պլենումի թեղիսները):

1933 թիվը հանդիսացավ կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամի հետագա սրման տարի, համաշխարհային հեղափոխական ճգնաժամի հետագա հասունացման տարի: «Ինչպես կապիտալիստական յերկիրների ներքին դասակարգային հակասութունների, այնպես եւ միջազգային հակամարտութունների ծայրահեղ լարվածութունը վկայում է հեղափոխական ճգնաժամի որչեպտիվ նախադրյալների այնպիսի հասունութեան մասին, վոր ներկայումս աշխարհն արդեն բնդհուպ մոտենում է հեղափոխութունների ու պատերազմների նոր տուրի» (ԿԻԳԿ XIII պլենումի թեղիսները):

Ավստրիական պրոլետարիատի զինված պայքարը և Ֆրանսիական ընդհանուր գործադուրը 1934 թ. փետրվարին լրիվ ու ամբողջութեամբ հաստատեցին Կոմունիստական ինտերնացիոնալի այս վերլուծութունը: Այս անցքերը վկայում են լայն մասսաների արագ շրջադարձը դեպի կապիտալիստական սխտեմի դեմ պայքարելը պրոլետարիատի դիկտատուրայի համար: Ավստրիական պրոլետարիատի հերոսական պայքարը փայտուն կերպով հաստատեց ընկ. Ստալինի լայն խոսքերը, թե «գրոհի գաղափարը հասունանում է մասսաների գիտակցութեան մեջ», նա վառ ցուցանիչ է հանդիսանում այն բանի, վոր բուրժուազիայի ու պրոլետարիատի միջև քաղաքացիական պատերազմը դրվում է սրակարգի մեջ, նա հանդիսանում է հեղափոխութունների ու պատերազմների նոր տուրի ավանգարդային մարտերի սկիզբը:

Հեղափոխութունների ու պատերազմների նոր տուրը նշանակելու յե համաշխարհային պրոլետարիատի հեղափոխության գորգացման հոր ասիման: Իր թափով ու խորութեամբ նա շատ հեռու կթողնի հեղափոխութունների ու պատերազմների առաջին տուրը: 1918-1923 թ. հեղափոխական մարտերը տեղի եյին ունենում այնպիսի պայմաններում, յերբ դեռևս չկային մասսայական

ու փորձված կոմունիստական կուսակցութիւններ, նրանք մեծա-
դույն մասամբ ընթանում եյին սարերայնորեն: Կապիտալիզմը
«խաղաղ» զարգացման յերկարատև շրջանից հետո սա կապիտա-
լիստական յերկիրներէ բանվոր դասակարգի մարտական առաջին
միջոցութիւնն էր:

Առաջիկա հեղափոխական վճռական մարտերը տեղի յեն
ունենալու այնպիսի պայմաններում, յերբ խիստ աճած կլինի
Սորճորդային միութեան տնտեսական, քաղաքական ու ռազմական
հզորութիւնը, յերբ մասսաները հարուստ փորձ կունենան հեղա-
փոխութիւններէ առաջին տուրքի մարտերից, յերբ մասսաներէ
գլուխ կանգնած կլինեն համախմբված և բոլորակցայն փորձով
հարստացած կոմկուսակցութիւններ, վորոնք արդեն այժմ կոմիւն-
տերնի ղեկավարութեամբ ամենորոյա հարաճուն պայքար մղելով
ընդդէմ կապիտալի հարձակման ընդդէմ Փաշչիմի, ընդդէմ պա-
տերազմի ու ինտերվենցիայի բանվոր դասակարգի մասսաներին
պատրաստում, կազմակերպում, համախմբում ու կոփում են վճռա-
կան մարտեր մղելու իշխանութեան համար, պրոլետարիատի ղեկ-
տատուրայի համար:

Ամբողջ աշխարհի հեղափոխական պրոլետարիատը կոմիւն-
տերնի ղեկավարութեամբ, համաշխարհային պրոլետարական հե-
ղափոխութեան հանձարեղ ու մեծագույն առաջնորդ ընկ. Ստալինի
գլխավորութեամբ պատրաստվում է հաղթանակով դուրս գալու
հեղափոխութիւններէ ու պատերազմների նոր տուրից:

«Այսպիսով, պատերազմի սեղծած համաշխարհային քայքայ-
ման հոյք վրա անում է համաշխարհային նեղափոխական ճգնա-
նստման վարն ինչպիսի սեւեւան ու ծանր պերիպերիաներ ել անցնելու
լիքի, չի կարող այլ կերպ վերջանալ, քան պրոլետարական հեղափո-
խութեամբ ու նրա ճաղրանակով» (Լենին, XIX հ. էջ 75,
Ընդգծումն իմն է:—Ղ. Ս.):

ԲՈՎԱՆՒԹԵՎՈՒԹՅՈՒՆ

Աւթերորդ գլուխ:	Գյուղատնտեսութիւնը կապիտալիզմի ժամանակ	3
	1. Հողի մասնավոր սեփականութիւնը վորպէս դյու- ղատնտեսութեան զարգացումն արգելակող գործոն	3
	2. Սորճոր և ման բարատգրութիւնը գյուղատնտեսու- թեան մեջ	9
	3. Գյուղացիութեան ղահագործումը կապիտալիզմի ժամանակ	14
Ինքերորդ գլուխ:	Հասարակական կապիտալի վերաբրտագրութիւ- նը և շրջանառութիւն ամբողջութեամբ վերցրած	23
	1. Սննդի թերութիւն ճննադատութիւնը	25
	2. Հասարակական կապիտալի ամբողջութեամբ վերց- րած վերաբրտագրութեան պայմանները	28
	3. Կապիտալիստական վերաբրտագրութեան հակասու- թիւնները	48
Տասերորդ գլուխ:	Ճգնաժամերը	61
	1. Հասարակական արտագրութեան և կապիտալիս- տական յուրացման հակասութիւնը ճգնաժամերի պատճառն է	61
	2. Ճգնաժամի ընթացքը	73
	3. Ճգնաժամերի նշանակութիւնը	84
	4. Ճգնաժամերի բուրժուական և սոցիալ-դեմոկրա- տական թերութիւնը	87
	5. Ճգնաժամերի անկարելիութիւնը ԽՍՀՄ-ում	94
Տասմեկերորդ գլուխ:	Ինպերիալիզմ	98
	1. Համակենտրոնացում և մոնոպոլիա	101
	2. Բանկերի նոր տերը: Ֆինանսական կապիտալ	108
	3. Կապիտալի արտահանումը	115
	4. Պայքար կապիտալիստների միութիւններէ միջև աշխարհի բաժանման համար	119
	5. Աշխարհի տերիտորիալ բաժանումն ինպերիալիս- տական պետութիւնների միջև և պայքարը նրա վերաբաժանման համար	121

6. Իմպերիալիզմը կապիտալիզմի առաջին ու վերջին փուլն է	126
7. Դասակարգային հակասութիւններն սրունն իմպերիալիզմի ժամանակ	132
8. Իմպերիալիզմի սոցիալ-դեմոկրատական «թեորիաները»	139
9. Անհամաչափ դարդացման որինքը և պրոլետարական հեղափոխութիւնը	151
10. Կապիտալիզմի ընդհանուր ճգնաժամը	157





Թարգմ. Հ. Թուրջյան լեզվ. Մ. Չախուրյան խմբագրությանը՝ Ա. Հառուբյուրյան լեզվ.
Ս. Խանինյան, Տեխ. խմբագիր՝ Տ. Խաչվանյան, Սրբագրիչ՝ Մ. Սահակյան:
Ետեղի սրվեց 29 հոկտեմբերի 1934 թ.: Տպել բուլլատից 5 դեկտեմբերի 1934 թ.:
Հրատ. № 251, հնդեխ $\frac{\text{П-50}}{\text{У}}$, Գլավիտի լիազար № 7886 (բ), Տիրամ 10,000:
Պատկեր № 340, Թղթի չափար 8x10, 11 սպ. րեթ (1 սպ. ր. 38,600 սպ. հետև):
Կուսակցության տպարան, Յերեվան Ալլահվերդյան փ., № 27:

Перев. А. Туршян и М. Закарян. редактор С. Арутюнян и А. Шагинян.
Тех. Редактор. Т. Хачванкян. Корректор М. Саакян, Сдано в 29 октября
1934 г. Подписано к печати 5 декабря 1934 г. Армпартиздат № 251

Индекс $\frac{\text{П-50}}{\text{У}}$.

Типография Партиздат ЦК КП (б) А, Эривань, ул. Аллавердян № 27.

« Ազգային գրադարան



NL0202533

